

The image shows the front cover of an antique book. The spine, on the left, is bound in a dark red material. The main cover is decorated with a traditional marbled paper pattern, featuring large, irregular, dark green or blue-green spots set against a tan or light brown background, with thin blue veins. A small, rectangular, cream-colored paper label is affixed to the bottom left corner of the cover. The label contains the handwritten numbers '34' and '- 37' on two separate lines.

34
- 37

Հ Ա Ւ Ա Տ Ո Յ Գ Ի Մ Ի Ն Ե Ն

Բ Բ Ո Թ Է Ս Դ Ի Ա Ն Դ

Ը Ս ՈՒ Ե Ճ Ի Բ Բ Ի Ս Տ Ո Ն Ե Ն Ի Յ Գ ՈՐ Ծ Ե Ճ Ե Ճ

Հ Ա Ի Ա Տ Ո Յ Գ Ի Ա Ի Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Յ

Ե Ի Ք Բ Ի Ս Տ Ո Ն Է Ա Կ Ա Ն Ա Յ

Ո Ր Կ Ը Գ Ե Բ Ո Ւ Ն Ա Կ Է

ա . Համառօտ Վրիստոնէական Մարտինոս Լուսերի :

բ . Գաւանութիւն Հաւատոյ՝ Գաղղիայի և Հել-
լեոփայի բարեկարգեալ եկեղեցիներուն :

գ . Երեսուն և ինը յօդուածները Ենդղիացւոց և
Իռլանտացւոց (Նպխակոպոսական) եկեղեցիներուն :

դ . Համառօտ Վրիստոնէական Ալեթմինսդրի (Ն-
րիցական) աստուածաբաններու ժողովին :



Ի Զ Մ Ի Ի Ռ Ե Ի Ա

Ի Տ Գ Ս Բ Ս Ն Ի Կ Ո Ւ Լ Ի Ե Լ Մ Ո Ս Կ Բ Ի Յ Ֆ Ի Թ Ի

1846

2734-cc h

(5066-cc h)



1356-72

Յ Ա Ռ Ա Ղ Ա Բ Ա Ն

Որչափ որ շատերուն մտքին մէջ հետաքրքրութիւն կայ գիտնալու՝ թէ Ռոտթէսդանդ ըսուած քրիստոնէական եկեղեցիները ի՞նչ վարդապետութիւններ ունին, նոյնչափ ալ դժուարութիւններ եղած են ան հետաքրքրական փափագները լեցունելու՝ ուղիղ տեղեկութիւններ տալով : Այսն զի մինչև հիմա շատ կեղծուպատիր պատմութիւններ տարածուած են ասդին անդին, անանկ որ այսպիսի պատմութեանց կարդացողները չեն գիտեր թէ ո՞ւր նայելու են որ ուղիղ գտնեն և ասանկ սխալները հերքեն : Օրինակի համար՝ 1845ին, քաղաքիս մէջ մէկ գիրք մը հրատարակուեցաւ. «Յայտարար Ուղղութեան» ըսուած, որուն հեղինակը յանդգնաբար ձեռք զարկած է աշխարհիս վրայ եղած 70 միլիոն Ռոտթէսդանդ կուսուած քրիստոնէից վրայօք անհիմն տեղեկութիւններ տալու հասարակութեանը. ինչպէս որ հոս տեղ նշանակած ենք մէկ քանին, թէ՛

“Իր ռիթմիկ անդները առաքինութիւնը հարկաւոր չեն սեպեր Վրիստոնեային” • թէ անոնք “Օրինաւոր կը համարին շնութիւն և մարդասպանութիւն ընելը” • թէ անոնք “Հրաման կուտան ուրիշ կնիկ մը առնելու, գեւառջի կնիկը չմտած” • թէ “Օրինաւոր կը սեպեն ուրիշին ստացուածքը գողնալը” • և թէ “Վրաւացի կը համարին թագաւորին գէմ ապստամբելը և անոր գէմ պատերազմիլը” :

Երդ՝ աս գիրքը հրատարակուած է հրամանաւ եկեղեցական բարձրագոյն պաշտօնեայի մը, որուն անունը գրքին գրանք վրայ նշանակուած է • և կարելի է որ զանիկայ կարգացողներուն շատերը հաւատան, թէ որ բնատեղեկութիւն մը չունին ճշմարիտ պատմութեանը : Եւստու ամենայնիւ ան գրքին պարունակած տեղեկութիւնները խիստ ամօթալից զրպարտութիւններ և անհնարին խաբէութիւններ են :

Եսանկ են նաև Աոստանդնուպօլիս տպուած “Վանլը Լըմէնի” անունով գրքին պարունակածները :

Երդարև չիրնար ըլլալ աւելի իրաւացի կանոն մը կամ լաւագոյն եղանակ մը որ և իցէ եկեղեցիի մը վարդապետութիւնները ստուգելու և դատելու համար քան թէ ան եկեղեցիին հրատարակած հաւատոյ կանոնները կամ դաւանութիւնները քննելով, և զանոնք բաղդատելով Եստուածային Խօսքին հետ, որ է մի միայն անտխալ առաջնորդ հաւատքի վերաբերեալ նիւթերու մէջ • Ուստի հետեւեալ հաւաքումը դաւանութեանց և

քրիստոնէականաց՝ կրօնակալացունենք մեր ընթերցող-
ներուն, որպէս զի անոնք գիւրութիւն մը ունենան յի-
շեալ կերպովը քննութիւն և դատողութիւն ընելը և՛ Բը-
քոթէադանդներու վարդապետութիւններուն վրայօք :
Ես բանիս համար կրնայինք աւելի երկար հատուածներ
ընտրել ան եկեղեցիներուն վրայով, որոնց վարդապե-
տութիւնները հոս տեղ հրատարակուած են . բայց ասի-
կայ պատճառ պիտի ըլլար գիրքին աւելի մեծութեանը,
ծախքին շատութեանը և կարգացուելուն քիչութեա-
նը, որ գուցէ աւելի օգուտ մը չընէր : Աւտի աս համա-
ռօտ վկայութիւնները բաւական են ցուցնելու՝ թէ
հարկաւոր բաներու մէջ ինչպէս համաձայն են ան ամէն
եկեղեցիները, որոնք կրնդունին թէ Եւստուածաշունչն է
մի միայն ամենաբաւական կանոն հաւատոյ և վարուց :

Ե . Ես հատուածներուն առաջինը՝ և ամենէն կարճը՝
Սուրբնոս Լուտերի համառօտ քրիստոնէականն է,
որ նախ առաջին հրատարակուած է, 1529ին : Են նոյն
տարուան սկիզբները Լուտեր հրատարակելը էր իր ընդ-
արձակ քրիստոնէականը, ուրկից համառօտուած է աս
մէշտգածը : Յիշեալ թուականէն իրեր տարի առաջ՝
Լուտեր քրիստոնէականի մը հարկաւորութեանը հա-
մար աս ազցու խօսքը ըսել էր . «Քրիստոս երբոր ու-
ղեց մարդիկ շահիլ, հարկ եղաւ որ ինքը մարդ ըլլայ .
նմանապէս մենք ալ թէ որ կուզենք տղայքը շահիլ,
պէտք է որ անոնց հետ տղայ ըլլանք » : Ես գործիս մէջ
պիտի տեսնուի որ հին դրութենէն քանի մը բաներ պա-

հուած են , որոնք շատ հաւանական է որ փոխուէին թէ որ անիկայ Բարեկարգութեան սկզբնաւորութենէն քիչ մը ետքերը յօրինուած ըլլար . ասոնք են՝ պապական բաժանումը Տասնաբանեայ Պատուիրանքին (տես երես 4) , երեսը խաչակնքելը և խոստովանանքը : Եստու ամենայնիւ Լուտեր յայտնապէս կը քարոզէր թէ քահանային արձակումը ուրիշ բան չէ , բայց միայն թողութեան ծանուցում մը զգալոցդին : Երդէն 1520ին՝ Լուտեր ըսած էր ան խոստովանահայրերուն համար , որոնք մարդոց խղճմտանքին վրայ տիրել կուզէին . «Թաղտուէք ատոնց արձակումը . զիտցէք որ Եստուած թողութիւն կուտայ ձեզի և առանց երկիւղի Հաղորդութեան սեղանին մօտեցէք» :

Ես քրիստոնէականը՝ Լուտերի գլխաւոր գործը կը համարին ոմանք , և անտարակոյս մենք ալ այնպէս համարելու ենք , թէ որ նայինք անոր օգտակարութեանը որ ունի քրիստոնէական զիտութիւնը տարածուելուն : Եսոր մէկ մեծ յարգն ալ իր պարզութիւնն է . զուցէ աս ըլլայ պատճառը որ իրեք դար անցնելէն ետե՛ տակաւին այսքան ընդունելի է ան , քանզի բովանդակ Գերմանիոյ մէջ անիկայ է Բրոթէսդանդ դպրատանց և ընտանեաց մէջ գործածուած քրիստոնէական վարժութեան առաջին դիրքը :

Բ . Երկրորդն է Վաղախայի Բարեկարգեալ եկեղեցիներուն հաւատոյ դաւանութիւնը , որուն ինտոր հաստատուելուն պատմութիւն , աս հետեւեալն է : Յամին

է 558ին՝ Հենրիկոս Բ Վաղարշյ թագաւորին ժամանա-
 կը , Վարիզի եկեղեցիին մէկ պաշտօնատարը՝ Ընտոն տը
 Շանտիէօ անուն , իր եկեղեցիէն խրկուեցաւ Վուաթիէ
 քաղաքին եկեղեցիին հետ խօսելու մէկ գործի մը համար ,
 որն որ երկու եկեղեցիին ալ պիտանի բան մըն էր : Ըն-
 տոն երբոր Վուաթիէ հասաւ , ան քաղաքին հաւատա-
 ցեալները կը պատրաստուէին Տէրունական Ընթրիքը
 կատարելու , և շրջակայ տեղերէն բազմաթիւ եկեղեցա-
 կաններ եկեր էին ան պաշտօնին բաժանորդ ըլլալու :
 Ըստնք այսպէս մէկ տեղ հաւաքուած ըլլալով մէջեր-
 նին խօսք բացուեցաւ իրենց եկեղեցիներուն վարդա-
 պետութեանը և կարգադրութեանը վրայ , և շուտով
 միաբանեցան որ մէկ դաւանութիւն մը հրատարակեն ի-
 րենց հաւատքին ու եկեղեցիին կառավարութեանը վը-
 ըրայով : Իր որովհետև Ընտոն տը Շանտիէօ ալ անոնց
 մէջն էր , իրեն յանձնեցին որ ետ դառնալուն աս բանիս
 համար խօսք ընէ Վարիզի եկեղեցիին հետ . որ ան ալ
 ուրիշ եկեղեցիներուն հետ խորհրդակցելէն ետքը՝ Վա-
 րիզի մէջ գումարեցաւ իրենց առաջին ազգային Անհո-
 դոր : Վարիզը բացուեցաւ 25 մայիսի , 1558 : Թէոդո-
 րոս Պէզա կը ծանուցանէ թէ մինչև ան ատենը որչափ ե-
 կեղեցիներ որ հաստատուէր էին Վաղարշայի մէջ , անոնց
 ամենէն ալ երեսփոխաններ եկեր էին հոն . և անշուշտ
 անոնց թիւը շատ մեծ ըլլալու էր , քանզի գիտենք որ՝
 հետեւալ տարին վաթսուներեք չափ միայն Վարիզանս ը-
 սուած նահանգին մէջ կային :

Մնացած ժողովն էր որ հաստատեց և ընդունեց աս Հաւատոյ 'Կաւանութիւնը' որն որ մենք հիմա թարգմանելով հրատարակեցինք . կերևայ թէ անոնք աս դաւանութիւնը գրեցին իւրաքանչիւր եկեղեցիներու ընդունած խել մը մասնաւոր դաւանութիւններէ քաղելով . աս բանիս վրայօք հետեւեալ յօդուածը կը կարգանք մէկ նստակի մը մէջ՝ որ Վրիդերիկոս Աուլիէրմոս Ե Սրուսիայի թագաւորը խրկած է Պէդրինի 'Կաղզխացաց եկեղեցական բարձրագոյն ժողովին' : "Մն հաւատոյ դաւանութիւնը յօրինուած է ոչ առանց կատարեալ խորհրդակցութեան , ոչ մէկ տեղի մը մէջ , ոչ ալ անանկ մարդոցմէ՝ որ սնուպարծութեան համար աշխատած ըլլան . այլ ընդհակառակն անխկայ սկսաւ պատրաստուիլ սաստիկ հալածման ժամանակը , որ առնն առուած ային բանին պաշտօնեաները պարտաւորեալ էին երեսնին պահել և միայն խիստ ծածկարար կրնային ժողովուիլ . անկից ետքը՝ իր կատարեալ և ամբողջ ձևին մտաւ առաջին ազգային Արևհոգոսին մէջ , 1554ին" : Այնպէս ժողովներ վճնեցին որ աս Հաւատոյ 'Կաւանութիւնը ստորագրեն պաշտօնեաները , (Կն հոգևորական հովիւները ,) երեցները և սարկաւաղները , (Երդով . ւն , ի , և է) և սաստուած արանութեան վարդապետները , (Երդով . ք , ժէ :) 'Վանի մը տեղուանք զանիկայ կը կարգային կիրակի օրերը քարոզէն առաջ , և Հաղորդութիւն եղած

*Consistoire supérieur Français.

օրերը՝ հաւատացեալները Հաղորդութեան սեղանին ծօտեմալէն առաջ : Եւ մէն դաւառային Սիւնհոգները՝ անկից մէկ մէկ օրինակ ունենալու էին (ժը երորդ ժողով,) որն որ պէտք էր կարդալ անոնց բացուած ստեղծ : Արեւայ թէ խիստ շատ անգամ տպուած է ան : Վարիդի եկեղեցիին պաշտօնեաները կը հաստատեն թէ՛ մինչև 1617ին հինգ հարիւր անգամ տպուած է եղեր : Ըստ հովիւներ ալ տարբեր ժամանակ իմաստուն ջատագովութիւններ հրատարակեցին անոր վրայ :

Մինակ Վաղդիայի եկեղեցիները չեն որ յարգեցին աս Հաւատոյ Վաւանութիւնը, հապա Ա իդրէի մէջ եղած ժը երորդ ժողովին Ստորին Վաւառաց եկեղեցիներու երեսօթիսանները ստորագրեցին զանիկայ իրենց եկեղեցիին կողմանէ, ի նշան բարեկամութեան և միութեան, որ ան երկու եկեղեցիները ունէին : Վարձեալ ան նաժանեցը՝ որ խրկուեր էին փալագինեան եկեղեցական ծերակոյտէն, Հայտելպերի Համալարանէն, Հորանտայի ու Օնելանտայի դաւառական Սիւնհոգէն, Հանաւի երկրէն, Լաուզանայի, Սոսթէսի ու Իվէրտունի առանձին ժողովներէն, ու Նէնեվրայի եկեղեցիէն, և որ կարդացուեցան Վաղդիայի Լա Սոզէլ քաղքին մէջ եղած ժը երորդ ժողովին մէջ՝ կատարեալ հաւանութիւն կրցուցնեն անոր վրայ :

Ի այց կարդացողը թող չկարծէ թէ աս եկեղեցիներուն մէկը իրրեւ անխաղ գործ մը կը համարի աս Հաւատոյ Վաւանութիւնը. այլ ընդհակառակն թող լսէ

Թէ ի նչ կրօնն դաւանութեանս մտ առննի Վաղ-
ղիացի հրատարակիչները իրենց յառաջարանութեանը
մէջ :

«Սենք չունինք ուրիշ հաւատոյ կանոն մը բացի
Սուրբ Վիորքէն . չկայ անսխալ բան մը բացի Եստուծոյ
Խօսքէն : Եզա ուրեմն հաւատոյ Վաւանութիւն մը
Սուրբ Վիորքի տեղ դրուելու կանոն մը չէ . այլ մեր
հաւատքին բացատրութիւնն է » :

Եւ հիմա կրինդրենք կարգացողէն որ ուշադրութեամբ
քննէ նայի Սուրբ Վիորքէն յառաջ բերուած ան վկայու-
թիւնները , որ թէ աս Վաւանութեանս և թէ աստուա-
ծաբանական վարդապետութեանը մէջ կը գտնուին , և
այնպէս դատէ իր առջևը եղած վարդապետութեան
ուղղութիւնը : Քանզի կրօնքի վերաբերեալ ի նչ բան
որ Սուրբ Վիորքին վկայութեամբը չհաստատուիր ,
պէտք է մերժել չընդունիլ զանիկայ՝ մարդու հարք սե-
պելով :

Պ . Երրորդը (երեսուն և ինը յօդուածները) կը
ներկայացունէ Ենդղիայի և Խալանտայի եկեղեցիին վար-
դապետութիւնները : Ես յօդուածները նախ՝ 1562ին
հաստատուեցան Ենդղիայի եկեղեցոյն ժողովէն , և թա-
գաւորէն ալ վաւերական հաստատութիւն տրուեցաւ ա-
նոնց : Ես հաստատութիւնը ան ատենէն մինչև հիմա ա-
ռնն առնն վերստին տրուեցաւ , և հիմա աս յօդուածնե-
րը ան եկեղեցիին վարդապետութեանը վաւերական օ-
րինակն են :

'Կ. Չորրորդը՝ պատրաստուեցաւ Փրկչին մերոյ 1643
 թուականին՝ գիտուն և բարեպաշտ աստուածաբաննե-
 րու ժողովէ մը, որ Մնղղիայի Նառլամէնդին հրամանո-
 վը գումարեցաւ կրօնական խնդիրները վճռելու համար :
 Ժողովին մէջ գտնուելու էին տասը լորտեր, քսան ու-
 րիշ աշխարհական անձինք, և հարիւր քսանըմէկ Մշե-
 տարանի պաշտօնեաներ : Ժողովին բոլոր անդամները
 Նառլամէնդէն ընտրուեցան, և անատենի գիտուն՝ աս-
 տուածապաշտ և ազատ ոգւոյ տէր մարդիկներն էին : Մ-
 մէնն ալ երգում ըրեր էին ուրիշ բան մը շատաջարկե-
 լու՝ բացի ան բաներէն որ կրնային Սուրբ Գրոց վկայու-
 թեամբը հաստատել : Հինգ տարի վեց ամիս և քսան
 երկու օր աս գործիս մէջ զբաղեցան, և ան միջոցին 1163
 անգամ մէկ տեղ ժողովեցան : Մն հինգ ու կէս տարուանս
 խորհուրդին պտուղները եղան, Հաւասոյ 'Նաւանու-
 թիւն մը, Եկեղեցական Առաւմարութեան 'Կիրք մը,
 մէկ ուրիշ մըն ալ որ կրտսի Ամնոն եկեղեցական պաշ-
 տամունքի, և երկու քրիստոնէականներ, մէկը Մնւարձակ
 և մէկալը Համառօտ կոչուած : Մն վերջինը՝ որ մենք հը-
 բատարակեցինք, "Մստուածաբանական վարդապետու-
 թիւն" մականուանելով, մեծապէս հաճելի եղած է զա-
 նազան Նրոթէսպանդ ժողովրդոց, Մշետարանին ճըշ-
 մարտութիւնները պարզապէս համառօտութեամբ և
 վարպետութեամբ իր մէջը բովանդակելուն համար :
 'Արիս ընդհանուր սկզբնաւորութիւն մը կրնէ մարդուս
 : Խաւոր վախճանին վրայօք, և ետրը՝ ցուցնելով թէ

Սուրբ Գիրքն է մի միայն անսխալ կանոն հաւատոյ և վարուց, կըլառաջանայ անոր մէջի աստուածային վարդապետութեանցը համեմատ մեկնել թէ,

ւ • Սարգս Մատուծոյ վերաբերեալ ի՛նչ բանի հաւատալու է, և

բ • Թե՛ Եստուած ի՛նչ կըպահանջէ մարդէն :

Ես քրիստոնէականս կարդացողը պիտի խմանայ թէ ի՛նչ վարդապետութեան կըհետեւին Աղովտիայի եկեղեցին և Ենզղիայի ու Եմերիգայի երիցական եկեղեցիները • ասիկայ շատ յարզի կըհամարին նաև Ենզղիայի և Եմերիգայի ժողովական ըսուած եկեղեցիները : Ի վերայ այսր ամենայնի աս եկեղեցիներուն մէկն ալ չհամարիր զանիկայ իբրև կատարեալ և անսխալ, վասն զի մի միայն կատարեալ և անսխալ գիրքը Եստուածաշունչն է :

Ահրջապէս կարդացողը իր ձեռքին մէջ և իր աչքին առջևը ունի Գերմանացի, Հոլանտացի, Ենզղիացի, Իռլանտացի, Աղովտիացի, Գաղղիացի և Եմերիգացի Խրթէսդանդներուն՝ Լուտերական, Աալմիկական, Երիցական և Ապիսկոպոսական ըսուած հաւատքին վաւերական և յայտնի հրատարակեալ դաւանութիւնները : Ես հաւաքմանս պարունակած հատուածները կարդալով անտարակոյս պայծառ պիտի տեսնէ թէ՛ որչափ անիրաւ ևն Խրթէսդանդներուն վրայ դրուած անբարութեանքները՝ զրպարտութիւնները և բամբասանքները՝ որ Յայտարար Աւղղութեանը և ուրիշները

հրատարակած են : Իչու աս հատուածները մեկզմեկու-
հետ բաղդատելով , պիտի տեսնե նաև թէ աշխարհի
մէջ Քրիստոնէական եկեղեցիները որքան միաբան և
համաձայն են Քրիստոնէական վարդապետութեանը
գլխաւոր նիւթերուն մէջ :



2738 wh

5067~~8~~ wh



1549-72

Փ Ո Ւ Ք Ր Ի Կ

Ք Ր Ք Ս Տ Ո՛Ն Ե Լ Կ Լ Ն



1. Տ Ե Ս Ը Պ Ե Տ ՈՒ Ի Ր Ը՛Ն Բ՛Ն Ե Ր Ը՛

Ի՛նչպէս պէտք է ծնողաց
որ ասոնք պարզ հղանակաւ սորվեցու-
նեն իրենց ընտանեացը :



Եւ աշին Պատուիրան :

Ուրիշ աստուծոնիւր շնորհաւ :

2. Լ՛ս Պատուիրանին նշանակու-
թիւնը ի՞նչ է :

Պ . Թէ պարտինք ամէն բանէն ա-
ւելի Մատուծմէ վախնալ , սիրել զա-
նիկայ , և անոր ասպաւինիլ :



Երկրորդ Պատուիրան :

Տէրովք յո՛ւ Լ՛ստուածոյդ անուանը՝ պարտադրեալք Բերանդ շղթիտի տանէս . ինչո՛ւր Տէրը իր անուանը պարտադրեալք Բերանդ տանողք անձե՛զ շղթիտի սեղէ * :

Հ . Լ՛ս Պատուիրանին նշանակուած թիւեր ի՞նչ է :

Պ . Թէ Լ՛ստուածմէ վախնալով և զանխկայ սիրելով՝ ո՛չ պարտինք անոր անունովը անէծք տալ , երդում ընել , կախարդել , սուտ խօսիլ , կամ մարդ խաբել . այլ ամէն ներդուծեանց մէջ զԼ՛ստուած յօգնուծիւն կանչել , անոր երկրպագուծիւն ընել , զոհուծիւն մատուցանել , օրհնել և փառաւորել զանխկայ :

* Պարզացողը թո՛ղ շղարմանայ՝ տեսնելով որ հեղինակը երկրորդ պատուիրանքը կը պակսեցունէ՝ երրորդը անոր տեղը դնելով , և որ տասներորդը երկուքի կը բաժնէ թիւը լրացունելու համար . պատճառն որ ասքրիստոնէականս գրած ասե՛նք՝ Ղուտեր տակաւին պապական մոլորութեանց հակամիտեալ էր , ու կատարեալ լուսաւորութիւն չունէր :

Երրորդ Պատուիրան :

Ս'ի գործ է եր ուր սոսրէ պահէն շաբաթ
օրը :

Հ . Լ'ս Պատուիրանին նշանակու
թիւնը ի՞նչ է :

Պ . Թէ Լ'ստուծմէ վախնալով և
զանհիկայ սիրելով՝ ո՛չ պարտինք Լ'ս
տուածային քարոզները և անոր Խօսքը
արհամարհել . այլ սորվել՝ սուրբ սե
պելով զանոնք և յօժարակամ ականջ
դնելով անոնց :



Չորրորդ Պատուիրան :

Պատուի՛ր սոսրէ և հայրդ ու հայրդ ուր բարե՛ լը
լայ բեզէ, և երկայնալեայ լըստ երկե՛ լը
րայ :

Հ . Լ'ս Պատուիրանին նշանակու
թիւնը ի՞նչ է :

Պ . Թէ Լ'ստուծմէ վախնալով և

զանիկայ սիրելով՝ ո՛չ պարտինք ա-
նարդել մեր ծնողքը և մեր տէրերը ,
և ոչ իսկ քարկացունել զանոնք . այլ
յարգութիւն տալ և ծառայել ա-
նոնց , քաղցրութեամբ վարուիլ հե-
տերնին , սիրել և պատուել զանոնք :

— —

Հինգերորդ Պատուիրան :

Սպանելի-ն թ' ընէր :

Հ . Ըստ Պատուիրանին նշանակու-
թիւնը ի՞նչ է :

Պ . Թէ ըստուծմէ վախնալով և
զանիկայ սիրելով՝ ո՛չ պարտինք մեր
ընկերին կենացը վնասել կամ նեղու-
թիւն տալ . այլ կենաց և մարմնոյ
բոլոր նեղութիւններուն և վտանգնե-
րուն մէջ օգնել անոր և ձեռնտու
լլալ :

— —

Վեցերորդ Պատուիրան :

Եւս-Էն-ն Տի' Ընէր :

շ . Աս Պատուիրանին նշանակու-
թիւնը ի՞նչ է :

Պ . Թէ Բատուծմէ վախնալով և
զանիկայ սիրելով՝ պարտինք պարկեշտ
և ողջախոհ կեանք վարել , թէ խօս-
քով և թէ դործքով , և իւրաքանչիւր
ոք իր կնիկը սիրէ՛ ու պատուէ՛ :



Եօթներորդ Պատուիրան :

Պաղ-Էն-ն Տի' Ընէր :

շ . Աս Պատուիրանին նշանակու-
թիւնը ի՞նչ է :

Պ . Թէ Բատուծմէ վախնալով և
զանիկայ սիրելով՝ ո՛չ պարտինք ընկե-
լին դրամը կամ ինչքը յափշտակել ,
կամ կեղծ վաճառքներով կամ խա-

բերայութեամբ բռնի առնուլ . այլ
 ջանք ընել ո՛ր անոր ինչքը պահպա-
 նուի , և անոր վիճակը աւելի աղէկ ըլ-
 լայ :



Ութերորդ Պատուիրան :

Ընկերիդ դէմ սուս վայելելու թ' ը-
 ներ :

Հ . Ըստ Պատուիրանին նշանակու-
 թիւնը ի՞նչ է :

Պ . Թէ Ըստուծմէ վախնալով և
 զանիկայ սիրելով՝ ո՛չ պարտինք ընկե-
 ըին դէմ սուտ խօսք մը ըսել , զանի-
 կայ մատնել կամ վատահամբաւու-
 թիւն մը ընել անոր . այլ ջատագով
 ըլլալ , բարի խորհիլ և խօսիլ անոր
 վրայով , և ամէն բան բարի մտօք
 առնուլ և աղէկի մեկնել :



Իններորդ Պատուիրան :

Լիկերիտ Կանը ոչ թ' Կնկեր :

Հ. ԼՍ Պատուիրանին նշանակու-
թիւնը ի՞նչ է :

Պ. Թե՛ Լստուծմէ վախնալով և զանիկայ սիրելով՝ ս'չ պարտինք ընկե-
րին ժառանգութիւնը և տունը խա-
բէութեամբ յափշտակել, և իրաւանց
ու արդարութեան երեոյթով՝ մեր ըն-
չիցը հետ միացունել. այլ մանաւանդ
օգնել անոր՝ որ իր ստացուածքը ամ-
բողջ պահէ :

Տասներորդ Պատուիրան :

Վարացիիտ կնոջք, կոմ անոր Ժառային, կոմ անոր օղտիկնին, կոմ անոր Էղին, կոմ անոր իշուն և կոմ անոր ամէն բանին թ' ցանկար :

Հ. ԼՍ Պատուիրանին նշանակու-
թիւնը ի՞նչ է :

Պ . Թէ Լ՛ստուծմէ վախնալով և զանիկայ սիրելով՝ ո՛չ պարտինք ընկերին կինը , ծառաները , աղախինները և անասունները հեռացունել կամ զատել անկից . այլ յորդորել և ստիպել զանոնք որ մեան , և իրենց պաշտօնը ժրութեամբ կատարեն :

Հ . Լ՛ստուած ի՞նչ ըսաւ աս ամէն պատուիրանքներուն համար :

Պ . Լ՛ստուած ըսաւ Ելից . ի . 5 . Ես քու Տէր Լ՛ստուածդ նախանձոտ Լ՛ստուած եմ , որ կը հատուցանեմ հայրերուն մեղքը՝ որդւոցը վրայ , մինչև անոնց երրորդ ու չորրորդ ցեղը՝ որ կատեն զիս . և կողորմիմ անոնց՝ մինչև հազար ցեղը՝ որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն :

Հ . Լ՛ստուած խօսքին նշանակութիւնը ի՞նչ է :

Պ . Լ՛ստուած պատիժ կը սպառնայ ամէն անոնց՝ որ աս պատուիրանքները զանց կընեն և չեն պահեր . վասն որոյ

պարտինք զարհուրիլ և դողալ Մ.ս. տուժոյ բարկութենէն, և ան պատուիրանքներուն դէմ երբէք բան մը չընել : Գարձեալ՝ կըխոստանայ իր շընորհքը և բոլոր բարիքը ամէն անոնց, որ աս հրամանները կըպահեն : Աւրեմըն իրաւամբ պարտինք սիրել զՄ.ս. տուած և իրեն ապաւինիլ, ու իր պատուիրանքներուն համեմատ՝ մեր բովանդակ կեանքը զգուշութեամբ և ամենայն փութով կարգաւորել :



2. ԲՈՒՎՅԱԿԻՆ, ԵՆՈՒՆ ԶԵՆՆԻՆ
ԳՆՆԵՆԻՆ

Ի՛նչպէս պէտք է ծնողայ
որ ասիկայ պարզ կերպով սորվեցու
նեն իրենց ընտանեացը :

Յօդուած Բապին :

Ըրարչագործութեան վրայով :

Հասարակ յԸրարչագործ շայրն ամենակողմ,
արարել էրինն է երկնն :

Հ . Ի՞նչ ըսել կուղէ աս Յօդուած
ծը :

Պ . Կըհաւատամ որ Ըստուած ըստ
տեղծեց զիս և բոլոր արարածները ,
որ մարմին և հոգի , աչք , ականջք և
ամէն անդամները , խելք և ամէն զգա
յութիւնները տուաւ ինձի , և մինչև
հիմա կըպահպանէ , նաև որ հազնե

լիք , ուտելիք և խմելիք , տուն , կին ,
 զաւկըններ , անդեր , գրաստներ և ամէն
 բարիք , կենաց բոլոր հարկաւոր
 եղածներուն հետ աւատօրէն ամէն օր
 կը պարգևէ ինձի , ամէն վտանգներէն
 կը պաշտպանէ զիս , և ամէն չարիքնե-
 րէն կազատէ և կը պահպանէ . և աս
 ամէնը իր հայրական և Աստուածային
 բարերարութեամբը և գթութեամբը՝
 աւանց իմ մէկ բարի գործքիս կամ
 արժանաւորութեանս . որոնց բոլորին
 համար՝ իրաւամբք պարտիմ անկէ շը-
 նորհակալ ըլլալ , լիաբերան օրհնել ,
 ծառայել և պատուել զանիկայ : Աս
 սիկայ արդարև ճշմարիտ է :

Յօդուած Երկրորդ :

Փրկագործութեան վճայով :

Ե- ՚ի Յիսուս Քրիստոս անոր հոգին
 Որդայն հիւ Տերուց , որ Հոգու Սրբու

յղացաւ , կոյս Սնարխամէն ծնաւ , շարժու-
 ընցաւ Պանգոսցի Պիղապոսին ապէնը , խո-
 չնցաւ , Տաաւ եւ Լուղնցաւ , Վճոնիսը է-
 ջաւ : Արքարդ օրը 'ի Տաւնուց յարո-լի-ն
 աւաւ : Արիկնիսը հասէարցաւ , նստաւ Լճ-
 նախալ Լսարո-ժոյ ուր կարճը , ուսինց պիտի
 գայ ինդանիննիսը եւ Տաւնուցը դաստ-
 լաւ :

Հ . Ի՞նչ ըսել կուզէ աս Յօդուա,
 ծը :

Պ . Կըհաւատամ որ Յիսուս Քրի-
 ըստոս ճշմարիտ Լստուած 'ի յաւի-
 տենից ծնեալ 'ի Հօրէ , նմանապէս
 ճշմարիտ մարդ՝ կոյս Սնարխամէն ծը-
 նած՝ իմ Տէրս է , որ զիս կորսուած եւ
 դատապարտուած մարդս փրկեց , եւ
 ամէն մեղքերէն , մահէն եւ Սատանայի
 իշխանութենէն ազատեց . չէ՞ թէ ոս-
 կիով եւ արծաթով , այլ իր սուրբ եւ
 պատուական արիւնովը , եւ իր անմեղ
 չարչարանքովը եւ մահուամբը , որ ես
 բոլորովին իրը ըլլամ , եւ իր Թաղաւո-

բուժեանք մէջ իր իշխանութեանը
տակը ապրիմ և իրեն ծառայեմ
մշտնջենաւոր արդարութեան , անմե-
ղութեան և երանութեան մէջ , ինչ-
պէս որ Ինքը 'ի մահուանէ յարութիւն
առաւ , կենդանի է և կըթագաւորէ
յաւիտեան : Ըսիկայ արդարեւ ճշմա-
րիտ է :

Յօդուած Կրթորդ :

Արբացուցման վրայով :

Հո-տարմ 'ի Սո-րթ Հոգին , 'ի սո-րթ
և Կաթն-ղին Էկեղեցին , 'ի Հաղարտ-Լին-ն
սրթոյ , 'ի Լոզա-Լին-ն Ռոչոյ , 'ի յարտ-Լին-ն
հարմոյ և 'ի Է-անս յա-ի-տե-նախանս :

Հ . Ի՞նչ ըսել կուղէ աս Յօդուա-
ծը :

Պ . Կըհաւատամ որ ես իմ առան-
ձին խեղճովս և առաքինութիւննե-

րովս՝ բնաւ չեմ կրնար Յիսուս Վր-
 րիստոս իմ Տէրօջս տպաւինելու կամ
 անոր մերձենալու և դալու . այլ Հո-
 դին Սուրբ Մատարանով կոչեց զիս ,
 իր պարզեաներովը լուսաւորեց , ուղիղ
 հաւատքով սրբացուց և պահպանեց .
 ինչպէս որ սովոր է երկրի վրայի բո-
 վանդակ եկեղեցին կոչելու , 'ի մի ժո-
 դովելու , լուսաւորելու , սրբացուցա-
 նելու , և Յիսուս Վրիստոսով ճշմա-
 րիտ և մէկ հաւատքի մէջ պահպանելու .
 և ա՛ն եկեղեցիին մէջ ինձի և բոլոր
 քրիստոնէից մարդասիրաբար ամէն օր
 մեր մեղքերուն թողութիւն կուտայ ,
 և վերջին օրը ամէնքս ալ 'ի մահուա-
 նէ պիտի յարուցանէ , ու ինձի և ա-
 մէն 'ի Վրիստոս հաւատացելոց յա-
 լիտենական կեանք պիտի տայ : Մտի-
 կայ արդարև ճշմարիտ է :



3 · ՏԻՐՈՒՆԵԿԸՆ ԸՆԾԻՐ

Ի՛նչպէս պէտք է ծնողաց
որ աս աղօթքը պարզ եղանակաւ սոր-
վեցունեն իրենց ընտանեացը :

Ո՛վ շարժե՛ր որ երկնն է՝ ,

շ · Ի՞նչ կրնշանակէ աս խօսքը :

Պ · Ի՞նչ համառօտ սկսուածքովը՝
Իստուած կը հրաւիրէ մեզ , որ աներկ-
բայ հաւատանք թէ ինքը մեր ճշմա-
րիտ շայրն է , ու մենք իր ճշմարիտ
որդիներն ենք . որ զինքը վստահու-
թեամբ և լի յուսով յօդնուծիւն կան-
չենք , ինչպէս որ զաւկրները իրենց
ծնողքէն վստահութեամբ բան մը կը
խնդրեն :

(27-9551)



1

Առաջին Խնդրուած :

Վրս անոնիս սորէ ըլլայ :

Հ . Ի՞նչ կընշանակէ աս Խնդրուածը :

Պ . Լստուծոյ անուներ ինքնին սուրբ է . բայց մենք աս Խնդրուածը ընելով կաղօթենք , որպէս զի մեր բովն ալ սուրբ սեպուի ան :

Հ . Ի՞նչ կերպով կըլլայ աս բանը :

Պ . Երբ որ Լստուծոյ Խօսքը զուտ և պարզ եղանակաւ կըսորվուի , և մենք անոր համեմատ՝ ինչպէս որ Լստուծոյ որդիներուն կըլլայէ , երկիւզածութեամբ կըկենցաղավարինք : Ա՛յլ չայր մեր որ երկինքն ես՝ կաղաչենք որ ասիկայ այսպէս ըլլայ մեզի : Բայց ո՛վ որ Լստուծոյ Խօսքը սորվեցունելու տեղ՝ ուրիշ կերպ կըսորվեցունէ կամ կըկենցաղավարի , անիկայ անպատուութիւն կընէ Լստուծոյ անուանը :

Ո՛վ երկնաւոր Հայր մեր , մի՛ թողուր
որ ասանկ ըլլայ :



Եփեփոզ Խնդրուած :

Ք. — Ըստորոքեալ Գրքի :

Հ . Ի՞նչ կընշանակէ աս Խնդրուածը :

Պ . Լստուծոյ թագաւորութիւնը ինքնին կուգայ առանց մեր աղօթքին . բայց աս աղաչանքովը կըխնդրենք որ մեր քովն ալ հասնի :

Հ . Ի՞նչ կերպով կըլլայ ասիկայ :

Պ . Երբ որ երկնաւոր Հայրը՝ իր Սուրբ Հոգին կուտայ մեզի , որ իր շնորհքին օգնելովը՝ անոր սուրբ Խօսքին հաւատանք ու երկիրդաճութեամբ ասլրինք թէ՛ հիմա աս կեանքիս մէջ , ու թէ՛ ետքն ալ յաւիտեանս յաւիտենից :



Երրորդ խնդրուած :

Վաս խնդր ըլլայ , ինչպէս որ երկէն-
 ը՛ տնտնի ուլ երկրէն վրայ :

՝ . Ի՛նչ կըսորվեցունէ աս խընդ-
 րուածը :

Պ . Ի՛ստուծոյ բարի և ողորմած
 կամքը՝ առանց մեր աղօթքին ալ կըլ-
 լայ . բայց աս խնդրուածը ընելով՝
 կաղաչենք որ մեր վրայ ալ կատարուի
 ան :

՝ . Ի՛նչպէս կըլլայ ասիկայ :

Պ . Երբ որ Ի՛ստուած կըխափանէ
 ան ամէն գէշ խորհուրդը , կամքը և
 քանքը , որոնք կարգիլեն Ի՛ստուծոյ ա-
 նունը սրբացուցանելիս , և այսպէս
 անոր թագաւորութիւնը մեզի չհաս-
 նիր , որ ասիկայ է Սատանային , աշ-
 խարհի և մեր մարմինին կամքը : Վաս
 երբոր կըզօրացընէ և հաստատուն կը
 պահէ մեզ իր խօսքին և հաւատոյն
 վրայ՝ մինչև մեր վերջին շունչը : Ի՛հա՛

աս է անոր դժած և բարի կամեցողութիւնը :

Չորրորդ Խնդրուած :

Սէր ամէն աստուծոյ հացը՝ այսօր քու՛ր
Տէր :

Հ. Ի՞նչ կընշանակէ աս Խնդրուածը :

Պ. Յիւրաւի ամէն աստուծոյ հացը՝ Վ.Ս. տուած ամէնուն կուտայ, թէ և չխընդրենք, չար մարդոցը անգամ. բայց մենք աս աղօթքը ընելով կըխնդրենք որ ճանչնանք աս բարերարութիւնը, և այսպէս մեր ամէն աստուծոյ հացը շունորհակալութեամբ ընդունինք :

Հ. Իսկ ի՞նչ կընշանակէ ամէն աստուծոյ հացը :

Պ. Կընշանակէ ան ամէն բանը՝ որ մեր կեանքին հարկաւորութեանը կը

վերաբերի , այսինքն է՝ ուտելիք , խըմելիք , հագնելիք , տուն , տեղ , արտեր , ոչխարներ , դրամ , հարստութիւն , առաքինի լծակից , բարի զակրներ , բարի ծառաներ , առաքինի և հաւատարիմ իշխաններ , հասարակաց վերաբերեալ բաներու աղէկ վիճակ , առողջարար օդ , խաղաղութիւն , առողջութիւն , համեստութիւն , պատիւ , աղէկ բարեկամներ , մտերիմ դրացիներ և ուրիշ այսպիսի բաներ :

— —

Հինգերորդ Խնդրուած :

Եւ Տեղէնիւն՝ Տեր պարտաւորը , ինչպէս որ Տես ալ իւրեղնիւն Տեր պարտականներուն :

Հ . Ի՞նչ կընշանակէ աս Խնդրուածը :

Պ . Ասով կըխնդրենք որ մեր երկնաւոր Հայրը չնայի և չքննէ մեր

մեղքերը , և ասոնց համար մեր աշոթքը չմերժէ . որովհետեւ մեր խնդրած բաներուն և մէկին ալ արժանի չենք , և ոչ երբէք կրնանք արժանաւոր ըլլալ . այլ իր շնորհօքը և բարութեամբը՝ ամէն բան հաճի մեզի տալու . վասն զի ամէն օր շատ կերպով կը մեղանջենք , և ուրիշ բանի արժանի չենք , բայց միայն պատիժի : Եւս փոփոխակի սրտանց ներենք՝ ինչ որ մեզի գէմ ըրէր են ուրիշները , և չարեաց փոխարէն յօժարակամ բարի հատուցանենք :



Վեցերորդ Խնդրուած :

Ուստի փորձաւորներն մի՛ պահել :

2 . Ի՞նչ կընշանակէ աս Խնդրուածը :

Պ . Լըդարև Լստուած մէկը չփոր-

ձեր . այսու ամենայնիւ աս աղօթքովը
կըխնդրենք որ ինքը հոգայ և սկսէ
սկսէ մեզ . ու Սատանան , աշխարհը
և մեր մարմինը չխաբեն մեզ , ուղիղ
հաւատքէն չմոլորցունեն , ու սնապաշ-
տութեան , երկմտութեան , յուսա-
հատութեան և ուրիշ ծանր մեղքերու
և ոճրագործութիւններու մէջ չձգեն :
Եւ որչափ որ անոնց փորձութիւննե-
րէն յորդորուինք՝ չհամոզուինք , այլ
մանաւանդ յաղթենք անոնց :



Երկրորդ խնդրուած :

Նորա՛ շարին մեզ սպասէ :

Ն . Ի՞նչ կընշանակէ աս խնդրուա-
ծը :

Պ . Ըստով կաղօթենք , որ մեր
Նայրը ազատէ մեզ ամէն չարիքներէն
և վտանգներէն , մարմինի և հոգիի ,

ընչից և պատուոյ . և վերջապէս՝ երբոր մահուան ժամը հասնելու ըլլայ ,
 աս կեանքէն երջանիկ ելք մը շնորհէ
 մեզի , և իր ձրի բարերարութեամբը՝
 աս թշուառութեան հովտէն երկինքը
 իր քովը առնէ մեզ :

ԼՊԷՆ :

Հ . Ի՞նչ կընշանակէ աս բառը :
 Պ . ԼՊԷՆ՝ կընշանակէ Լքողարե ,
 քի՛ որ ես ստոյգ ըլլամ , թէ մեր երկնա-
 ւոր Հօրը ըրած աղաչանքս ընդունելի
 ու լեւելի եղեր է անոր : Այսին զի ինքք
 հրամայեց մեզի որ աս կերպով աղօթք
 ընենք , և խոստացաւ որ ինքք մեր ա-
 ղաչանքը պիտի լսէ : Եւ մէն ամէն , ք
 ստոյգ , ճշմարտապէս ասանկ ըլլան :

4 . ՄԿԻՏՈՒԹԵԼՆԵ ԽՈՐ՝
ՀՈՒԲԳԲ

Ի՛նչպէս պէտք է ծնողաց
որ ասիկայ պարզ եղանակաւ սորվե-
ցունեն իրենց ընտանեացը :

Ե. ասըն

Հ . Ի՛նչ է Մկրտութիւնը :

Պ . Մկրտութիւնը պարզապէս
ջուր չէ , այլ ջուր՝ աստուածային
հրամանովը բռնուած և Մատուծոյ
Խօսքովը կնքուած :

Հ . Ո՞րն է Մատուծոյ Խօսքը :

Պ . Ըն որ Տէրն մեր Հիսուս Վ.ը
ըխտոս ըսաւ , Մատթէոսի վերջին
գլուխը (ի՞նչ . 19) , « Ինացէք աշակեր-
տեցէք ամէն հեթանոսները , մկրտե-
ցէք զանոնք յանուն Հօր և Արդւոյ և
Հոգւոյն Սրբոյ » :

ՆՐԿՐՈՐԴ

Հ . Ի՞նչ օգուտ կընէ Մկրտու-
թիւնը :

Պ . Մեղաց թողութիւն կուտայ ,
մահէն ու Սատանայէն կազատէ և յա-
ւիտենական երանութիւն կը պարգևէ
ամէն անոնց՝ որ կը հաւատան ինչ որ
Ըստուածային Խօսքերը և խոստմունք-
ները կը հաստատեն :

Հ . Որո՞նք են ան Ըստուածային
խոստմունքները :

Պ . Ընտեք որ Տէրն մեր Յիսուս
Քրիստոս ըսաւ , Մարկոսի վերջին գը-
լուխը (ԺԿ . 16) . «Ո՛վ որ կը հաւատայ
և կը մկրտուի , պիտի փրկուի . իսկ
ո՛վ որ չհաւատար , պիտի դատապար-
տուի » :

ՆՐԿՐՈՐԴ

Հ . Ի՞նչպէս կարող է ջուրը ա-
սանկ մեծ բաներ ընելու :

Պ . Ստոյգ է որ Զուրբ չէ աս բաները ընողը , այլ Մատուծոյ Խօսքը որ Զուրին հեան է , և հաւատքը՝ որ Զուրին վրայ աւելցուցած Մատուծոյ Խօսքին կը հաւատայ : Բանդի Զուրբ աւանց Մատուծոյ Խօսքին՝ պարզ Զուր է , և Մկրտութիւն չէ . բայց Մատուծոյ Խօսքը աւելցունելով՝ Մկրտութիւն կը լայ . այս է շնորհաց և կենաց փրկաւէտ Զուրբ , ու Հոգւով Արքով նորէն ծնանելու աւազանը . ինչպէս որ Պօղոս աւաքեալ ըսաւ Տիտոսի 7 . 5 . «Իր ողորմութիւնովը մեզ փրկեց նորէն ծնանելու աւազանին ձեւքովը՝ ու Սուրբ Հոգւոյն նորոգելովը . որ մեր վրայ լեցուց աւատօրէն Յիսուս Բըրիստոս մեր փրկչին ձեւքովը , որ շնորհքով արդարացած՝ յաւիտենական կեանքին յուսովը ժառանգ ըլլանք : Եւ խօսքը ճշմարիտ է” :

Չորրորդ

— . Ի՞նչ կընշանակէ ջուրին մէջ
ան ընկղմելը :

Պ . Կընշանակէ որ՝ հինն Բագամ որ
շեռ մեր ներսի գին է , այնուհետև ա-
մէն օր մեր կիրքերը մուսուրներով և
սպաշխարներով պիտի ընկղմենք և
մուսուրներնք զանիկայ , ամէն մեղ-
քերուն և գէշ ցանկութիւններուն
հետ մէկ տեղ . և նորէն միշտ պիտի
ծնանինք և յարութիւն առնենք նոր
մարդ մը ըլլալով , որ արդարութեան
և սրբութեան մէջ ասլրինք Եստու-
ծոյ առջևը յաւիտեանս յաւիտենից :

— . Ո՞ւր տեղ գրուած է ասիկայ :

Պ . Սուրբն Պօղոս Հռովմայեցւոց
չ . 4 , կըսէ . « Ի՞նոր հետ թաղուե-
ցանք մկրտութիւնով մահուան հա-
մար . որ ի՞նչպէս Վրիստոս Հօրը
փառքովը յարութիւն առաւ մեռել-

ներէն , անանկ մենք ալ կենաց նորո՞,
դութեան մէջ պտըտինք”:

(Յտ-էլ-աժ)

ԽՈՍՏՈՎՆՆՈՒԹԵՐՆ ՎՐԸՅ

Ի՛նչպէս պէտք է
պարզամիտ մարդոց սորվեցունել :

՝ . Ի՞նչ է խոստովանութիւնը* :

Պ . Խոստովանութիւնը երկու բան
կը պարունակէ . մէկը՝ մեղքերը խոս-
տովանիլ , և միւսը՝ արձակում կամ

* Յիբուի ականջալուր խոստովանութիւնը դադարե-
ցաւ Բրոթէսդանդներուն մէջ՝ Բարեկարգութեան սկը-
սուած օրէն , բայց Նուտեր ասիկայ գրած ժամանակը
կատարեալ լուսաւորութիւն չունենալով՝ կրտես-
ները որ խոստովանութիւնը ընդունեց , այսու ամե-
նայնիւ աս գիրքիս հիմակուան տպագրութեանց մէջ
ընդհանրապէս աս կտորը չտպուիր , անընդունելի ըլ-
լալուն համար :

ԹողուԹիւն ընդունիլ խոստովանա-
 հայրէն կամ Լուետարանի քարոզիչէն ,
 Լստուծմէ ընդունելու պէս . և առանց
 երկբայուԹեան հաստատ հաւատալ ,
 Թէ բոլոր մեղքերուն ան արձակումովը
 ԹողուԹիւն եղած է երկինքը Լստու-
 ծոյ առջին :

՝ . Ո՞ր մեղքերը խոստովանիլ
 պէտք է :

Պ . Պարտինք ամէն մեղքերով յան-
 ցաւոր համարիլ զմեզ Լստուծոյ առ-
 ջին , նաև անոնցմով որ ծածուկ են
 մեզի և մտքերնիս չեն դար , ինչպէս
 որ կըսենք Տէրունական աղօթքին մէ-
 ջը : Իայց բահանային առջևը պար-
 տինք միայն ան մեղքերը խոստովանիլ
 որ մեզի ծանօթ են , և որ մեր սրտին
 մէջը կըզգանք :

՝ . Որո՞նք են ան մեղքերը :

Պ . Իւրաքանչիւր ոք Թող քննէ իր
 կենաց վիճակը Տասը Պատուիրանք-
 ներուն համեմատ , Թէ հայր կամ

մայր , թէ տղայ կամ աղջիկ , թէ տէր կամ տիրուհի և կամ ծառայ ըլլայ . թէ արդեօք զխմադարձ , անհաւատարիմ կամ անհոգ գտնուէր է . թէ մէկը վշտացուցէր է խօսքով և գործքով . թէ գողութիւն ըրէր է կամ անիրաւութիւն , թէ ծուլութեամբ և անհոգութեամբ մէկուն վնաս տուէր է :



Համարօտ եղանակ խոստովանութեան՝ ուսմիկներու
համար :

Նսանկ պիտի խօսիս խոստովանահօրը .

«Պատուելի և սիրելի տէր իմ , կը խնդրեմ որ իմ խոստովանութիւնս լսես , և ինձի Նստուծով թողութիւն գտած ըլլալս իմացունես» :

«Ես ողորմելի մեղաւորս կըխօսվանիմ որ Նստուծոյ առջին ամէն մեղ-

քով յանցաւոր եմ . կըխոստովանիմ նաև քու առջևդ , ես ծառայ , աղախին , և՛ ըլլալով , անհաւատարմութեամբ ծառայեցի տիրոջս , չբերու չեմ ընելք ինչ որ ինձի կըհրամայէ ան . բարկացուցի և անէճք տալու դրգուեցի իմ տէրս կամ տիրուհիս . շատ բան զանց ըրի և անոնց վընաս կրելու պատճառ տուի , և՛ . խօսքով և գործքով յանդդնութիւն ըրի , անհամբեր եղայ , աղճուկ հանեցի , և այլն . վտան որոյ կըցաւ իմ , թողութիւն կըխնդրեմ , և կըխոստանամ ուղղել իմ բարքս” :

Սակայն Տէրը կամ Տիրուհին թող այսպէս ըսէ .

«Նախ կըխոստովանիմ քու առջևդ , որ փոյթ չունեցայ հաւատարմութեամբ կըլծելու և խրատելու դուկըներս և ծառաներս՝ ի փառս Վստուծոյ . հայհոյեցի , Վստուծոյ անունը՝ սնտի խօսքերու մէջ բանեցուցի ,

չար օրինակ տուի անկարգ բաները ըսելով և ընելով, դրացիներս վշտացուցի, շատ մարդոց վրայով գէշ խօսեցայ, չափերու և կշիւքներու խարդախութիւն ըրի, ասլրանք ծախելու ատենս՝ ընկերս խաբեցի” , և Է : (1, և թէ որ ուրիշ մէկ բան մը միտքդ կուդայ Մատուծոյ պատուիրանքներուն դէմ ի՛նչ և իցէ դործի մէջ, և այլն :)

Թէ որ յիրաւի չգղար մէկը՝ որ ասանկ կամ ալ աւելի ծանր մեղքերով բեւեաւորած է, անիկայ թող հոգ չընէ, չլինաուէ կամ մեղքեր չհնարէ մտքովը, խոստովանութիւնը մոստանջութիւն մը ընելով իրեն . այլ միտքը եկամ մեղքերը թող ըսէ այսպէս . « Ե, ախ կըխոստովանիմ որ Մատուծոյ անունը փուճ տեղը դործածեր եմ, անհամեստ խօսքեր ըսեր եմ, աս կամ ան բանը զանց ըրեր եմ” , և Է : Եւ անկով թող հանգչի իր սիրտը :

Թէ որ ստոյգ բան մը չես յիշեր ,
 (որ դրեթէ անհնարին է) մասնաւոր
 բան մը մի՛ զրուցեր . այլ Թողութեն
 պիտի առնես ընդհանուր խոստովա
 նութիւն ընելով , որն որ Մատուծոյ
 առջիւր պարտիս քահանային ըսել :

Ապա քահանան Թո՛ղ պատասխա
 նէ . «Մատուծ ներէ՛ քու մեղքերդ ,
 և հաւատքի մէջ հաստատ պահէ՛ քեզ .
 Մ՛մէն” :

Թո՛ղ հարցընէ նաև մտերմաբար .
 « Հիմա կը հաւատամ՞ս որ իմ տուած
 Թողութիւնս Մատուծոյ Թողութիւնը
 ըլլայ” : Արբ որ պատասխանէ մէկը
 Թէ «Ա՛յո՛ կը հաւատամ” , պարտի ը
 սել անոր . «Ինչպէս որ կը հաւատաս
 նէ՞ Թող անանկ ըլլայ քեզի . ու ես
 մեր Տէրոջը (Յիսուս Քրիստոսի հրա
 մանաւը Թողութիւն կուտամ քու մեղ
 քերուդ՝ յանուն Հօր և Արդւոյ և Հօ
 դւոյն Արքոյ . ամէն . զնա՛ խաղաղու
 Թեամբ” :

Իսկ որոնց որ խղճմտանքը հան-
դարտ չէ, ու դեռ մտատանջութեան
մէջ են, այնպիսիներուն թող մխի-
թարութիւն տայ քահանան, Սուրբ
Կրօց խօսքերովը, որոնք հաւատքը
աւելցունելու զօրութիւն ունին:

Աս ըսածներս՝ խոստովանութեան
միայն մէկ հասարակ օրինակ մըն է,
պարզամիտներուն և դեղացիներուն
համար:



ՀԵՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԻՐԻ-

ՀՈՒԿԿ՝

Ի՛նչպէս պէտք է ծնողաց
որ ասոնք պարզ եղանակաւ սորվե-
ցունեն իրենց ընտանեացը:



Հ. Ի՞նչ է Հաղորդութիւնը:

Պ. Հաղորդութիւնն է ճշմարիտ

մարմինն և ճշմարիտ արիւնն Տեառն մե-
րոյ Յիսուսի Վրիստոսի, որ հացով և
գինիով մեզի քրիստոնէիցս ուտելու և
խմելու տուաւ Վրիստոս, և սա խոր-
ուրդը սահմանեց :

Հ. Ո՛րք զբուած է ասիկոյ :

Պ. Այսպէս կըզրին Վատթէս,
Մարկոս, Պուկոս սուրբ Մեծաարա-
նիչը, և սուրբն Պօղոս :

Տէրն մեր Յիսուս Վրիստոս իր
մատնուած գիշերը՝ հացը աւաւ, զո-
հացաւ, կտրեց ու իր աշակերտներուն
տուաւ ըսելով. Առէք, կերէք. Աս է
խմ՝ մարմինն՝ որ ձեզի համար կըբաշ-
խուի. ասիկոյ ըրէք իս յիշելու հա-
մար :

Անանկ ալ ընթրիքէն ետև գուա-
թը աւաւ՝ ու զոհանալով տուաւ անոնց
և ըսաւ. ամէնքդ ալ խմեցէք ասկէց.
աս գուաթն է նոր ուխտ իմ արիւնո-
վրս, որ ձեզի համար կըթափուի,
մեղքերու թողութեան համար. ասի-

կայ ըրէք բանի՛ հեղ որ խմելու ըլլաք,
խա յիշելու համար :

Հ . Բայց ի՞նչ է ասանկ ուտելուն
և խմելուն օգուտը :

Պ . Ան օգուտը յայտնի կընեն մեզի
աս խօսքերը . «Չեզի համար կըբաշ-
խուի», և «ձեզի համար կըթափուի,
մեղքերու թողութեան համար» : Եւ յս-
ինքն թէ՛ ան խօսքերուն զօրութեամբ
քը՛ մեղաց թողութիւն, կեանք, ար-
դարութիւն և փրկութիւն կըտրուին
մեզի աս խորհուրդին մէջը : Այսան զի
նւր որ մեղաց թողութիւն կայ՝ հոն է
կեանքը և փրկութիւնը :

Հ . Ի՞նչպէս կընայան մարմնաւո-
րապէս ուտելը այնքան մեծ բաներ ը-
նել :

Պ . Ստոյգ է որ զօրութիւնը ուտե-
լուն և խմելուն վրայ չէ, այլ աս խօս-
քերուն վրայ . «Չեզի համար կըբաշ-
խուի և կըթափուի՛ մեղքերու թողու-
թեան համար» . ու աս խօսքերը՛ մարմ-

Նաւորասպէս ուտելուն հետ մէկ տեղ աւաջին և գլխաւոր մասն է աս Խորհուրդին . և ո՛վ որ աս խօսքերուն կը հաւատայ , անիկայ ստուգիւ իր մեղքերուն թողութիւնը կառնէ :

Է . Ո՛վ արժանասպէս կընդունի աս Խորհուրդը :

Պ . Տո՛մ պահելով իր մարմինը պատրաստելը յիրաւի աղէկ արտաբին կըթութին մըն է . բայց անիկայ է ստոյգ արժանաւորութեամբ աղէկ պատրաստուած՝ որ աս խօսքերը հաւատքով կընդունի . «Չեղի համար կը բաշխուի , և մեղքերու թողութեան համար կըթափուի» : Սակայն ո՛վ որ աս խօսքերուն չհաւատար կամ անոնց վրայով կըբեկբայի , անիկայ անարժան և անպատրաստ է : Վասն զի աս խօսքը՝ «ձեղի հաւա . » , կըպահանջէ որ բոլորով սրտի- Մտուծոյ հաւատացուի :



Յո՛ւնիւն՝ ան :

Ի՛նչպէս պէտք է ճնողայ
որ առտուան և իրիկուան աղօթք ընել
լու կերպը պարզ եղանակաւ սորվե
լուենն իրենց ընտանեացը :

Առաւօտուն երբ որ անկողնէն
կելես՝ խաչակնքէ զքեզ ըսելով .

«Յանուն Հօր , և Արդւոյ և Հո
գւոյն Արքոյ . Իմէն» :

Ապա ճնկան վրայ դալով կամ սո
քի վրայ կենալով՝ Հանդանակը և
Տէրունական աղօթքը ըսէ , ու ետքն
ալ աս յետագայ համառօտ աղօթքը .

«Գոհութիւն կրմատուցանեմ քեզի
Յիսուս Վրիստոս քու սիրելի Յի
զուովք , ո՛վ երկնաւոր Հայր իմ , որ ա
մէն անհանդատութիւններէն և վտանգ
ներէն պահպանեցիր զիս աս զիշեր :
Եւ հիմա կաղաչեմ քեզի , որ զիս այս

օր ալ պահպանես և մեղքէ և ամէն չարիքներէ փրկես, որ իմ ամէն դործքերս նմանապէս և բոլոր կեանքս քեզի հաճելի ըլլան: Վանդի ես զիս՝ իմ մարմինս և հոգիս և ամէն բանս քու ձեռքդ կրցանձնեմ, քու սուրբ Հրեշտակդ ինձի հետ ըլլայ, ու Սատանան երբէք կարող չըլլայ ինձի մօտենալու. Եւ մէն”:

Ապա ուրախութեամբ քու դործդ գնա՛, Սաղմոս մը ըսելով, Տասը պատուիրանքները կամ ուրիշ երգ մը երգելով, որով քու սիրտդ շարժուի:

Նմանապէս իրիկունը ե՛րբոր պառկելու կերթաս՝ խաչակնքէ՛ զքեզ ըսելով.

«Յանուն Հօր, և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Եւ մէն”:

Ետքը ծնկան վրայ դալով կամ ոտքի վրայ կենալով՝ ըսէ՛ Հանգանակը և Տէրունական աղօթքը, և աս կարճ աղօթքն ալ.

«Գոհութիւն կըմատուցանեմ քեզի Յիսուս Վրիստոս քու սիրելի Արդու վըդ, ո՛վ երկնաւոր Հայր իմ, որ ձրի ողորմութեամբդ և բարերարութեամբըդ զիս պահեցիր այսօր : Աաղաչեմ քեզի որ Թողութիւն տաս իմ ամէն մեղքերուս որ գործեցի, և անոնցմով վշտացուցի քեզ, քու շնորհքովդ պահպանէ զիս սա գիշերս : Այսան զի ես զիս՝ իմ մարմինս և հոգիս և ամէն բան քու ձեռքդ կըյանձնեմ . քու սուրբ Հրեշտակդ ինձի հետ ըլլայ, ու Սատանան չկրնայ ինձի մօտենալու . Լ'ամէն» :

Լսկէ ետքը պէտք է հանդարտութեամբ ննջել :

Ի՛նչպէս պէտք է ծնողաց
 որ Աեղանի օրհնութիւնը և գոհու-
 թիւնը պարզ եղանակաւ սորվեցունեն
 իրենց ընտանեացը :

Ձեռքով Աեղանի օրհնութիւն :

Տղայք ընտանեացը հետ մէկ տեղ
 պարտին ձեռքերնին կուրծքերնուն վը-
 լայ դնելով , պարկեշտութեամբ սե-
 ղանին մօտիկնալ և այսպէս աղօթել .

«Ամէնուն աչքերը քեզի կըսպա-
 սեն , Տէր , որ իրենց կերակուրը ժա-
 մանակին տաս : Չեւբղ կըբանաս , ու
 ամէն կենդանին բարութիւնով կըկըշ-
 տացունես” :

(Աս օրհնութիւնը՝ Մատուծոյ առա-
 տածեանութիւնը կընշանակէ , որ ա-
 մէն կենդանիներուն ալ կերակուր
 կուտայ , որ անով ուրախ և զուարթ
 կընան ասլըիլ : Մէլի հողը , Զանքը ,
 աղահոսութիւնը և կծծութիւնը արդէլք

կըլլան աս օրհնութեանը , խնդութեանը և անդորրութեանը) :

Ապա թող ըսեն Հայր Բռ , ու հետագայ աղօթքը .

«Տէր Աստուած , երկնաւոր Հայր , օրհնէ մեզ աս քու պարզեցնելովդ , որ քու աւատա՛նեանութենէդ կընդունիմք , մեր Տէրօջը Հիսուս Վրխատախ համար . Ամէն» :

Պօհութեան աղօթք :

Վճանապէս կերակուրը ուտելէն ետե ալ նոյն կերպով սեղանին բոլոր ախրը կայնին և ըսեն .

«Պօհացէք Տէրօջմէն , ինչո՛ւ որ՝
բարի է . ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է , որ ամէն մարմինը կըկերակրէ , անասուններուն իրենց կերակուրը կուտայ . ու ազատին ձաղերուն , որ իրեն կաղաղակեն : Ան՝ ձիուն գօրութիւնը չուզիր . զօրեղ մարդուն սրունգներուն չհանիր : Տէ

ըը իրմէն վախցողներուն ու իր ողորմութեանը յուսացողներուն կը հաւնի” :

Ապա շարքէն ըսեն ու հետեւեալ աղօթքը .

«Քոհմութիւն կըմատուցանեմք քեզի Տէր Աստուած Հայր , մեր Տէր Յիսուս Քրիստոսով , բու ամէն բարեբարութիւններուդ համար , որ կենդանի ես և կըթաղուորես յաւիտեանս յաւիտենից . Ամէն” :



Յաւիտեանս Ի :

ՊԵՏԱԿԻ ՏՆՏԵՍԵՍԵՆՆԻ

Որուն մէջ կառաջարկուին Սուրբ Վրբին քանի մը ընտիր խրատները , ամէն սուրբ կարգերուն և վիճակներուն , որոնցմով անոնք կըխրատուին իրենց պաշտօնին ու դործին վրայով :



Ապիսկոպոսներուն , ժողովրդապետներուն և քա-
րովելներուն համար :

Պէտք է Ապիսկոպոսին անարատ
ըլլալ , մէկ կնկան մը էրիկ , հեղ ,
խոնարհ , սրբիկեշտ , օտար սիրող ,
սորվեցունող , ս'ջ նախատող , ս'ջ
զարնող , հասլա հանդարտ . ս'ջ կը
ուռող , ս'ջ արծաթասէր , որ իր ամեն
ալ աղէկ վերակացու եղած ըլլայ , որ
զակըներ ունեցած ըլլայ՝ հ'նազանդու-
թեան մէջ կեցած ամէն կերպ սրբ-
կեշտութիւնով . նորահաւատ չըլլայ ,
վերակացու վարդապետութեան հաւա-
տարիմ խօսքին , որ կարող ըլլայ
ողջամիտ վարդապետութիւնով յոր-
դորել , և հակառակ կեցողները յան-
դիմանել , և՛ : ւ՛ Տի՛ . ւ՛ . Չ : Տի՛ . ւ՛ .
Յ :

Ունեղիքներուն՝ իրենց Ապիսկոպոսաց ունեցած
պարտաւորութեանը համար :

Ասանկ ալ Տէրը հրաման տուաւ ,
անոնք որ Մետաքանը կը քարոզեն ,

Բուտարանէն պիտի ապրին : Ի
 Կրնի . թ . 14 : Բշակերտը իր վարդա
 պետին բաժին թո՛ղ հանէ ամէն բա
 ըիքներու մէջ : Գառ . ի . 6 : Բն երէց
 ները որ աղէկ վերակացու կըլլան՝
 կըկին պատիւի արժանի թո՛ղ բլան .
 մանաւանդ անոնք՝ որ կաշխատին խօս
 քով ու վարդապետութիւն ընելով :
 Ինչու որ Կիրքը կըսէ . Կալին մէջի
 եղին դունչը պիտի չկապես . և բան
 ւորը իր վարձքին արժանի է : Ի ՏՅ .
 Ե . 17 : Չեր առաջնորդներուն մտիկ
 քէք , ու անոնց հնազանդ կեցէք .
 Ինչու որ անոնք ձեր հողիներուն հա
 մար արթուն կրմնան , որպէս թէ ի
 ընք ձեզի համար հաշիւ տալու են .
 որ խնդութիւնով ընեն անիկայ , և չէ՛
 թէ հառաչանք ընելով , որ ան ձեզի
 օղտակար չէ : ԿԷր . ԺԳ . 17 :

Իշխանաւորաց համար :

Ամէն մարդ որ իշխանութեան տակ է՝ հնազանդութեան մէջ թող կենայ . ինչո՞ւ որ իշխանութիւնը մէկ տեղէ մը չէ՛ , միայն թէ Մտուծմէ . և անոնք որ կան՝ Մտուծմէ կարգուած են : Անանկ է նէ՛ ս՛վ որ իշխանութեան դէմ կը կենայ՝ Մտուծոյ հրամանին դէմ կը կենայ . և անոնք որ դէմ կը կենան՝ իրենց վրայ դատապարտութիւն կընդունին : Ինչու որ դատարկ տեղը անիկայ մէջքը թուր չէ՛ կապեր . Մտուծոյ սպասուորն է՝ վրէժխնդրող անոր վրայ՝ որ չար կը գործէ : Լուս. Ժ. 1, 2, 4 :

Հպատակներուն՝ Իշխանաւորաց ունեցած պարտաւորութեանը համար :

Ան որ կայսրին է՝ կայսրին տուէք : Ս. Եւ. իբ. 21 : Ասոր համար պէտք է հնազանդ ըլլալ , չէ՛ թէ մինակ բարկութեանը համար՝ հասցա խղճման

քին համար ալ : Ասոր համար է որ
տուրք ալ կուտաք . ինչու որ Աստուծոյ
ստրասաւորներն են միշտ ան բանին վը-
րայ կենալու : Անանկ է նէ՛ հատու-
ցէ՛ք ձեր պարտքը ամէնուն . որուն որ
տուրք տալու է ; տուրքը . որուն որ
մաքս՝ մաքսը . որուն որ վախ՝ վախնա-
լը . որուն որ պատիւ՝ պատիւը : Վարդ. Ժ. 5, 6, 7 : Աւտի կաղաչեմ ամէն
բանէն առաջ՝ աղօթք ընել , խընդ-
րուած , աղաչանք , զոհութիւն ամէն
մարդոց համար , մանաւանդ թաղա-
ւորներուն և բոլոր իշխաններուն հա-
մար . որ խաղաղութիւնով ու հան-
դարտութիւնով վարենք մեր կեանքը՝
բոլորովին աստուածապաշտութիւնով ու
սրբութիւնով : Թ՛Յ՛՛ . ք . 1, 2 : Աւ ա-
նոնց միտքը ձգէ . իշխանութիւններուն
և կառավարութիւններուն հնազանդ
ըլլալ , ու հպատակ մնալ , Ե՛՛՛ : Տ՛՛ .
Գ . 1 : Հնազանդ եղի՛ք ամէն մարդկա-
յին ստեղծուածներու Տէրոջը համար .

Թէ որ Թաղաւորին՝ մեծ մէկու մը
 պէս , Թէ որ դատաւորներու՝ որպէս
 Թէ անոր կողմէն խրկուածներու պէս ,
 և՛ : ԹՊԷՊ . Դ . 13 , 14 :

Կրիկ մարդոց համար :

Կրիկ մարդիկ ալ խոհեմութիւնով
 կանանց հետը կենան . տկար ամանի
 պէս պատիւ ընեն կնիկներուն , և որ
 պէս Թէ կենաց շնորհքին ժառանգորդ
 ներու : որ ձեր աղօթքներուն խափա
 նում չըլլայ : ԹՊԷՊ . Դ . 7 : Կրիկներ՝
 սիրեցէ՛ք ձեր կնիկները , ու հետեր
 նին լեղի մի՛ վարուիք : ԿՊԷ . Դ . 19 :

Անիկ մարդոց համար :

Ասանկ ալ կնիկները հնազանդ պի
 տի ըլլան իրենց էրիկներուն որպէս
 Թէ Տէրոջը . ինչպէս Սարրան ալ՝ որ
 Եբրահամին հնազանդ էր , և անիկայ
 իրեն տէր կըկանչէր : ԹՊԷՊ . Դ . 6 :
 ԿՊԷ . Ե . 22 :

Ճնողաց համար :

Հայրեր ձեր զաւկընէրը մի՛ բարկացունէք . հապա անոնք մեծցուցէք Տէրօջը խրատովը՝ ու վարժութիւնովը : Եփե՞ս . Դ . 4 :

Արդւոց համար :

Ո՛րդիք ձեր ճնողացը հնազանդ եղիք Տէրով , որ ան է արժանը : Պատուէ՛ք ու հայրդ ու մայրդ , (որ ան առջի պատուիրանքն է խոստմունքով) որ քեզի աղէկ ըլլայ , ու երկան ապրիս երկընի վրայ : Եփե՞ս . Դ . 1 :

Ծառաներու , աղախիններու , վարձկաններու և ուրիշ բանտորներու համար :

Ճառաներ՝ հնազանդ եղիք ձեր մարմնաւոր տէրերուն , ահով ու դողով և ձեր սրտին միամտութիւնովը՝ որպէս թէ Քրիստոսին : Չէ՛ թէ մարդահաճոյի պէս աչքի առջև ծառայելով , հապա Քրիստոսի ծառա-

ներու պէս Մտուծոյ կամքը ընելով . սրտանց ծառայելով որպէս թէ Տէրոջը , ու չէ՛ թէ մարդոց : Վխտնա՛ք որ՝ ամէն մէկը ինչ բարիք որ ընէ , նոյնը Տէրոջմէն պիտի ընդունի՛ թէ ծառայ ըլլայ և թէ ազատ : Ա՛լէս . Դ. 5 : Ա՞ղ . Դ. 22 :

Տերերուն և Տիրուհիներուն համար :

Դուք ալ տէրեր՝ նոյնը ըրէք անոնց , պատիժը համբերու թեամբ ընելով . զխոցէք որ անոնց ալ ձերն ալ Տէրը երկինքն է . ու անոր առջևը աչառու թիւն չկայ : Ա՛լէս . Դ. 9 : Ա՞ղ . Դ. 1 :

Արիտասարդներու համար :

Ասանկ ալ երիտասարդները հընազանդ ըլլան ծերերուն . ամէնքն ալ մէկզմէկու հետ խոնարհու թիւն թո՛ղ ունենան . ինչու որ Մտուած ամբարտաւաններուն դէմ կըրկենայ , խոնարհ

ներուն շնորհք կուտայ : Եւստուծոյ
կարող ձեռքին տակը խոնարհեցէք ,
որ ձեզ ժամանակին բարձրացունէ :
ձ ՊԷ. Ե. 5 :

Եւրի կնիկներուն համար :

Ուստի ա՛ն որ ստոյգ որբեւարի է՝
ալ աւանձնացած՝ Եւստուծոյ վրայ
յոյս դրած է , և դիշեր ցորեկ աղօթ-
քի ու աղաչանքի հետ է . բայց փա-
փուկ որբեւարին կենդանւոյն մեռած
է : ձ ՏԷ. Ե. 5 :

Եւ հասարակ ամենուն համար :

Քու ընկերդ քու անձիդ պէս սի-
րես . օրէնքին բովանդակութիւնը
սէրն է : Լուսն. Ժ. 10 : Ուստի կաղա-
չեմ ամէն բանէն առաջ՝ աղօթք ընել ,
խնդրուած , աղաչանք , գոհութիւն ա-
մէն մարդոց համար , և՛ : ձ ՏԷ. Բ.
1, 2 :

ԳՒԼԻԼՆՈՒԹՒՒՆ

ՀԱՒԱՏՈՅ

ՈՐ ՄԻԵՐԵՆ ՀԵՒԵՆՈՒԹԵԱՄԻ

ԸՐԵՑ ԵՆՅ

ԳԵՂԳԻՆՅԻ ՏԼԻՐՈՒԹԵԱՆ

ԲԵՐԵԿԵՐԳԵԼԵԼ ԵԿԵՂԵՅԻՆԵՐԸ 1

Ի ՋՄԻՒՌՆԻԱ

Ի ՏԳԱՐԱՆԻ ԿՈՒԼՏԻԿԼՄՈՍ ԿՈՒՅԻԹԻ

1845

2939 wh

5068-wh



1550-72

ՅՕԴ. Բ.

Եւստուած կը յայտնէ զինքը մարդոց, նախ՝ իր գործքերովը⁽¹⁾, այսինքն թէ իր ստեղծածներովը և թէ պահպանելովը ու կառավարելովը զանոնք. երկրորդ՝ և աւելի յայանապէս, իր Նանիւը⁽²⁾, որ նախ և առաջ պատգամներով յայտնուեցաւ⁽³⁾, ու ետքը գրուեցաւ⁽⁴⁾ ան զրքին մէջ որ Եստուածաշունչ⁽⁵⁾ կանուանեմք :

ՅՕԴ. Գ.

Բոլոր առ Եստուածաշունչը բովանդակեալ է շին և Նոր կտակարանին կանոնական զրքերուն մէջ, որ ասոնք են. շնդամատեանք Սովսէսի, ցր. (Օ)ննդոց, Ելից, Վկտայուց, Թուոց, Երկրորդ (Օ)րինաց)

ՅՕԴ. Բ. (1) Նորագոյն. Թ. 20 : (2) Եր. Թ. Թ. 1, 2 : (3) Օննդ. Ժ. 1 : (4) Ելից. Ի. 4 : (5) Նորագոյն. Թ. 2 :

Հետոյ , Գատաւորաց , Հուլիսայ ,
 Լուաջին , Երկրորդ , Երրորդ և Չոր-
 րորդ թագաւորութեանց , Լուաջին և
 Երկրորդ Սնացորդաց և Լուաջին գիր-
 քը Եզրայ * : Եւեմի , Եսթեր , Հովք ,
 Սաղմոսք Գաւթի , Լուակք Սողոմոնի ,
 Ժողովող և Երգերգոց : Սարգարէու-
 թիւնք Եսայեայ , Երեմիայ , Ողբք Ե-
 րեմիայ , Սարգարէութիւնք Եզէկիէլի ,
 Գանիէլի , Ովսէի , Հովելայ , Լմովսայ ,
 Լքդիու , Հովնանու , Սիքիայ , Եւա-
 ւումայ , Լմբակումայ , Սոփոնիայ , Լն-
 դեայ , Օգբարիայ և Սաղաբիայ : Սուրբ
 Լւետարան՝ որ ըստ Սատթէոսի , ըստ
 Սարկոսի , ըստ Գուկասու և ըստ Հօ-
 Տաննու : Երկրորդ գիրքը սրբոյն Գու-
 կասու թ Գործք Լուաքելոցը : Արբոյն
 Պողոսի թղթերը , թ Հուլմայեցւոց
 մէկ թուղթը , Կորնթացւոց՝ երկու

* Լսիկայ Հայերէն Լսգոսաձաշնչն Ռշն
 թ Եզրայ գիրքն է :

Թուղթը , Վաղատացւոց՝ մէկ , Լփեւ-
սացւոց՝ մէկ , Փիլիպպեցւոց՝ մէկ , Կո-
ղոսացւոց՝ մէկ , Խեհասաղոնիկեցւոց՝ եր-
կու , Տիմոթէոսի՝ երկու , Տիտոսի՝ մէկ ,
Փիլիմոնի՝ մէկ : Լքրայեցւոց Թուղթը ,
սրբոյն Յակովբայ Թուղթը , Մուաջին և
երկրորդ Թղթերը սրբոյն Պետրոսի , Մ-
ուաջին , Երկրորդ , և Երրորդ Թղթերը
սրբոյն Յօհաննու , սրբոյն Յուդայի
Թուղթը , և Յօհաննու աւետարանչին
Յայտնութիւնը :

ՅՕԴ . Դ :

Լս դրբերուն վաւերական՝ և մեր
հաւատոյ կանոնը ⁽¹⁾ ըլլալը կը ճանչ-
նամք , ոչ այնքան եկեղեցիին միաբան
հաւանութեամբը , որքան որ Հողոյն
Սրբոյ ներքին վկայութեամբը և համո-
զելովը որ մեզի սրոշել կուտայ զանոնք

ՅՕԴ . Դ : (1) Ս-Ղ . ԺԹ . 8 , 9 . ԺԻ . 7 :

եկեղեցական միւս գրքերէն, որոնք թէ
և օգտակար ալ ըլլան, անհնար է հա-
ւատոյ մաս մը անոնցմով հաստատել :

ՅՕԴ . Ե :

Կը հաւատամք որ աս գրքերուն մէջ
պարունակեալ Վանը Մտուծմէ⁽¹⁾ յա-
ռաջ եկեր է, ուսկից միայն իր հեղինա-
կութիւնը կընդունի⁽²⁾, և ոչ մարդոցմէ,
Լ, և քանի որ ասիկայ է բոլոր ճշմարտու-
թեան կանոնը⁽³⁾, բովանդակելով ինչ
որ հարկաւոր է Մտուծոյ ծառայու-
թեանը և մեր փրկութեանը համար,
հրաման չունին մարդիկ և ոչ իսկ հը-
րեշտակները որ ասոր վրայ բան մը ա-
ւելցնեն, պակսեցնեն կամ փոխեն⁽⁴⁾ :

ՅՕԴ . Ե : (1) Ի Տէմ. ք. 16: Ի Պէթ. ւ. 21:
(2) Էջ. 31, 34: ւ. 13: (3) Էջ. 11:
Վարձ. ք. 27: (4) Ի () ք. 32, ք. 2:
Վարձ. ւ. 8: Էջ. 18, 19:

Մսկից կըհետեւի որ՝ ոչ հնութիւնը ,
 ոչ սովորութիւնները , ոչ բաղմութիւ-
 նը , ոչ մարդկային իմաստութիւնը ոչ
 դատողութիւնները , ոչ վճիռները , ոչ
 հրովարտակները , ոչ կանոնները , ոչ
 ժողովքները , ոչ տեսիլքները և ոչ հը-
 րաչքները երբէք պիտի չհակառակին
 աս Սուրբ Գիրքին այլ ընդ հակառակն՝
 ամէն բան պիտի քննուի կարգի դրուի և
 նորոգուի անոր համեմատ ⁽⁵⁾ : Ասան այ-
 սորիկ կընդունիմք երեք հանդանակնե-
 րը , այսինքն՝ Մաքելոցը , Նիկիայինը
 և Թանասինը , քանզի երեքն ալ Մս-
 տուծոյ խանին համեմատ են :

ՅՕԻ . Գ :

Մս Սուրբ Գիրքը մեզի կըսորվե-
 յընէ որ ան մինակ և անբաժանելի
 Մստուածային Սութեանը մէջ որ վերը

(5) Սաղմ . ԺԷ . 3, 9 : Գործ . Ե . 29 : Ի կո-
 ռնել . ԺԹ . 1 , 2 , 23 :

խոստովանեցանք⁽¹⁾, երեք անձինք կան,
 Հայր, Արդի, և Սուրբ Հոգի⁽²⁾։ Հայ-
 րը՝ առաջին սրատճառ, սկիզբն և ծը-
 նունդ ամէն բաներուն, Արդին՝ իր Սա-
 նը և յաւիտենական իմաստութիւնը,
 Սուրբ Հոգին՝ իր զօրութիւնը, կարո-
 ղութիւնը և աղլուութիւնը։ Արդին՝
 ՚ի յաւիտենից ծնեալ ՚ի Հօրէ։ Սուրբ
 Հոգին՝ ՚ի յաւիտենից բղխեալ ՚ի
 Հօրէ և յԱրդւոյ։ Եւ երեք անձերը
 անշիւթ՝ զանազան մէկգլմէկէ և միան-
 զամայն անբաժանելի, մէկ էութիւն
 մը ունին։ Երեքն ալ յաւիտենական,
 ամենակարող և հաւասար են։ Ալ ա-
 սով կը խոստովանիմք ինչ որ հին ժո-
 ղովքները վճուեր են, և կը հերքեմք
 ամէն աղանդները և հերետիկոսու-

ՅՕԴ. Ը. : () բ () բն. 7. 12 : Սուրբ. իր.
 19 : ան () 6. 7 : () () 6. 1 : ԺԷ. 5 :
 Հայր. ան. 3, 4 :

Թիւնները որ սուրբ վարդապետները
 հերքեցին : որպէս սուրբն Իւարիոս ,
 սուրբն Վթանաս , սուրբն Մարրոսիոս
 և սուրբն Աիւրեղ :

ՅՕԴ . 1 :

Արհաւատամք որ Մատուած¹ երեք
 դործակից անձեր ըլլալով , իր զօ-
 րութեամբը , իմաստութեամբը և ան-
 հասանելի բարերարութեամբը , ա-
 մէն բան յոչնչէ ստեղծեց⁽¹⁾ , ոչ միայն
 երկինքը՝ երկիրը ու բոլոր ասոնց մէ-
 ջը եղած բաները , բայց նաև աներե-
 ւոյթ ողինները , որոնցմէ ոմանք ին-
 կան⁽²⁾ և յաւիտենական դժոխքը եր-
 թալու դատապարտուեցան . իսկ մնա-
 ցածները հնազանդութեան մէջ մնա-

ՅՕԴ . 1 : (1) Օ՛ննդ . ւ . 1 : Հօհ . ւ . 3 :
 Հօւդ . 6 : Աւղ . ւ . 16 : Իբր . ւ . 2 , 14 :
 (2) Ի Պէր . Ի . 4 :

ցին⁽²⁾ : Որ առջինները չարութեամբ լցուած⁽³⁾ թշնամի են ամէն բարի բաներու , և հետեալաբար բոլոր Ակեղծացիին . իսկ միւսները Մատուծոյ շնորհքովք պահպանուելով՝ Մատուծոյ անունը փառաւորելու , և ընտրեալներուն փրկութեանը ծառայելու պաշտօնեաներն են⁽⁴⁾ :

ՅՕԴ . Ը :

Կըհաւատամք թէ Մատուած ոչ միայն ամէն բաները յոչնչէ ստեղծեց , այլ և կըխնամէ և կըկառավարէ⁽¹⁾ զանոնք , տնօրինելով և հրամայելով իր ուղածին պէս , ինչ որ կըպատահի աշխարհիս մէջ⁽²⁾ , բայց չէ թէ ինքն է

(²) Սաղմ. 87 . 20, 21 : (³) Զոհ. ը . 44 : (⁴) Լուս. 7 , 4 :

ՅՕԴ . Ը . (¹) Սաղմ . 87 : (²) Մատու . 4 : Սաղմ . Ժ . 29 : Մատու . Թ . 11 : Գարծ . Ժ . 24, 26 28 :

Հեղինակ չարեաց կամ թէ մեղքը անոր կըսեպուլ(³), ըստ որում իր կամքն է գերագոյն և անսխալ կանոն բովանդակ ուղղութեան և արդարութեան (⁴) . այլ անանկ սքանչելի միջոցներ ունի դէտրը և չարերը գործիքի սէս ձեռք առնելու և գործածելու (⁵) ; որ անոնց ըրած չարութիւնը՝ որով յանցաւոր կըլան , զիտէ բարիի դարձունել : Մ. յսպէս ան նոյն ատենը որ կըխոստովանիմք թէ առանց Մատուծոյ նախախնամութեանը երբէք բան մը չըլլար , խոնարհութեամբ երկրպագութիւն կըմատուցանեմք անոր որուն գաղտնիքները ծածկեալ են (⁶) մեզմէ , առանց մեր չափէն աւելի հետադուրութիւն ընելու . այլ մանաւանդ գործա-

(²) Ին 1304 . ք . 16 : Սլ . 17 . 9 : Ին 1304 . 17 . 8 : (³) Սլ . 17 . 5 : ՃՃԹ : 1307 . Ին . 22 : (⁴) Սլ . 17 . 23 , 24 , 27 : (⁵) Սլ . 17 . 19 , 20 , 17 . 33 :

դրելու կը պարտապիտեք ինչ որ Սուրբ
Վիրքը կը սորվեցընէ մեզի, որ հան-
գըստութեան և ապահովութեան մէջ
ըլլամք, ըստ որում Մատուած՝ որուն
ամէն բան կը հնազանդի, կը հողայ և
կը խնամէ մեզ հայրական զթով, ա-
նանկ որ մազ մը անգամ մեր գլխէն
չիյնար աւանց իր կամացը⁽⁷⁾ և նոյն ա-
տենը սատանաները և բոլոր մեր թըշ-
նամիները այնպէս կը սանձէ⁽⁸⁾, որ ա-
ւանց իր հրամանին ամենևին չեն
կրնար մեզի վնաս մը հասցնել:

ՅՕԻ. Թ:

Կը հաւատամք որ մարդս մաքուր և
անարատ ստեղծուած ըլլալով և ըստ
պատկերի Մատուծոյ, բուն իր մեղքո-
վը ինկաւ⁽¹⁾ ան շնորհաց վիճակէն որ

(7) Ստ. Բ. 30: Գ. 1. Իւ. 18: (8) Է. Բ.
12: Ն. Կ. 15:

ՅՕԻ. Թ: (1) Ն. Կ. 26, 27: Լ. Կ.

ընդունելու էր, և այսպէս օտարացաւ Մատուծմէ որ արդարութեան և ամէն բարեաց աղբիւրն է, անանկ որ իր բնութիւնը գլխովին աւրուեցաւ. ու իր միտքը կուրծնալով և սիրտը չարութեամբ լցուելով՝ բովանդակ անմեղութիւնը կորսընցուց բան մը չմնաց անկից⁽²⁾: Այլ թէպէտ դեռ ընտրողութիւն ունի, բարին ու չարը կը ճանչնայ⁽³⁾, այսու ամենայնիւ կը սեմք թէ՛ զՄատուծ փրկարուելուն կողմանէ լուսաւոր և յայտնի բանը խաւար կը դառնայ իրեն, անանկ որ իր մտքովը և բանականութեամբը⁽⁴⁾ ամենեւին չկրնար Մատուծոյ մօտիկնալու: Մասնկ ալ՝ թէպէտ կամեցողութիւն մը ունի, որով երբեմն հոգևորական գործեր ընելու

է. 29: Գործ. 12: Լուս. 2, 3:

(2) Օր. 5, 6. Ք. 21: (3) Գործ. 19, 20:

Ք. 15, 18, 19, 20: (4) Թ. 14: Գործ. 4, 5, 7:

կըյորդորուի , սակայն բոլորովին մեղաց գերի է , բնաւ առ բարին զիմե լու ազատութիւն մը չունի , անկից 'ի զատ՝ որ Աստուած կը շնորհէ իրեն (1) :

ՅՕԻ . Ժ :

Կը հաւատաւք որ բոլոր Աղամայ սերունդին տարածեցաւ աս ախտը (1) , որ սկզբնական մեղք կը սուի . ասիկայ ժառանգութիւն մնացած ասպականութիւն մըն է , չէ թէ նմանողութիւն մը միայն , ինչպէս Պեղազեանք ըսին , որոնք որ կը հերքեմք իրենց մոլորութիւններովը մէկտեղ : Ալ հարկաւոր չեմք համարիր քննել թէ մեղքը ինչպէս մէկ մարդէն մէկալին կանցնի , ինչ որում բաւական է գիտնալը թէ ինչ որ Աստուած տուաւ Աղամայ , մինակ

(1) Յօդ . ք . 36 : Հռոմ . ք . 6 , 7 :

ՅՕԻ . Ժ : (1) Օննդ . ք . 21 : Հռոմ . Ե . 12 : Յօբ . Ժ 7 . 4 :

իրեն համար չէր, այլ բոլոր իր սե-
րունդին համար: Այսպէս անոր ան-
ձամբը՝ մենք ալ ամէն բարիքներէն
զրկուեցանք, և ամէն կերպ աղքա-
տութեան և անիծից մէջ ինկանք:

ՅՕԴ. ԺԵ:

Արհաւատամք նաև որ աս ապակա-
նութիւնը ստուգապէս մեղք է, և բա-
ւական է բոլոր մարդկային աղքը դա-
տապարտելու, փոքրիկ երախաները
անզամ իրենց մօրը որովայնին մէջ, և
թէ այսպէս սեպուած է Աստուծոյ առ-
ջևը⁽¹⁾. ու մկրտութենէն ետքն ալ միշտ
մեղք է⁽²⁾, թէ և անոր դատապարտու-
թիւնը ջնջուած ըլլայ հաւատով մը-
կըրտուածներէն որ Աստուած իր ձրի
բարերարութեամբը՝ զանիկայ չհամա-
րիր անոնց: Ասկից զատ՝ այնպիսի ա-

ՅՕԴ. ԺԵ: (1) Սող. ճիւ. 7: Աստուծ. զ. 9—13. Ե. 12: (2) Աստուծ. Է. 8—24:

սրականութիւն մըն է աս՝ որ միշտ չարութեան և ապստամբութեան պըտուղներ յառաջ կը բերէ⁽³⁾ . անանկ որ՝ մեծամեծ սուրբերը ևս , թէև անոր դէմ կը կենան , չեն ազատիր տըկարութիւններ և սխարմունքներ ունենալէն՝ քանի որ կենդանի են⁽⁴⁾ :

ՅՕԴ . ԺԻ :

Կը հաւատամք որ աս ընդհանուր ապականութենէն և դատապարտութենէն՝ որու մէջ ընկղմը են բոլոր մարդիկ , Եստուած կը հանէ զանոնք՝ որ իր յաւիտենական և անփոփոխ կամբովը ընտրեր է⁽¹⁾ միայն մեր Տէր Յիսուս Վրիստոսով եղած իր բարերարութեամբը և ողորմութեամբը , առանց

(3) Հռոմ. Է. 5 : (4) Հռոմ. Է. 18, 19 :
Թ Կորնթ. ԺԲ. 7 :

ՅՕԴ . ԺԻ : (1) Եղեց. Թ. 16 : Հռոմ. Թ.
Թ 3

բանի մը տեղ զնելու անոնց գործքելըր . և ան նոյն ապականութեան և դատապարտութեանը մէջ կըթողու ուրիշները⁽²⁾ , իր արդարութիւնը անոնց վրայ ցուցնելու համար , ինչպէս որ աւջիններուն վրայ իր ողորմութեան մեծութիւնը կըցայտնէ : Վանդի մէկգլեկէ աւելի լաւ չեն⁽³⁾ , մինչև որ Բստուած չընտրէ զանոնք իր անփոփոխելի կամքովը , որ աշխարհիս ստեղծուելէն առաջ Յիսուս Վըրիտոսով որոշեր է⁽⁴⁾ . և ոչ ոք իր յատուկ առաքինութեամբը կրնայ ասել ջանկութիւնը ժառանգել , բոտ ուրում մեր բնութենէն բարի յօծարութիւն մը , եռանդ մը և խորհուրդ մը անգամ չեմք կրնար ունենալ , մինչ

23 : (2) Լուսնի . թ . 22 : (3) Լուսնի . 7 . 22 :

(4) Ի Տէ՛՛ . Ի . 20 : Տէ՛ . 7 . 5 , 7 : Լ . 4 . 5 .

չև որ Մատուած չազդէ մեզի ու չյօժարեցընէ(5) :

ՅՕԴ . ԺԳ . :

Կըհաւատամք թէ ինչ որ կարևոր էր մեր փրկութեանը , Յիսուս Քրիստոսով պարզեցաւ մեզի , որն որ փրկուցութեան համար տրուած ըլլալով՝ բաւական իմաստութիւն , արդարութիւն , սրբութիւն և փրկութիւն եղաւ մեզի(1) , անանկ որ հեռանալով անկից՝ կըզբրկուիմք Հօր Մատուծոյ ողորմութենէն , ուր որ մեր միակ ապաստանարանը պէտք է փնտուենք :

ՅՕԴ . ԺԴ . :

Կըհաւատամք որ Յիսուս Քրիստոս

ձ . 4 : ՔՏԷՅ . ձ . 9 : (5) ԼԳԷՅ . Ժ . 23 :

ԼԳԷՅ . ձ . 4 , 5 :

ՅՕԴ . ԺԴ : (1) ձ Կրնէ . ձ . 30 : ԼԳԷՅ . ձ .

6,7 : Կող . ձ . 13,14 : ՏԷՄ . թ . 14 :

Մտուածոյ խնամուածութիւնը ըլլալով , և անոր յաւիտենական Սրղին , մեր մարմինը զգեցաւ որ Մտուած և մարդ ըլլայ մէկ անձամբ⁽¹⁾ . այն մեղի պէս չարչարելի մարմնով և հոգւով , միայն թէ անարատ մնայ ամենեւին մեղք չունեցաւ⁽²⁾ : Այլ իր մարդկութեամբը Մ. Բ. րահամու և Գաւթի ճշմարիտ որդի էր⁽³⁾ , միայն թէ Հոգւոյն Սրբոյ գաղտնի զօրութեամբը յղացած⁽⁴⁾ : Մտոր համար կը հերքեմք բոլոր ան հերեալիսութիւնները՝ որոնք հին ժամանակը եկեղեցին աղմկեցին . և մասնաւորապէս Աէրվէդոսի դիւական կարծիքները , որ մտայածին աստուածութիւն մը կրնձայէ Վրխատոսի , ու

ՅՕԻ . ԺԻ : (1) Գ . 14 : Փիլիպ . ք . 6 :

(2) Լ . ք . 17 : ք Կորնթ . Ե . 21 :

(3) Գործ . ԺԴ . 23 : Հոգւոյն . 3 : ք . 3 : Թ . 5 : Փիլիպ . ք . 7 : Լ . ք . 14 , 15 :

(4) Ստոր . 18 : Գ . 1 . 35 :

բովհետև կըսէ թէ անիկայ ամէն բաներուն զաղափարն է ; և կըկոչէ զանիկայ Մատուծոյ անձնական կամ այլաբանական որդի ; և վերջապէս երեք անստեղծ տարերքէ մարմին մը կըհնարէ անոր ; և այսպէս երկու բնութիւնն ալ կըշփոթէ և գլխովին կը ջնջէ :

ՅՕԻ . ԺԵ :

Կըհաւատամք որ Յիսուս Վրիստոսի մի և նոյն անձին վրայ երկու բնութիւն ստուգիւ և անբաժանաբար միացեր են⁽¹⁾ ; ամէն մէկ բնութիւնը անշփոթ պահելով իր յատկութիւնը . անանկ որ՝ ինչպէս աս միաւորութեանը մէջ աստուածային բնութիւնը իր յատկութիւնը պահելով ; յաւիտենա

ՅՕԻ . ԺԵ : (1) Մատթ . Թ : Գ 7-1 . Թ :
 Հովհ . Թ . 14 : Թ Տիմ . Թ . 5 : Գ . 16 : Լուք .

կան՝ անհասանելի և ամէն բանի կարող մնաց ; ասոր պէս մարդկային բնութիւնն ալ՝ հունաւոր մնաց ; իր կերպարանքը , չափը և յատկութիւնը պահելով . և թէպէտ ճիստու Վրիստոս յարութիւն առնելով՝ անմահութիւն տուաւ իր մարմնոյն , սակայն անոր բնութիւնը չփոխեց : Աւատի անանկ կերպով մը կը նշուեն իմք անոր Վստուածութիւնը՝ որ ինքը չզըրկուի իր մարդկութենէն⁽²⁾ :

ՅՕԻ . Ժ.Օ :

Կը հաւատամք որ Վստուած իր միածին Որդին աշխարհ խրկելով՝ ցուցընել ուզեց մեր վրայ ունեցած իր անհուն սէրը և բարեբարութիւնը⁽¹⁾ :

Ն. 8 : (2) Գ. 1. ի. 38, 39 : Լուսնի . Կ. 4 : Փիլիպ. Թ. 6—11 :

ՅՕԻ . Ժ.Օ : (1) Գ. 1. 7. 16 : Ժ. 13 :

մեռնելու տալով զանիկայ , և յարու-
ցանելով ՚ի մեռելոց , բովանդակ ար-
դարութիւնը կատարելու և յաւիտե-
նական կեանք ստանալու մեղի հա-
մար :

ՅՕԴ • ԺԼ :

Կըհաւատամք որ Տեառն մերոյ Յի-
սուսի խաչին վրայ նուիրած միակ
սկստարագովը հաշտուեցանք Աստու-
ծոյ հետ⁽¹⁾ , արդարացած սեպուելով
անոր առջևը . վասն զի չեմք կրնար
հաճոյ բլլալու անոր և ոչ իր որդէ-
զրութեանը հաղորդ , բայց եթէ անոր
մեր մեղքերուն թողութիւն տալովը և
չյիշելովը զանոնք : Աւստի կըխոստո-
վանիմք թէ Յիսուս Քրիստոս է մեր
կատարեալ լուացումը և մաքրու-
թիւնը⁽²⁾ , և թէ անոր մահուամբը

ՅՕԴ • ԺԼ : ⁽¹⁾ ի Կորնթ . Ե . 19 : Լթր . Ե .
7 , 9 : Թ Պէր . թ . 24 , 25 : ⁽²⁾ Լթր . Թ .
14 : Լճէ . Ե . 26 : Թ Պէր . Թ . 18 , 19 :

անթերի հատուցում մը ունիմք մեր ունեցած մեղքերուն և անօրէնութիւններուն փոխարէնը վճարելու, և թէ աս դեղովս միայն կրնամք ազատիլ :

§ 30Ի • ԺԸ •

Կըհաւատամք որ մեր բովանդակ արդարութիւնը հիմնեալ է մեր մեղքերուն թողութեանը վրայ, և ասիկայ է մեր մէկ հատիկ երջանկութիւնը, ինչպէս կըսէ Գաւիթ⁽¹⁾ : Այսին որոյ Լստուծոյ առջին արդարանալու ամէն ուրիշ միջոցները կըհերքեմք, և աւանց առաքինութեան կամ բարի գործքի մը ապաւինելու, միայն Վըրիատոսի հնազանդութեանը կապատանիմք որ մերինը կըհամարուի՝ թէ մեր մեղքերը ծածկելու, և թէ մեղ

30Ի • ԺԸ • (1) Սող. 1 ք. 1, 2 : Յօհ. 8 ք. 8 : Հատ. 7, 8 : Ը. 1—3 : ք

Մտուածոյ հաճելի ընելու համար⁽²⁾ :
 Եւ յիրաւի թէ որ սա հիմնական կա-
 նոնէս բիջ մը խտորելու որ ըլլամք ,
 ուրիշ կերպով բնաւ հանդիստ չեմք
 ըլլար , այլ միշտ անհանգստութեան
 մէջ կըրտաւապիմք . քանզի երբէք
 Մտուածոյ հետ չեմք հաշտուիր մինչև
 որ հաստատ չգիտնամք թէ Յիսուս
 Վրիստոսով հաճելի եղած եմք անոր ,
 որովհետև մենք մեղմով ատելութեան
 արժանի եմք :

ՅՕԴ . ԺԹ .

Կըհաւատամք թէ սա միջոցովս է
 որ մենք ազատութիւն և համարձա-
 կութիւն ունինք զՄտուած յօգնու-
 թիւն կանչելու , վստահանալով որ
 հայրաբար պիտի խնամէ մեզ : Վան-

Կրքն՝ . Ն . 19 , 20 : (2) ԿՏ՝ . ք . 5 : Կ
 ՅՕԷ . ք . 1 : Հտու՝ . Ն . 19 : Վտր՝ . ք . 12 :
 Թ 4

զի անհնար է մեզի շօր Լստուծոյ մօտիկնալ, թէ որ աս Սիջնորդը չունենամք: Աւ մեր իր անունովը բրած աղաչանքնիս ընդունելի ըլլալու համար, պէտք է որ ասպաստանիմք անոր իբրև մեր զլխոյն⁽¹⁾:

ՅՕԻ . Ի :

Արհաւատամք որ մենք աս արդարութեանը՝ միայն հաւատքով մասնակից կըլլամք, ինչպէս որ գրուած է, թէ Վրիստոս մեր փրկութեանը համար չարչարուեցաւ, որպէս զի ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի⁽¹⁾: Աւ ասիկայ կըկատարուի որչափ որ կենաց խոստմունքները որ անով մեզի տրուեցան⁽²⁾, մեզի սեփհականենք և

ՅՕԻ . ԺԹ: ⁽¹⁾ Լուսն. Ե. 1, 5: Ը. 15: Գաղ. Գ. 4—7: Լուսն. Խ. 13—15:

ՅՕԻ . Ի: ⁽¹⁾ Լուսն. Գ. 27. Գաղ. Խ. 16: Գ. 24: Ծօհ. Գ. 15: ⁽²⁾ Ծօհ. Գ. 16,

անոնց ներգործութիւնը զգանք երբոր
կընդունիմք զանոնք, ամենեւին տարա-
կոյս մը չունենալով որ Մատուած իր
բերանովը այսպէս խոստացեր է մեզի,
և անհնար է որ խաբուինք: Աւստի
արդարութիւնը որ հաւատքէն կըն-
դունիմք, ձրի խոստմունքներէն կա-
խեալ է⁽³⁾, որոնցմով կըյայտնէ մեզի
Մատուած, և կըվկայէ որ կըսիրէ
մեզ:

ՅՕԻ • ԻԵ:

Կըհաւատամք որ Հողայն Արբոյ
ծածուկ շնորհքովը կըլուսաւորուիմք
հաւատք ունենալու. ու ասիկայ ձրի և
մասնաւոր պարզեւ մըն է որ Մատուած
իւր ուղածներուն կուտայ, անանկ որ
հաւատացեալները պարծենալու պատ-

17: (3) Հատմ. Թ. 17: 7. 24, 25, 28, 30:
7. 20, 22: Գաղ. 1. 20:

ճառ մը չունին , այլ կրկին շնորհա-
կալ ըլլալու են ուրիշներէն նախամե-
ծար ըլլանուն համար⁽¹⁾ . մանաւանդ
[Թէ հաւատքը՝ ընտրեալներուն տրուած
չէ որ միայն ուղիղ ճանապարհը մըտ-
նեն , այլ յարատեւեն մինչև վերջը
նոյն ճանապարհին մէջը . որովհետեւ
ինչպէս որ սկիզբը՝ ասանկ ալ վախ-
ճանք , [ստուծոյ ձեռքն է⁽²⁾ :

ՅՕԴ . ԻԲ :

Կը հաւատամք որ աս հաւատքովը
վերատին կը ծնանիմք ու նոր կեանք մը
կունեննամք⁽¹⁾ . քանզի ՚ի բնէ մեղաց
ճառայ եմք : Աւստի հաւատքով կըն-

ՅՕԴ . ԻԵ : ⁽¹⁾ Երկ. . ք . 8 : ւն [ժ.է. . ւն .
5 : ւն կորնէ . ք . 12 : ք Պէ. . ւն . 3 , 4 :
⁽²⁾ ւն կորնէ . ւն . 8 , 9 : Փէլէ. . ք . 13 : ւն .
6 :

ՅՕԴ . ԻԲ : ⁽¹⁾ ւն . 1 , 2 : ք . 1 , 2 :
կոր . ւն . 13 : ք . 10 : ւն Պէ. . ւն . 3 :

դունիմք սրբարար և Մատուծոյ երկիւղին մէջ տպրելու շնորհքը , Մեկտարանին մեղի տուած խոստումը ընդունելով , իմ թէ Մատուած իր Սուրբ Հոգին պիտի տայ մեղի : Աւրեմն հաւատքը՝ բարեգործութեամբ և սրբութեամբ ապրելուն վրայ սէր ունենալը չպաղէցունելէն ՚ի զատ , աւիթկըլայ նաև ու կըյորդորէ մեզ հարկաւ բարի գործքեր յառաջ բերելու⁽²⁾ : Սակայն Մատուած որ մեր փրկութիւնը կատարելու համար նորէն կըճնանի զմեզ⁽³⁾ ու բարեգործութիւն ընելու կընորոգէ , կըխոստովանիմք թէ բարի գործքերը որ իր Հոգւոյն առաջնորդութեամբը կընեմք , բնաւ չեն կընար արդարացունել զմեզ , կամ Մատուծոյ որդիները սեպուելու

(²) Յով. ք. Գառլ. Ե. 6 : Կոթ. ք. 3, 4 : Ե. 18 : (³) ք () րէն. Ը. 6 : Յոհ. ք. 5 :

արժանի ընել (4) . քանզի թէ որ մեր
խղճմտանքները չհաստատուին այն հա-
տուցմանը վրայ՝ որով Հիսուս Վրխա-
տոս պարտականութենէ ազատեց մեզ,
միշտ տատանեալ կրմնամք տարակու-
սանաց և անհանգստութեան մէջ:

ՅՕԻ . ԻԻ:

Արհաւատամք որ հին () ընթերին բո-
լոր ձևերը Հիսուս Վրխատոսի աշխարհ
դալուն՝ վերջացան (1) : Սակայն թէ-
պէտև ան արարողութիւնները չեն
կատարուիր հիմա, բայց անոնց բո-
վանդակութիւնը և ճշմարտութիւնը
մնացած է մեզի Վրխատոսի վրայ՝ որ է
լրումն օրինաց : Ի վերայ այսր ամե-
նայնի պէտք է որ () ընթերին և Սար-

(4) Ղ . 10 : Սուր . 10 : 2 : 2 : 2 :
Մ : Տի . 5 : 2 : 2 : 5 :
ՅՕԻ . ԻԻ : (1) 2 : 4 : Ղ . 10 . 7 .

դարէններէն օգնութիւն ընդունիմք⁽²⁾ ,
 թէ մեր կեանքը կանոնաւորելու , և
 թէ զմեզ աւետարանի խոստմանցը
 սրատրաստելու :

ՅՕԻ · ԻԻ :

Կըհաւատամք , (որովհետև Յիսուս
 Քրիստոս մեզի տրուած է մի միայն
 խարեխօս⁽¹⁾ , և որովհետև կըհրա-
 մայէ մեզի որ իր անունովը մտերմա-
 բար իր Հօրը դիմեմք⁽²⁾ , և որովհետև
 հրաման չունիմք ուրիշ կերպով աղօ-
 թել , միայն անանկ որ Վստուած իր
 խանիւը սորվեցուց մեզի⁽³⁾) թէ բո-
 լոր ան բաները որ մարդիկ հնարեր են
 մեռած Կուրբերուն բարեխօսութեա-

24 : Կող . ք . 17 : (2) ք Տէ՛՛ . 7 . 16 : ք Պէ՛ .
 ւ . 19 : 7 . 2 :

ՅՕԻ · ԻԻ : (1) ւ Տէ՛՛ . ք . 5 : Գարծ . 7 .
 12 : ւ Յօ՛ւ . ք . 1 , 2 : (2) Յօ՛ւ . Ժղ . 23 , 24 :

(3) Սար՛ . 7 . 9 : Գղ . 1 . Ժւ . 1 :

նը վրայով՝ ուրիշ բան չէ՝ բայց միայն
 Սատանային խաբէութիւնը , որով
 կարգիլէ մարդս օրինաւոր կերպով
 աղօթք ընելէն^(*) : Ամանապէս կը հեր-
 քեմք բոլոր ան միջոցները որ մարդիկ
 յանդիմարար կը դործածեն իրենց բա-
 ւութիւն մը ընելու համար Աստուծոյ
 առջևը . բանդի կը համարիմք թէ ան
 բաները անպատուութիւն մը կը բե-
 ընեն Հիսուս Քրիստոսի պատարագին
 և չարչարանացը վրայ : 'Ի վերջոյ՝
 Քաւարանը խաբէութիւն մը կը սե-
 պեմք , նոյն վաճառանոցէն ելած՝ ուս-
 կից որ յառաջ եկեր են վանական
 ուխտերը , ուխտադնացութիւնները ,
 ամուսնութեան և միս ուտելու ար-
 դէքները , հանդիսաւոր տօներ բռնե-
 լը , ականջալուր խոստովանութիւնը ,
 ներողութիւնները և ամէն ուրիշ ա-

(*) Իսր. 7 . 25 , 26 : Ժ. 14 : Հայր .
 Ժ. 10 :

սանկ բաները⁽¹⁾ , որոնցմով կարծեն
թէ շնորհաց և փրկութեան կարծա-
նաւորին : Եւսոնց ամէնը կը հերքեմք ,
ոչ միայն անոնցմով արժանաւորու-
թիւն ստանալու կարծիքը սուտ ըլլա-
լուն համար , հասլա նաև ըստ որում
մարդկային հնարքներ են ու խղճմը-
տանքները լուծի տակ կը դնեն :

ՅՕԴ . ԻԵ .

Լ՛րդ՝ ըստ որում միայն Եւետարա-
նով կը վայելեմք զՅիսուս Վրիստոս⁽¹⁾ ,
կը հաւատամք որ Վրիստոսի իշխա-
նութեամբը⁽²⁾ հաստատուած եկեղե-
ցիին կարգը՝ սրբազան և անզրժեղի
պիտի ըլլայ . ու եկեղեցին չկրնար

(¹) Սաղմ . ԺԵ . 11 : Գործ . Ժ . 14 , 15 :
Հանդի . ԺԴ . 17 : Գաղ . Դ . 9—11 : Առդ .
Ի . 18—23 : ԿՏԺ . Դ . 1—5 :

ՅՕԴ . ԻԵ : (²) Հանդի . Կ . 16 , 17 : Ժ . 17 :

(³) Սաղմ . ԺԸ . 20 : Երկ . Կ . 22 , 23 :

հաստատ մնալ թէ որ սորվեցունելու պաշտօն ունեցող հովիւները չունենայ . և սա հովիւները պարտիմք պատուել և ակնածութեամբ անոնց խօսքը մտիկ ընել⁽²⁾ ; երբ որ ըստ օրինի կարգեալ են և հաւատարմութեամբ իրենց պաշտօնը կրվարեն : Չեմք ըսեր թէ՞ սասնկ օգնականներու և ստորին միջոցներու կարօտ է Վատուած , այլ հաճելի է իրեն որ այսպիսի հպատակութեան մէջ պահէ զմեզ : Այսն որոյ կրգարշիմք բոլոր այլախորհուրդ մարդիկներէն , որոնք ձեռքերնէն եկածին չափ կաշխատին որ՞ Վատուծոյ Քանին քարողութեանը և խորհուրդներուն մատակարարութեանը պաշտօնը բնաջինջ ընեն :

(2) Մատթ . Ժ . 40 : Հովհ . Ժ . 20 : Լուկ . Ժ . 8 , 14 , 15 , 17 :

ՅՕԻ • Ի.Օ.:

Արհամատամք ուրեմն՝ թէ մէկը պէտք չէ մէկ զի քաշուի և միայն իր մտայր հետևի, այլ ամենքը մէկէն միաբան եկեղեցի ըլլան, հրասլարակաւ քարոզութեան և Հիսուս Վրիտտոսի լուծին հպատակելով⁽¹⁾, որ և իցէ տեղ, ուր որ Մատուած ճշմարիտ եկեղեցի մը հաստատեր է. թէև իշխանները և անոնց հրամանները աս բանիս զէմ ըլլան⁽²⁾: Իսկ ս՛վ որ մէկ տեղ ժողովուրդը կը թողու կամ կը դատուի, Մատուծոյ հրամանին կը հակառակի⁽³⁾:

ՅՕԻ • Ի.Օ.: (1) Սուրբ. Ե. 7: Իբ. 22, 25: Խբ. 4: Եբ. 3, 11, 12: (2) Գործ. 7. 19, 20: (3) Եբ. 7. 25:

ՅՕԻ . ԻԷ :

Այսու ամենայնիւ կը հաւատամք թէ՛ պէտք է ուշի ուշով և խոհեմու թեամբ ընտրել թէ՛ սրն է ճշմարիտ եկեղեցին . քանզի աս անունը շատ անգամ անարժան կերպով կը դործածուի⁽¹⁾ : Այսն որոյ կրտսեմք՝ Աստուծոյ Խօսքին համեմատ , թէ եկեղեցին ան հաւատացեալներուն ժողովն է՝ որոնք ան Խօսքին՝ և անկից կախումն ունեցող մաքուր հաւատքին հետեւելու համար կը միաբանին⁽²⁾ , և կը սնանին անով բոլոր իրենց կենաց ժամանակը , աճելով և հաստատուելով Աստուծոյ երկիւղին մէջը , քանի որ զարգանալու և միշտ աւաջ երթալու կարօտութիւն

ՅՕԻ . ԻԷ : ⁽¹⁾ Լւբէ՛ . է . 4 , 8 , 11 , 12 :
 Սառէ՛ . 7 . 9 : է . 22 : Ի7 . 4 , 5 : ⁽²⁾ Լւբէ՛ .
 ք . 20 : ա՛ Տէ՛ . 7 . 15 : թ՝ Օրէն . Լա . 12 :

ունին⁽³⁾ : Սակայն թէպէտև շատ կը ջանան՝ բայց միշտ հարկ կը լայ որ իրենց մեղքերուն թողութիւն փնտուեն : Այսու ամենայնիւ կըխոստովանիմք՝ թէ հաւատացելոց միաբանութեան մէջը կը գտնուին կեղծաւորներ և գէշ մարդիկներ ալ, բայց ասոնց գէշութիւնը ան միաբանութեանը եկեղեցի սեպուելուն իրաւունքը չկրնար վերցունել⁽⁴⁾ :

ՅՕԻ • ԻԸ :

Ասանկ հաւատալով կը վկայեմք՝ թէ ո՛ւր տեղ որ Աստուծոյ խանը ամենեւին ընդունուած չէ, և ո՛ւր որ ամենեւին չեն դաւանիր թէ անոր հպատակներն են, և ո՛ւր որ ամենեւին խորհրդոց գործածութիւնը չկայ, չեմք կրնար ըսել որ հոն եկեղեցի ալ ըլլ

(³) Լուկ. 7. 11—13; (⁴) Հ. 1. 7. 3; Ս. 1. 7. 3—8; Ս. 1. 18—20 :

լայ⁽¹⁾ : Վասն որոյ կը հերքեմք պա-
 պականներուն եկեղեցին , ինչու որ
 Մատուծոյ անարատ ճշմարտութիւնը
 դուրս ձգուած է անկից . Խորհուրդ-
 ները խանդարուեր , սյլափոխեր ու
 բոլորովին բնաջինջ եղեր են , և ամէն
 կերպ անապաշտութիւնները և կուա-
 պաշտութիւնները կը յարգուին : Աւս-
 տի ամէն անոնք որ ասանկ դործե-
 րու կը խառնուին ու հաղորդ կը լ-
 ընն , այնպէս կը համարիմք որ Հի-
 սուս Վրիտասի մարմինէն՝ իրենց
 կամքովը կը զատուին և կը կտրուին⁽²⁾ :
 Մյուս ամենայնիւ՝ որովհետև պապա-
 կաններուն մէջ դեռ եկեղեցիի դոյզն
 նշան մը կայ , և Մկրտութեան էութ-
 թիւնը մնացեր է , մանաւանդ թէ Մը-
 կրտութեան ազգու ներդործութիւնը՝

ՅՕԻ . ԻԸ : (1) Մատ. Ժ . 14 , 15 : ՀօԸ .
 Ժ : ան կորնէ . Գ . 2 , 3 : (2) Ի կորնէ . Գ .
 14—17 : Հօյո . ԻԸ . 18 , 19 :

աս խորհուրդը մատակարարողէն կա-
խեալ չէ, ուստի կը դաւանիմք որ
ան եկեղեցիին մէջ մկրտողները՝ նո-
րէն մկրտուելու պէտք չունին : Բայց
սակայն անոր մէջը եղած մոլորութիւն-
ներուն պատճառովը՝ հնար չէ որ մէ-
կը իր երախայն մկրտուելու հոն տանե-
լով՝ անոնց մոլորութիւններէն ազատ
մնայ :

ՅՕԻ . ԻԹ :

Արհաւատամք թէ՛ ճշմարիտ եկեղե-
ցին պիտի կառավարուի մեր Տէրօջը
Յիսուս Քրիստոսի հաստատած կանո-
նին համեմատ⁽¹⁾, իմ թէ՛ Հովիւներ ,
Վ երակացուներ և Սարկաւազներ պի-
տի ունենայ՝ որ անարատ վարդապե-
տութիւնը սորվեցունեն, որ մոլորու-

ՅՕԻ . ԻԹ : (1) Գործ . 7 . 3 , 6 : Լուկ .
7 . 11 , 12 : Իմ Տէ՛ . 7 . Տէ՛ . Իմ . 5—9 ,
Երեմ . 17 :

Թիւնները ուղղեն և սանձեն, որ աղքատներուն և ուրիշ ամէն տառապեալներուն՝ իրենց նեղութիւններուն մէջ օգնեն, և որ Վատուծոյ անունովը ժողովուրդը մէկ տեղ հաւաքեն, մեծերը և պղտիկները վարժելու համար:

ՅՕԴ . 1 .

Կը հաւատամք որ ամէն ճշմարիտ շովիւնները՝ ո՛ւր որ գտնուին, մի և նոյն հեղինակութիւնը և հաւասար իշխանութիւնը ունին⁽¹⁾ մէկ մինակ զլիսով⁽²⁾, մէկ Տէրօջմով, և մէկ Վնդհանրական Վախակոպոսով, որ է Յիսուս Վրիստոս . և ասոր համար մէկ եկեղեցի մը՝ բնաւ չկրնար ուրիշ եկեղեցիի վրայ տէրութիւն կամ իշխանութիւն ունենալը պահանջել:

ՅՕԴ . 1 . (1) Ստր. ի . 26 , 27 : Ժը . 2 — 4 : Կորն. ի . 5 , 7 : (2) Եբ. ի . 22 : Կոր. ի . 18 , 19 :

ՅՕԳ . ԼԵ .

Կըհաւատամք թէ մէկը՝ եկեղեցին
կառավարելու պատիւը ինք իր վրայ
պիտի չառնէ . այլ աս բանը միշտ
ընտրութեամբ ըլլալու է⁽¹⁾ , սրչափ
որ կարելի է , և սրչափ որ Մատուած
խոյլ կուտայ : Մասնկ ըսելնուս գըլ-
խաւոր պատճառը աս է որ , երբեմն
հարկ եղեր է և մեր ժամանակը ևս (որ
եկեղեցւոյ վիճակը ընդմիջեալ էր) որ
Մատուած տարօրինակ կերպով մար-
դիկ հանէ նորէն կանգնելու համար իր
եկեղեցին՝ որ կործանման և տառա-
պանքի մէջ էր : Բայց ինչպէս որ
ըլլայ , կըհաւատամք թէ միշտ աս
ընտրութեան կանոնը պահել պէտք

ՅՕԳ . ԼԵ . (1) Ստ. 19 : Ստ. 15 :
ՅՕԴ . Ժ . 16 : Գարծ . Թ . 21 ,
22 : Դ . 1—3 : Հատ. Ժ . 15 : Տի .
Թ 6

է (²), որ ամէն շովիւները, Վերակացուները և Սարկաւազները՝ իրենց պաշտօնին կոչուելու վկայութիւնը ունենան :

ՅՕԴ ԳԼԽ:

Կըհաւատամք նաև՝ թէ լաւ և օգտակար է որ վերատեսուչ ընտրուածները միշտ խորհուրդ ընեն մեջերնին, թէ ինչ ճամբայ պիտի բռնեն բոլոր ժողովուրդը կառավարելու համար(¹), և սակայն երբէք պիտի չխոտորին մեր Տէր Յիսուսի հրամայած բաներէն(²) : Իայց ասիկայ բնաւ չարդիւր իւրաքանչիւր տեղեր մասնաւոր կարգադրու-

ւն . 5—7 : Եբր . Ե . 4 : (²) Պատմ . ւն . 15 : ւն Տիմ . Գ . 7—10 , 15 :

ՅՕԴ . ԳԼԽ : (¹) Պատմ . ԺԵ . 2 , 6 , 7 , 25 , 28 : Գործ . ԺԸ . 6—8 : ւն Սարգիս . ԺԸ . 7 , 8 : ԺԳ . 12 : (²) ւն Պիտր . Ե . 3 : ւն Սարգիս . ԺԳ . 40 :

Թիւններ ըլլալը՝ ինտոր որ հարկաւոր կըսեպուին զիւրութեան համար :

ՅՕԻ . ԼԳ :

Բայց սակայն կըմերժեմք բոլոր մարդկային հնարքները և ամէն օրէնքները՝ որ Աստուծոյ պաշտօնին համար է ըսելով՝ եկեղեցւոյ մէջ մտցունել , և անոնցմով խղճմտանքներուն կապ դնել կուղեն⁽¹⁾ . այլ կընդունիմք միայն ինչ որ կարևոր է միաբանութիւն ընելու և հաստատելու , և ամէն մէկը՝ առաջինէն մինչև վերջինը հընադանդութեան մէջ պահելու համար : Այսան որոյ պարտիմք հետեիլ Վրիստոսի ըսածին՝ Բանադրանաց վըրայով⁽²⁾ , որն որ կընդունիմք և կը

ՅՕԻ . ԼԳ : (1) Հասով . ԺՂ . 17 , 18 : ին Արքնէ . Գ . 11 : Արք . Թ . 6—8 : Վասդ . Ե . 1 : (2) Արքնէ . ԺԹ . 17 : ին Արքնէ . Ե : ին Տի . ին . 20 :

դաւանիմք թէ հարկաւոր է բոլոր իր
սպարազաներովը :

ՅՕԻ · ԼԴ :

Կը հաւատամք թէ՛ Խորհուրդները
անոր համար սահմանուեր են , որ Մ.ս.
տուժոյ Ռանին աւելի հաստատութիւն
տան , և մեզի աւհաւատչեայ ըլլան⁽¹⁾
Մ.ս.տուժոյ շնորհացը , և աս միջոցով
օգնեն և դիւրութիւն տան մեր հա-
ւատքին , ըստ որում բնական տկա-
րութիւն և խտուրթիւն մը ունիմք . և
թէ այնպիսի արտաքին նշաններ են ա-
նոնք՝ որ Մ.ս.տուժ կը ներդործէ անոնց-
մով իր շողոյն զօրութեամբը , որ
պէս զի ան նշանները զուր բան մը
չըլլան մեզի⁽²⁾ : Մ.ս.տ. ամենայնիւ կըն-

ՅՕԻ · ԼԴ : (1) Ին Կ.բ.ն. Տ. 16, 17 : Տ. 23—34 : Լ.բ.ն. Տ. 13 : Ս.բ.ն. Ին .
26, 27 : Լ.բ.ն. Տ. 11 : Գ.բ.ն. Ին . 16 :
(2) Գ.բ.ն. Տ. 27 : Լ.բ.ն. Ե. 26 :

դունիմք որ անսնց բոլոր էութիւնը և ճշմարտութիւնը Յիսուս Վրիստոսով է, ու թէ որ բաժնուելու ըլլան անկից՝ միայն ստուեր և ծուխ կը մընան⁽³⁾ :

ՅՕԻ . 1Ե :

Միայն երկու Խորհուրդ կընդունիմք՝ որ բոլոր եկեղեցիին սովորական է . առաջինը՝ որ Վկրտութիւնն է, մեր որդեգրութիւնը հաստատելու համար տրուած է մեզի . քանզի ասով Վրիստոսի մարմնոյն հետ կը միաւորիմք⁽¹⁾ որ իր արիւնովը լուացուելով մաքրուիմք և ապա նորոգուիմք սուրբ կեանք մը ստանալով, իր Սուրբ Հոգիին զօրութեամբը⁽²⁾ : Ասե կը հաւատամք որ թէպէտ միայն մէկ անգամ մը կը մ'ըրտուիմք, բայց անոր մէջը մեզի նը-

(²) ՅՕԴ . զ. 63 : Դ . 5 , 6 :

ՅՕԻ . 1Ե : (¹) ՀԵՒԵՏՈՅ . զ . 3 : (²) ՏԵՊ .

չանակեալս յօգուտը⁽²⁾ մինչև վերջը
կըզխմանայ, որպէս զի հաստատուն
կնիք մը ունենանք, Յիսուս Վրիս-
տոս՝ մեզի միշտ արդարութիւն և սըր-
բութիւն ըլլալու⁽³⁾ : Եւրդ՝ թէպէտև
ասիկայ հաւատոյ և ապաշխարութեան
վերաբերեալ խորհուրդ մըն է, այ-
սու ամենայնիւ՝ ըստ որունմ Եստուած
իր եկեղեցիին մէջ կընդունի երախա-
ները իրենց հօրը հետ, վասն որոյ կը-
սեմք թէ հաւատացեալներէն ծնած
որդիները՝ պէտք է որ մկրտուին Յի-
սուս Վրիստոսի իշխանութեամբը⁽⁴⁾ :

ՅՕԴ . 1, 9 :

Կըխաստովանիմք որ Տէրունական
Ընթրիքը (որ երկարող խորհուրդն

ի . 5, 6 : Գործ . իբ . 16 : ⁽²⁾ Ստոր . 7 .
11, 12 : Ստոր . ժի . 16 : ⁽³⁾ Նոր . ի .
1—4, 12, 23 : ⁽⁴⁾ Ստոր . ժի . 14 : և
Կորն . է . 14 :

է) Յիսուս Վրիստոսի հետ ունեցած մեր միութեանը վկայութիւնն է (¹) . որովհետեւ ոչ միայն մէկ անգամ մեզին համար մեռաւ և յարութիւն առաւ , բայց նաև ճշմարտապէս կրկերակրէ ու կրսնուցանէ մեզ իր Մարմնովը և Վրեամբը (²) , որպէս զի ա՛նոր հետ մէկ ըլլանք և իր կեանքը բաշխուի (³) մեզին : Վրդ՝ թէպէտև ինքը երկինքը կը բնակի՞ (⁴) մինչև որ վերստին զայ բոլոր աշխարհը դատելու , այսու ամենայնիւ կը հաւատամք որ իր Հողոյն ծածուկ և անխմանալի զօրութեամբը կրսնուցանէ մեզ ու կրկին ազդործէ իր մարմնովը և արեամբը (⁵) : Իայց կը հաւատամք որ աս բանը հո-

ՅՕԻ . 1, 9 : (¹) Թ . Կ . ր . ն . լ . Ժ . 16 , 17 : Ժ . 24 : (²) Յ . լ . 55 — 57 : (³) Յ . լ . Ժ . 21 , 22 : (⁴) Ս . ր . 1 . Ժ . 19 : Վ . ր . Ժ . 7 . 21 : (⁵) Թ . Կ . ր . ն . լ . Ժ . 16 : Յ . լ . 35 :

Գեորգիանցի կըլլայ . աս ըսելով չէ թէ արդիւնքին և ճշմարտութեան տեղը՝ երևակայութիւն կամ կարծիք կըղընեմք , այլ միայն թէ աս խորհուրդը իր դերազանցութեամբը՝ մեր հասողութեանէն և բոլոր բնութեանէն վեր է : Այլ խօսքով՝ որովհետև երկնային բան մըն է , միայն հաւատքով կրնամք ըմբռնել :

ՅՕԻ . ԼԷ :

Կըհաւատամք (ինչպէս ըսել եմք) որ՝ թէ Տէրունական Ընթրիքին և թէ՛ Ակրտութեան ատենը , Աստուած իրապէս և արդեամբ կուտայ մեզի՝ ինչ որ անոնցմով կերևցունէ : Ալ վասն այսորիկ՝ ան նշաններուն հետ կը միացունեմք ան բանին ճշմարիտ ժառանգութիւնը և վայելումը , որ ան խորհուրդներովը կըներկայացուի մեզի : Աւտի ամէն անոնք՝ որ Վրխատոսի սըր-

բազման սեղանին մաքուր հաւատք կը բերեն իբրև մէկ պատրաստ աման մը , ճշմարտապէս կընդունին՝ ինչ որ ան նշանները կըցուցնեն . բանզի Հիսուս Վրիստոսի Ասարմինը և Վրիւնը՝ հողիին կերակուրը և ըմպելիքն է , ինչպէս որ Հայր և Վինին՝ մարմինին⁽¹⁾ :

ՅՕԴ . 1, Ը .

Ուստի կըհաւատամք որ ջուրը թէ և լոկ տարր մըն է , բայց ստուգիւ կը ցուցնէ մեզի՝ Հիսուս Վրիստոսի արիւնովը մեր հողիին ներքին լուսցումը⁽¹⁾ իր Հողայն ազդուութեամբ , և թէ Հայր ու Վինին որ Վնթրիքին ատենը կըտրուին մեզի , ճշմարտապէս հողևոր կերակուր մըն է ,

ՅՕԴ . 1, Է . ⁽¹⁾ Թ Կորնթ . ԺԹ . 28 , 29 ,

Հ)ճ . Դ . 51 :

ՅՕԴ . 1, Ը . ⁽¹⁾ Հայր . Դ . 3 ,

ըստ որում յանդիման կըցուցընեն մեզին որ Յիսուս Վրիստոսի Սարմինը մեր կերակուրն է, և իր Վրիւնը մեր ըմպելիքը⁽²⁾ : Այսան որոյ կըհերքեմք Արեւակայական հերետիկոսները՝ որ այսպիսի նշանները չեն ընդունիր քանզի Տէրն մեր Յիսուս Վրիստոս այսպէս կըսէ . Վա՛հ՜ք Վերե՛ք, ա՛նիմո՛յ ե ի՛մ Սարմին : Վա՛նիմո՛յ ե ի՛մ Վրիւն : Եւ ի՛նչո՞ւր ա՛ն ի՛մեցե՛ք ա՛նի՛ե⁽³⁾ :

ՅՕԳ . ԼԹ :

Կըհաւատամք թէ՛ Մատուծոյ կամքը աս է որ աշխարհս օրէնքներով և կանոններով կառավարուի, որպէս զի սանձ մը ըլլայ մարդոց անկարգ բաղձանքները զսպելու . և ասոր համար հաստատեր է (Թագաւորութիւն

(2) ՀՅՕԷ . ԻՂ . 51 : ԻՍ Կրիւն . ԺԻՍ . 27 :

(3) Սարմին . ԻՂ . 26 : ԻՍ Կրիւն . ԺԻՍ . 24, 25 :

նէրը , Հասարակապետութիւնները
 և ամէն տեսակ իշխանութիւնները ,
 թէ՛ ժառանգական՝ և թէ՛ ուրիշ կերպ ,
 ունակ ինչ որ արդարութեան կրօն-
 րաբերի . և թէ կուզէ որ ինքը անոնց
 հեղինակ ճանչցուի ⁽¹⁾ : Աստուծոյ
 ուա՛ իշխանութիւն ունեցողներուն
 ձեռքը սուր տուաւ որ զպէն , ո՛չ մի-
 այն Աստուծոյ պատուիրանքներուն
 Երկրորդ Տախտակին դէմ գործուած
 մեղքերը , այլ Առաջինին դէմ գոր-
 ծուածներն ալ : Աւրեմն ո՛չ միայն
 վասն Աստուծոյ համբերել պէտք է՝
 որ իշխանները հրամայեն մեղի . այլ
 և կրօնայէ ամենայն ակնածութեամբ
 պատուել զանոնք , Աստուծոյ փոխա-
 նորդները և պաշտօնատարները հա-
 մարելով , որոնք ինքը դրեր է օրինաւոր

ՅՕԴ . 10 : (1) Եւէյ . Ժք . 20 , 21 :
 Խորէ . Ժէ . 24 , 25 : Հասկ . Ժդ . 1—5 :

և սուրբ պաշտօն մը վարելու համար⁽²⁾ :

ՅՕԴ . Ի .

Ուրեմն կընդունիմք թէ՛ պէտք է մեզի անոնց օրէնքներուն և կանոններուն հնազանդիլ, գլխահարկ, տուրք և ուրիշ պարտքերը վճարել⁽¹⁾, և յօժարամիտ հպատակութեան լուծը կրել, թէև քրիստոնեայ չըլան անոնք . միայն թէ Վատուծոյ միահեծան թագաւորութիւնը իր ամբողջութիւնը ունենայ⁽²⁾ : Այսան որոյ կըզարչիմք անոնցմէ՞ որոնք կուզեն թէ Վշխող չըլայ, և կըջանան ընչից հասարակութիւն և հաւասարութիւն ընել, և արդարութեան կարգը և կանոնը խանգարել :

(¹) ԹՊԷՊ . ք . 13, 14 : ԹՏԵՏ . ք . 2 :

ՅՕԴ . Ի : (¹) Ո՞ւրեմն . Իք . 21 : (²) ՎՊԷԺ . ք . 19 :

284
Σ-37

5069

ԱՆԳՂԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՒՆ

ՀԵՒՆՏՈՅ

ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԻՆՐ,

ՅՕԳՈՒԵՆՕՆԵՐԸ



ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

ՅԵՆԳՂԻԱԿԱՆ ԻՆԵՐԻՆ

Ի ԶՄԻՒՌՆԻԱ

Ի ՅԳԱՐԱՆԻ ԿՈՒԼԻԵԼՄՈՍ ԿՐԻՉՉԻՐԻ

1846

2140-689

5069-uh



1551-72

ԱՆԳՂԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ

ԸՆԳՈՒՆԱԾ ՀԱՒԱՏՈՅ

ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԻՆԸ

ՅՕԳՈՒԱԾ ՆԵՐԸ

ՅՕԳ . Է

Սուրբ Երրորդութեան վրայ :

Սխայն մէկ կենդանի ու ճշմարիտ Մտտուած մը կայ , յաւիտենական , ո՛չ մարմին ունի , ո՛չ մատուցք և ո՛չ կիրք . անհուն է զօրութեամբ , զիտութեամբ , և բարութեամբ . Արարիչ ու սրահսպանիչ ամէն բանելուն , թէ երևելիաց և թէ աներևութից : Աւաս Մտտուածութեան միութեանը մէջ երեք անձինք կան , մէկ էութեամբ , զօրութեամբ ու յաւիտենականութեամբ , Հայրը , Արդին , ու Սուրբ Հոգին :

ՅՕԻ . Բ

Մտուածոյ Ռանին կամ Արդին վրայ , որ ճշմարիտ
մարդ եղաւ :

Արդին՝ որ շօրը Ռանն է , յաւիտեանէն 'ի շօրէ ծնեալ , ճշմարիտ ու յաւիտենական Մտուածը , մէկ էութեամբ շօրը հետ՝ մարդկային բնութիւն առաւ օրհնեալ կուսին արդանդին մէջ անոր գոյութենէն . անանկ որ երկու ամբողջ և կատարեալ բնութիւններ , յի՞ Մտուածութիւն և մարդկութիւն անբաժանելի միաւորութեամբ միաւորեցան մէկ անձին մէջ , որով եղաւ մէկ Քրիստոս՝ ճշմարիտ Մտուած ու ճշմարիտ մարդ . որ ստուգապէս չարչարուեցաւ , խաչեցաւ , մեռաւ ու թաղուեցաւ , իր շայրը մեղի հետ հաշտեցընելու , ու պատարագ մը ըլլալու՝ ոչ միայն սկզբնական մեղքին համար , այլ նաև մարդոց ամէն գործնական մեղքերուն համար :

Յ Օ Դ . Դ

Քրիստոսի դժոխքը իջնալուն վրայ :

Քրիստոս՝ ինչպէս որ մեռաւ ու
Թաղուեցաւ մեղի համար , անանկ ալ
հաւատալու ենք որ ինքը դժոխքն ալ
իջաւ :

Յ Օ Դ . Դ

Քրիստոսի յարութեանը վրայ :

Քրիստոս ճշմարտապէս ՚ի մահուա-
նէ յարութիւն առաւ , ու նորէն իր
մարմինը զգեցաւ , միտով ու ոսկորով ,
ու մարդկային բնութեան կատարելու-
թեանը վերաբերեալ ամէն բաներո-
վը . որով ինքը երկինքը համբարձաւ ,
ու հոն կրնատի՝ մինչև որ վերջին օրը
վերստին գայ բոլոր աշխարհը դատե-
լու :

ՅՕԴ • Ե

Սուրբ Հոգին՝ վայ :

Սուրբ Հոգին՝ բղխեալ Հօրմէն ու Արդիէն , էութեամբ , մեծութեամբ ու փառքով մէկ ըլլալով Հօրը ու Արդիին հետ , ճշմարիտ ու յաւիտենական Մատուած է :

ՅՕԴ • Թ

Թէ՛ Սուրբ Գիրքը բաւական է փրկութեան համար :

Սուրբ Գիրքը կը պարունակէ փրկկութեան վերաբերեալ բոլոր հարկաւոր բաները . անանկ որ՝ որ և իցէ բան որ անոր մէջը չկայ , կամ անով չհաստատուիր , պէտք չէ՛ պահանջել որ մէկը հաւատայ ան բանին՝ հաւատոյ մասի մը պէս , կամ կարծել թէ փրկութեան հարկաւոր է : Սուրբ Գիրքը ըսելով՝ մենք կը հասկընանք ան կանոնաւոր դրբերը Հին և Նոր կտա-

կարանին , որուն վաւերականութեանը վրայ երբէք տարակոյս մը եղած չէ եկեղեցիին մէջ :

Ամենաւոր գիրքերուն անունները ու թիւերը :

Ճննդոյ , Ելից , Ղլտացոց , Թուոց , ի ()ըինաց , Յեսուայ , Դատաւորաց , Հուութ , ան թաղաւորաց , ի թաղաւորաց , զ թաղաւորաց , զ թաղաւորաց , ան Սնացորդաց , ի Սընացորդաց , ան Եղրաս , ի Եղրաս , Եսթերայ , Յովբայ , Սաղմոսաց , Լուակաց , Ժողովօղ , Երզ երզոց , Չորս մեծ մարգարէներ , Տասներկու փոքր մարգարէներ : Իսկ մէկալ գիրքերը (ինչպէս որ Հերոնիմոս կըսէ ,) վարուց օրինակի և կըթութեան համար կը կարդայ եկեղեցին , սակայն մէկ վըկայութիւն մը չառնէր անոնցմէ՝ վարդապետութիւն մը հաստատելու համար : Եւ ասոնք են ան գիրքերը . զ գիրք Եղրասայ , զ գիրք Եղրասայ :

Տորիթ , Տուդիթ , — Լևելորդ գըլլուխները Լսթերի , — Իմաստութեան . Լկղէսիաստիկոս՝ որ է Սիրաք , Վարգարէութիւն Բարութայ , ()ըհնութիւն երից մանկանց . Շուշանայի , Բէլայ և Վիշապին պատմութիւնը , աղօթք Վանասէի , ան Վակարայեցւոց , և Վակարայեցւոց : ‘Սոր Կտակարանին ամէն զիրքերը ինտոր որ ընդհանրապէս ընդունուած են , մենք ալ այնպէս կընդունինք և կըլյարդենք զանոնք իբրև կանոնական :

ՅՕԻ . Է :

Հին Կտակարանին վրայ :

Հին Կտակարանը հակառակ չէ ‘Սորին . ինչու որ թ է Հինին և թէ ‘Սորին մէջը՝ յաւիտենական կեանք կընծայուի մարդկային սեռին Վրիստոսով՝ որ մի միայն միջնորդն է Լստուծոյ և մարդոց մէջ տեղը՝ Լստուած և

մարդ ըլլալով : Աւտի մտիկ ընելու
 չենք անոնց , որոնք կրկեղծեն թէ նա
 հասկանները միայն ժամանակաւոր
 խոստմունքներու յուսացին : Թէպէտ
 և Մովսէսի ձեռքով Աստուծմէ տրը
 ուած ձէսերուն ու արարողութիւննե
 րուն վերաբերեալ պատուիրանքները
 չեն պարտաւորեր քրիստոնեայ մը որ
 բռնէ զանոնք , ոչ ալ անոր քաղա
 քական կանոնները հարկաւ ընդունե
 լու է մէկ քաղաքական կառավարու
 թիւն մը , սակայն բնաւ մէկ քրիս
 տոնեայ մը ազատ չէ ան պատուի
 րանքներէն որ բարոյական օրէնք կը
 կոչուի :

ՅՕԴ . . Ը

Երեք Հանդանակներուն վրայ :

Երեք Հանդանակները՝ Աիկիական ,
 Եթանասեան , և ան որ հասարակօրէն
 Աւաքելոց կանուանի , պարտինք ամ
 բողջ ընդունիլ ու հաւատալ անոնց .

վասն զի անոնք կը հաստատուին Սուրբ
Գրքին ամենաճշմարիտ վկայութիւն
ներովը :

ՅՕԳ • Թ

Սկզբնական մեղքին վրայ :

Սկզբնական մեղքը չէ թէ Մ. դամի
օրինակին հետեւին է, (ինչպէս որ Պե-
ղագեանները զուր տեղը կըսեն,) բայց
անիկայ Մ. դամի սերունդէն ծնած ամէն
մարդու բնութեանը մէջի ապականու-
թիւնը և պակասութիւնն է, որով
մարդս շատ հեռացած բուն արդարու-
թենէն, ու բուն իր բնութեամբը հա-
կամիտեալ է չարութեան, անանկ որ
մարմինը միշտ կըրցանկայ հողիին հա-
կառակ. անոր համար աշխարհիս մէջ
ծնած ամէն մարդու աս (բնական ա-
պականութիւնը) արժանի է Մտուծոյ
սրտիժին և դատապարտութեանը.
աս բնութեան ապականութիւնը կը
մնայ մինչև անգամ նորէն ծնածնե-

բուն մէջն ալ . անանկ որ՝ մարմնոյ
 ապականութիւնը՝ հոնարէն (Սրօնի-
 մա սարքօս) ըսուած , որն որ ոմանք
 կըմեկնեն իմաստութիւն մարմնոյ , ո-
 մանք՝ հեշտասիրութիւն , ոմանք՝
 մարմնոյ յօծարութիւն , ոմանք ալ
 մարմնոյ ցանկութիւն , Մտուծոյ օ-
 բէնքին հնազանդ չէ : Կը թէպէտ
 դատապարտութիւն չկայ անոնց , որ
 կըհաւատան ու կըմկրտուին , բայց
 Մաքեալը կըխոստովանի թէ՛ ցան-
 կութիւնը ինքիրմէն մեղքին բնութիւ-
 նը ունի :

ՅՕԴ . Ժ

Մտա կամայ վրայ :

Մարդուն վիճակը Մտմին իյնա-
 լէն՝ի վեր այնպէս է , որ իր բնական
 կարողութիւնովը ու բարի գործքերու
 վը չկրնար դառնալ , ու ինքզինքը՝ հա-
 լատքը ընդունելու ու զՄտուած կան-

չելու սլատրաստել : Բասուծոյ ընդունելի և հաճոյական բարի գործքեր գործելու կարողութիւն չունինք , թէ որ Բասուծոյ շնորհքը Վրխատասով մեզ չսլատրաստէ որ բարի կամք ունենանք , և թէ որ անիկայ մեր մէջը չներդրուի , երբոր ան բարի կամքը ունինք :

ՅՕԻ . ԺԵ

Մարդուն արդարութեանը վրայ :

Մենք արդար կը համարուինք Բասուծոյ առջևը՝ միայն հաւատքով մեր ճէր Բասուծոյ Ախուս Վրխատասի արժանաւորութեանը համար , և ոչ բուն մեր գործքերուն կամ արժանաւորութեանը համար . ուստի մեր հաւատքով արդարանալը խիստ ողջամիտ և մխիթարութեամբ լեցուն վարդապետութիւն մըն է , ինչպէս որ շատ աղէկ բացատրուած է Վրդարութեան ճառին մէջ :

ՅՕԻ • ԺԻ

Բարի գործքերուն վրայ •

Թե՛սդէտեւ ան բարի գործքերը որ հաւատոյ պտուղներն են ու արդարու թեան հեռեւութիւնները, չեն կրնար քաւել մեր մեղքերը ոչ ալ Մատուծոյ անաչառ դատաստանին բաւական դալ, սակայն անոնք ընդունելի կըլլան Մատուծոյ Վրիստոսով, և ՚ի հարկէ ճշմարիտ ու կենդանի հաւատքէ, յաւաջ կուգան, անանկ որ անոնցմով կենդանի հաւատք մը անանկ յայտնի կըճանչցուի, ինտոր որ ծաւ մը իր պտուղէն :

ՅՕԻ • ԺԻ

Երդարանային առաջ եղած գործքերուն վրայ :

Ան գործքերը՝ որ մարդիկ դեռ Վրիստոսի շնորհքը ու Սուրբ Հոգի-

ին ներգործութիւնը չունեցած կը-
 նեն, Յիսուս Քրիստոսի վրայ եղած
 հաւատքէն աւաջ եկած չքաւնուն
 համար՝ հաճելի չեն Մատուծոյ . ոչ
 ալ կըստարատեն զմարդիկ շնորհ-
 քը բնդունելու՝ ի՞նչ արժանաւոր ըլլա-
 լու «համագործ շնորհքին»*, դպրոցա-
 կան աստուածաբաններուն ըսածին
 պէս : Կանաւանդ՝ որովհետեւ անոնք
 Մատուծոյ ուղածին ու հրամայածին
 պէս կատարուած չեն, անոր համար
 չենք տարակուսիր թէ անոնք մեղքի
 բնութիւն ունին :

Յ Օ Դ . Ժ Դ .

Չափազանցութեան գործքերուն վրայ :

Կամաւոր գործքերը, բայցի Մա-
 տուծոյ հրամայածներէն, (Չափազան-
 ցութեան գործքեր կոչուած,) չեն

*Cratia Congrua

կրնար սորվեցընել մարդիկ աւանց
 յանդգնութեան և ամբարշտութեան :
 Ասան զի մարդիկ կրցուցընեն անոնց
 մով , թէ իրենք ոչ միայն Մատուծոյ
 պարտաւոր եղածին չափ կըհատուցա-
 նեն Մատուծոյ , բայց անոր սիրոյն հա-
 մար՝ իրենց պարտաւորութենէն շատ
 աւելի կընեն : Իսկ ընդհակառակն
 յայտնապէս կըսէ Քրիստոս . «Ար ա-
 տին ձեզի հրամայուած բաներն որ ը-
 նէք՝ ըսէք թէ : Կենք անպիտան ծա-
 ւաներ ենք” :

ՅՕԴ . ԺԵ

Քրիստոս միայն աւանց մեղաց :

Քրիստոս՝ ճշմարտապէս մեր բնու-
 թիւնը աւաւ , մեզի նման եղաւ ամէն
 բաներով բացի մեղքէն , ուրկէց
 յայտնապէս ազատ էր թէ իր մարմնով
 և թէ իր հոգւովը : Կնքը եկաւ ա-
 նարատ Վատն ըլլալու , որ ինքզինքը

միանգամ սրտարագ մատուցանելով
աշխարհի մեղքը վերցունէ, և անոր
մէջ, ինչպէս որ կրսէ Սուրբ Յօհան-
նէս, մեղք չկար: Բայց մենք ամէննիս
թէպէտև մ'ըտուած ու նորէն ծնած
ենք Քրիստոսի մէջ, տակաւին շատ
բաներու մէջ կրմեղանջենք. և թէ որ
բանք որ մենք մեղք չունինք, ինք-
ղինքնիս կրխարենք ու ճշմարտութիւն
չկայ մեր մէջը:

ՅՕԴ . ԺԳ.

Մկրտուելէն ետքը գործուած մեղքն զրոյ:

Չէ թէ իւրաքանչիւր մահացու
մեղք մկրտուելէն ետքը գործուած՝
Սուրբ Հոգւոյն դէմ մեղք է և աննե-
րելի: Վասն որոյ պէտք է որ ուրա-
նանք զդ ջման աբուխը անոնց՝ որ մը-
կրտուելէն ետքը մեղքի մէջ կի-
նան: Սուրբ Հոգին բնգունելէս ետ-
քը կարելի է որ մեղի տրուած շնորհ-


քէն հեռանանք ու մեղքի մէջ իյնանք ,
 ու կարելի է որ վերատին Մատուծոյ
 շնորհքովը դառնանք և ուղղենք մեր
 վարքը : Աւստի դատապարտութեան
 արժանի են անոնք որ կըսեն թէ ալ
 մեղք չեն կրնար դործել քանի որ հոս
 կապրին , կամ որ ճշմարիտ ապաշխա-
 րողներուն թողութեան տեղ ըլլալը
 կուրանան :

22
 Կ-ՏԻ

ՅՕԴ . ԺԷ :

*Նախասահմանութեան և ընտրութեան վրայ :

Փրկուելու նախասահմանութիւնը
 Մատուծոյ յաւիտենական դիտաւորու-
 թիւնն է , որով ինքը աշխարհիս հի-
 մնադրութենէն առաջ հաստատ վրձ-
 ուեր է իր մեղմէ ծածուկ խորհուրդո-
 վը՝ մարդկային ցեղէն Վրիստոսով
 ընտրուածները անէծքէ ու դատապար-
 տութենէ փրկելու , և զանոնք պա-
 տուոյ ամաններու պէս՝ յաւիտենական



վերկութեան հասցունելու Վ. քիատոս-
 սոյ : Աւստի անոնք որ կըզորդարուին
 Վստուծոյ աս դերագոյն շնորհքովը ,
 յարմար ժամանակին անոր Հողիին
 ներգործելովը կըկանչուին Վստու-
 ծոյ դիտաւորութեանը պէս : Ենոնք
 Շնորհքին միջնորդութիւնովը կըհը-
 նազանդին աս կոչմանը , ձրի կարգա-
 րանան , որդեգրութեամբ Վստուծոյ
 որդիքը կըլլան , իր միտմին Արդւոյն
 Յիսուս Վ. քիատոսի սրտակերին պէս
 կըլլան , բարեպաշտութեամբ կըյա-
 ռաջանան բարի գործոյ մէջ . և վեր-
 ջապէս կըհասնին Վստուծոյ ողորմու-
 թիւնովը յաւիտեանական երջանկու-
 թեան :

Ինչպէս որ բարեպաշտ անձինքը՝
 որոնք կըզգան Վ. քիատոսի Հողւոյն ի-
 լինոց մէջ գործելը , սպաննելով մար-
 մինին գործքերը ու անոր երկրաւոր
 անդամները , և իրենց մտքերը վեր-
 ցունելով դէպի վեր երկնային բանե-

բուն, նախասահմանութեան ու Վրխատասով իրենց ընտրութեան վարդաօրէնութեամբը՝ բաղքը, հաճելի ու անպատմելի միտթարութիւն կունենան, որովհետեւ ան վարդապետութիւնը մեծապէս կը հաստատէ, ու կը զօրացունէ Վրխատասով յաւիտենական փրկութիւնը վայելելու հաւատքնին, ու անոնց առ Մատուած ունեցած սէրը եւ անդադին կը բորբոքի, անանկ ալ զուր հետամուտ եղող ու մարմնասէր մարդոց՝ որ Վրխատասի Հողիէն զուրկ են, Մատուծոյ նախասահմանութեան վճիռը միշտ իրենց աչքին առջևը ունենալին, խիստ վտանգաւոր կործանում մըն է, որով Մատանան կամ յուսահատութեան մէջ կը ձգէ զանոնք, կամ այնպիսի անպարկեշտ վարքի մը մէջ՝ որն որ յուսահատութեան չափ վտանգաւոր է:

Դարձեալ՝ մենք այնպիսի կերպով մը պարտինք ընդունիլ Մատու-

Տոյ խոստումները՝ ինչպէս որ ընդ-
հանրապէս մեզի ցուցուած են Սուրբ
Գրքին մէջ . և մեր գործքերուն մէջ
պարտինք Մտուծոյ ան կամքին հե-
տևիլ , որ յայտնապէս մեզի կը ցուցուի
Մտուծոյ Խօսքին մէջ :

Ե Օ Գ . ԺԸ

Միայն Վրիստոսի անունովք յաւիտենական փրկու-
թիւն ստանալու վրայ :

Անիծեալ պիտի ըլլան նաև անոնք ,
որ կրջանդգնին ըսելու՝ Թէ ա՛նէն մարդ
իր բռնած կամ դաւանած օրէնքէն կամ
կրօնքէն պիտի փրկուի , միայն Թէ ա-
նիկայ ժիր ըլլայ ան օրէնքին ու բնու-
թեանը լոյսին համեմատ կեանք վարե-
լու : Այսան զի Սուրբ Գիրքը կը ցու-
ցընէ մեզի միայն Հիսուս Վրիստոսի
անունը , որով մարդ պիտի փրկուի :

ՅՕԴ . ԺԹ

Եկեղեցին վրայ :

Քրիստոսի տեսանելի եկեղեցին է հաւատացելոյ ժողով մը , ուր որ Աստուծոյ Սուրբ Խօսքը կրթարողուի , և սուրբ Խորհուրդները Քրիստոսի հըրամայածին պէս ըստ արժանոյն կը կատարուին ըսլոր հարկ եղած բաներովը :

Ինչպէս որ Արուսաղէմի՝ Աղէքսանդրիայի և Անտիոքայ եկեղեցիները սըլսալած են , առանկ ալ շուովմայ եկեղեցին սխալած է , ոչ միայն վարուց ու արարողութեան եղանակին մէջ , այլ նաև հաւատոյ նիւթերուն մէջն ալ :

Յ Օ Դ . Ի

Եկեղեցին իշխանութեանը վրայ :

Եկեղեցին կարողութիւն ունի ծէսեր կամ արարողութիւններ սահմանելու , և իշխանութիւն ունի հաւատոյ վիճաբանութեանց մէջ . բայց ՚ի վերայ այսր ամենայնի իրաւունք չունի բան մը հաստատել որ Աստուծոյ գրուած Խօսքին դէմ է , և բնաւ չկրնար Սուրբ Գրքին մէջ մէկ տեղ մը անանկ մեկնել , որ ուրիշ տեղի մը հակառակ ըլլայ : Աստի թէպէտ Եկեղեցին Սուրբ Գրքին պաշտպանը ու վկան է , բայց ինտոր որ պարտի անոր դէմ բան մը չմեկնել , անանկ ալ պարտի չտիպել բացի անկէջ բան մը հաւտացունել տալու , փրկելութեան հարկաւոր եղածի պէս :

ՅՕԴ · ԻԵ

Բնդհանուր ժողովքներուն իշխանութիւնը :

Բնդհանուր ժողովքները՝ առանց իշխաններուն հրամանին կամ կամայքը չեն կրնար մէկ տեղ ժողովուիլ : Աւերբոյր մէկտեղ կուզան, որովհետեւ անիկայ լսի մարդոց ժողով է, ու չէ թէ ամէնը Սուրբ Հոգին ու Մատուծոյ Խօսքը իրենց մէջը ունին, իրաւ կըրնան սխալիլ, և երբեմն սխալեցան, նաև Մատուծոյ վերաբերեալ բաներուն մէջ : Աւստի ինչ որ անոնք կը հաստատեն թէ փրկութեան հարկաւոր է, ամենեւին իշխանութիւն կամ զօրութիւն չունին, մինչև որ չցուցուի թէ անոնք Սուրբ Գրքէն առնուած են :

ՅՕԴ . ԻԻ

Վաւարանին վրայ :

Հառվմէական վարդապետութիւնը՝ քաւարանին , ներողութեանց , պատկերներու և մասունքներու երկրպագութիւն և պաշտօն մատուցանելու ու նաև սուրբերուն բարեխօսութեանը վրայով , զուր տեղը հնարուած բան մըն է , ու Սուրբ Վրոյ վկայութեամբ ի հաստատուած չքլայէն զատ՝ Աստուծոյ Խօսքին ալ հակառակ է :

ՅՕԵ . ԻԳ

Եկեղեցիին մէջ պաշտօնատարութեան վրայ :

Ամենեին օրինաւոր չէ որ մէկ մարդ մը եկեղեցիին մէջ հրապարակաբար ողելու կամ խորհուրդները մատակարարելու պաշտօնը իր վրայ առնէ , մինչև որ ըստ օրինի չկանչուի ան :

պաշտօնին, և զանիկայ կատարելու
 չխրկուի: Այլ մենք ալ ըստ օրինի
 կանչուած ու խրկուած համարելու
 ենք զանոնք, որ սա զործին համար կը
 կանչուին ու կընտրուին ան մարդոց
 մէջ, որ եկեղեցիին մէջ հրապարակաւ
 կաւ իշխանութիւն ընդունած են,
 պաշտօնեաներ անուանելու ու խրկե-
 լու Տէրոջը Ե. յգիին մէջ:

Յ Օ Դ . Ի Դ

Այնչեցիկն մէջն ժողովուրդին հասկըցած լեզու-
 զն խօսելու վրայ:

Թէ Բ, ստուծոյ Խօսքին և Թէ նախ-
 նի եկեղեցիին սովորութեանը յայտ-
 նապէս հակառակ բան մըն է, Այն-
 ղեցւոյ մէջ այնպիսի լեզուով մը հրա-
 պարակաւ աղօթք ընել կամ սուրբ
 Խորհուրդին պաշտօնը կատարել, որ
 ժողովուրդը չհասկընար:

ՅՕԴ . ԻԵ

Խորհուրդներուն վրայ :

Խորհուրդները՝ Վրիտանիայի սահմանադրուած են , ոչ միայն քրիստոնէից զաւանութեանը նշանները կամ կնիքը ըլլալու , այլ մանաւանդ շնորհաց ու Վստուծոյ մեղի ցուցրցած բարի կամեցողութեանը հաստատ գրանները ըլլալու , որով ինքը աներևութաբար կրգործէ մեր մէջը , ու ոչ միայն կրկենդանացունէ , այլ նաև կրգորացունէ ու կըհաստատէ մեր հաւատքը իր վրայ :

Մեր Տէրոջմէն Վրիտանիայի երկու խորհուրդ կան Վետարանին մէջ , քի՛ Վկրտութիւն և Տէրունական Վնթրիքը :

Մն հինգը՝ որ հասարակօրէն խորհուրդ կրկոչուին , քի՛ Վրոշմ , Վսլաշխարտութիւն , Կարգ , Պսակ ու Վեր-

ջին () ծուփն , Լ՛ւհտարանի խորհուրդ-
 ները համարուելու չեն . վասն զի ա-
 սոնցմէ մէկ քանին Լ՛ուսփելոց ըրած-
 ներուն ծուփ նմանութիւններն են , և
 մէկ քանին ալ ուրիշ բան չեն , բայց
 միայն վարուց վիճակներ Սուրբ Արոց
 մէջ Թոյլութեան եղած . բայց սա-
 կայն ասոնք խորհուրդի բնութիւնը
 չունին՝ ինչպէս Վկարութիւնը ու Տէ-
 բունական Բնութիւնը , Լ՛ստուծմէ հաս-
 տատուած յայտնինչան մը կամ արա-
 բողութիւն մը չունենալուն համար :

Քրիստոս չէ թէ ան խորհուրդները
 սահմանեց որ մարդիկ անոնց վրայ
 ապշելով նային կամ առդին անդին
 տանին պտըտցունեն , հասցա որ մենք
 ըստ արժանւոյն գործածենք զանոնք :
 Լ՛ւ միայն անոնք որ արժանաւորու-
 թեամք կրնգունին զանիկայ , ողջա-
 միտ արդիւնք կամ գործողութիւն մը
 կունենան իրենց մէջը : Բայց անոնք որ
 անարժանապէս կրնգունին՝ ինքզինք-

նուն դատաստարտութիւն կընդունին ,
 ինչպէս որ կըսէ սուրբն Պօղոս :

ՅՕԴ . ԻՕ.

Պաշտօնեաներուն անարժանութիւնը Խորհուր-
 գին զօրութիւնը չնախաներ :

Թէպէտև տեսանելի եկեղեցիին
 մէջ չարերը միշտ բարիներուն հետ
 խառնուած կըլլան , և երբեմն չարե-
 րը դերագոյն իշխանութիւն ունին Վս-
 տուածային Խօսքին ու Խորհուրդներու
 մատակարարութեանը պաշտօնին մէջ ,
 այսու ամենայնիւ որովհետև անոնք
 չէ թէ իրենց անունովը՝ այլ Վրխատ-
 սի անունովը կըկատարեն իրենց պաշ-
 տօնը , և անոր յանձնարարութիւնովը
 ու իշխանութիւնովը կըսպասաւորեն ,
 անոր համար մինք ալ կրնանք ընդու-
 նիլ անոնց պաշտօնատարութիւնը ,
 թէ Ըստուծոյ Խօսքը լսելով և թէ
 Խորհուրդները ընդունելով : Վանդի

անոնց չար ըլլալովք՝ ոչ Քրիստոսի սահմանադրութեան արդիւնքը կը վերնայ, ոչ ալ Աստուծոյ շնորհաց պարզեանքը կը ստիպին անանկներէն՝ որոնք հաւատքով ու արժանաւորապէս կը նդունին իրենց մատակարարուած խորհուրդները, որոնք իրենց արդիւնքը կունենան Քրիստոսի սահմանադրութեանը ու խոստամունքին համար, թէ և զանոնք մատակարարողները չար մարդիկ ըլլան :

Բայց սակայն եկեղեցւոյ կարգադրութեանը վերաբերեալ է չար պաշտօնեաներուն քննուիլը, իրենց յանցանքը դիտարկներէն ամբաստանուիլը, և վերջապէս յանցաւոր դրանու տրուիլ արդար դատաստանով իրենց իշխանութենէն զրկուիլը :

ՅՕԴ · ԻԷ

Մկրտութեան վրայ :

Մկրտութիւնը ոչ միայն կնիք մըն է դաւանութեան ու նշան մը տարբերութեան, որով քրիստոնեայ անձինք չմկրտուածներէն կը զատուին, այլ նաև անիկայ վերստին ծննդեան կամ նորոգութեան նշան մըն է, որով անոնք որ ուղիղ կերպով մկրտութիւնը կընդունին՝ իբրև մէկ գործիքով մը պատուատած կըլլան եկեղեցիին հետ : Մեղայ թողութեան ու Սուրբ Հոգիով Մատուծոյ որդիները ըլլալնուս որդեգրութեան խոստումնքները յայտնապէս կընշանակուին ու կը կնքուին, հաւատքը կը զօրանայ, ու Մատուծոյ մատուցուած աղօթքին զօրութիւնովը շնորհքը կաճի : Փոքր տղայոց մկրտութիւնը ամենեւին մէկ կերպով մը վերցունելու չէ եկեղեցիէն, վասն զի

Վրիստոսի սահմանադրութեանը խիստ
համեմատ է :

ՅՕԴ · ԻԸ

Տերունական Մեթրիքին վրայ :

Տերոջը Մեթրիքը չէ թէ միայն
ան սիրոյն նշանն է որ Վրիստոսեայք
պէտք է որ մէջերնին մէկզմէկու վրայ
ունենան , այլ մանաւանդ Վրիստոսի
մահուամբը մեր փրկագործութեանը
մէկ խորհուրդն է . անանկ որ արդա-
րապէս ու արժանապէս ու հաւատքով
հաղորդ եղողներուն , ան հացը՝ որ
մենք կրկտրենք , Վրիստոսի մարմի-
նին հաղորդութիւնն է , և նմանապէս
ան օրհնութեան գաւաթը Վրիստոսի
արիւնին հաղորդութիւնն է :

Գոյափոխութիւնը (կամ հացին
ու գինին գոյութեանը փոխուիլը ,)
Տերոջը Մեթրիքին մէջ՝ չկրնար մէկը
Սուրբ Վերքէն ցուցնել , հասլա ա-

Նոր սլարդ խօսքերուն հակառակ է ,
կրեղծանէ խորհուրդին բնութիւնը ,
ու շատ աւելորդապաշտութիւններու
ալ աւիթ տուած է :

Հաղորդութեան ատեն Վրիստոսի
մարմինը կը տրուի , կառնուի , ու կը
ճաշակուի , երկնային ու հողեոր եղա-
նակով մը . և ան միջոցը՝ որով Վր-
րիստոսի մարմինը կառնուի ու կը ճա-
շակուի Րնթրիքին մէջ՝ հաւատքն է :
Վրիստոս Տէրունական Րնթրիքը
չաահմանեց որ անիկայ պահէն , սը-
տըտցունեն , վեր վերցունեն և պաշ-
տեն :

ՅՕԴ . ԻԹ

Մն շար մարդիկներուն վրայ՝ որոնք Վրիստոսի
մարմինը չեն ճշակեր Հաղորդութիւն տուած ա-
տեննին :

Չար մարդիկը ու կենդանի հաւատք
չունեցողները թէև մարմնապէս ու
յայտնապէս կը ծամեն իրենց ակրանն

րով Վրխատոսի մարմնոյ և արեանը
խորհուրդը՝ ինչպէս որ սուրբն () զոս-
տինոս կըսէ, բայց բնաւ մէկ կերպով
մը հաղորդ չեն ըլլար Վրխատոսի .
այլ յաւէտ իրենց դատասարտու-
թեանը համար կուտեն ու կրխմեն ա-
սանկ մեծ բանի մը նշանը կամ խոր-
հուրդը :

ՅՕԴ . 1.

Հաղորդութեան աստն երկու տեսակին տրուելուն
վրայ :

Տէրոջը Վաւաթը աշխարհական
ժողովուրդին ալ տալ պէտք է . վասն
զի Տէրոջը խորհուրդին երկու մա-
տենքն ալ Վրխատոսի սահմանադրու-
թեանը ու հրամանին համեմատ, հա-
ւասարապէս ամէն քրիստոնեաներուն
պէտք է տալ :

ՅՕԴ · ԼԵ

Քրիստոսի միանգամ պատարագ ըլլալը խաչին
վրայ :

Քրիստոսի միանգամ պատարագ ըլլալը՝ կատարեալ փրկութիւն , քա-
ւութիւն և հատուցում է բովանդակ
աշխարհի բոլոր մեղքերուն համար ,
թէ սկզբնականին և թէ զործնակա-
նին համար . և չկայ ուրիշ հատու-
ցում մը մեղաց համար բացի ան-
կէց : Աւստի ան պատարագները՝ ո-
րոնց համար հասարակօրէն կըսուի
թէ քահանան զՔրիստոս կըսպատա-
րագէ կենդանեաց և մեռելոց համար ,
պատժոյ ու մեղքի թողութեան հա-
մար , հայհոյական կեղծիքներ ու վը-
տանգաւոր խաբէութիւններ են :

ՅՕԴ · ԼԻ

Քահանայից ամուսնութեանը վրայ :

Աստուծոյ օրէնքը չհրամայեր որ
 Ապիսկոպոսները , քահանաները , ու
 սարկաւազները ուխտ ընեն միայնա-
 կեաց ըլլալու կամ թէ ամուսնութենէ
 հրաժարին : Աւստի անոնք բոլոր ու-
 ըիշ քրիստոնեաներուն պէս , թէ որ
 ուզեն կրնան ամուսնանալ , թէ որ ի-
 ընց այնպէս երկնայ թէ ան վիճակը
 աւելի օգտակար պիտի ըլլայ բարե-
 պաշտութեան :

ՅՕԴ · ԼԳ

Բանադրեալ անձանց վրայ . թէ ի՛նչպէս հետու-
 կենալ պէտք է անոնցմէ :

Ան մարդը՝ որ եկեղեցիին յայտնի
 հրատարակելովը արժանապէս կրտ-
 րուած է եկեղեցիին միաւորութենէն
 և բանադրուած , պէտք է որ բոլոր

հաւատացեալները մաքսաւորի ու շե-
թանոսի պէս համարին զանիկայ, մին-
չև որ ան դառնայ ասղաշխարութեամբ
հրապարակաւ համոզուի միաբանի,
ու եկեղեցիին մէջ ընդունուի անանկ
դատաւորէ մը, որ աս բանին մէջ
իշխանութիւն ունի :

ՅՕԴ . 1,Դ

Ահեղեցիին աւանդութիւններուն վրայ :

Հարկ չէ որ աւանդութիւնները ու
արարողութիւնները ամէն տեղ մէկ
ըլլայ, ու բոլորովին մէկզմէկու նման :
Վասն զի ամէն ժամանակ անոնք տար-
բեր եղած են, ու կրնան փոխուիլ
երկրին՝ ժամանակին ու մարդոց սո-
վորութեանցը փոփոխութիւններուն
համեմատ . միայն թէ Վստուծոյ
Խօսքին զէմ բան մը սահմանուած
չըլլայ : Վ՛ի որ իր աւանձին դատու-
մովը, կամաւ ու ղիտմամբ յայտնա-

պէս եղծելու ըլլայ եկեղեցիին ան աւանդութիւնները և արարողութիւնները՝ որոնք հակառակ չեն Վատուծոյ Խօսքին, ու հասարակ իշխանութիւնով հաստատուած ու ընդունուած են, պէտք է յայտնի յանդիմանել զանիկայ (որ ուրիշներն ալ վախճան անանկ ընելէն,) քանզի անիկայ եկեղեցիին հասարակ կանոններուն դէմ յանցաւոր դտնուեցաւ, դատաւորին իշխանութիւնը վնասեց, ու տկար եղբայրներուն խղճմտանքը վերաւորեց :

Ամէն մասնաւոր կամ աղջային եկեղեցի իշխանութիւն ունի հրամայելու, փոփոխելու ու խափանելու եկեղեցիին ան արարողութիւնները կամ ծէսերը, որոնք միայն մարդոց իշխանութիւնովը հաստատուած են. անանկ որ ամէն բան շինութեան համար ըլլայ :

ՅՕԴ · ԼԵ

Քարոզներուն վրայ :

Ըն քարոզներուն երկրորդ դիրքը , որուն զանազան մակագիրները աս յօդուածիս տակը դրեր ենք , հոգևոր ու փրկարար վարդապետութիւն մը կը պարունակէ , ու աս ժամանակներուն ալ հարկաւոր է , ինչպէս որ քարոզներուն առաջին դիրքը՝ որ Ետուարդ Ալեցերորդին օրովը հրատարակուեցաւ . ուստի յարմար կը դատենք որ քարոզիչները կարգան զանոնք եկեղեցիին մէջ մեծ փութով ու որոշակի , որպէս զի ժողովուրդը կարենայ հասկընալ :

Քարոզներուն անունները :

ա · Եկեղեցիին ճշմարիտ օգտին վրայ :

բ . Կուսպաշտութեան վտանգին դէմ :

գ . Եկեղեցիները նորոգելու ու մաքուր պահելու վրայ :

դ . Բարի գործքերուն վրայ . նախ՝ պահեցողութեան վրայ :

ե . Որկրամոլութեան և արբեցողութեան դէմ :

զ . Օգեստի շուայլութեան դէմ :

է . Աղօթքի վրայ :

ը . Աղօթքի տեղին ու ժամանակին վրայ :

թ . Թե հասարակ աղօթքները ու Խորհուրդները պէտք է որ կատարուին հասկանալի լեզուով մը :

Ճ . Աստուծոյ Խօսքը մեծապէս յարգելու վրայ :

Ճա . Ողորմութիւն տալու վրայ :

Ճբ . Քրիստոսի Օննդեանը վրայ :

Ճգ . Քրիստոսի Չարչարանացը վրայ :

ԺԴ . Քրիստոսի յարութեանը վըրայ :

ԺԵ . Քրիստոսի մարմնոյ և արեանը խորհուրդը՝ արժանաւորութեամբ ընդունելու վըրայ :

ԺԶ . Հողւոյն Արքայ պարզեցնելուն վըրայ :

ԺԷ . Մաղթանաց օրերուն վըրայ :

ԺԸ . Ամուսնութեան վիճակին վըրայ :

ԺԹ . Օղջման վըրայ :

Ի . Ճուլութեան դէմ :

ԻԿ . Ապստամբութեան դէմ :

ՅՕԻ . ԼՕ.

Եպիսկոպոս ու պաշտանեաներ ձեռնադրելու վըրայ :

Արքեպիսկոպոս , եպիսկոպոս , քահանայ և սարկաւազ ձեռնադրելու զիրքը , որ մօտ ատեններս հրատարակուեցաւ Ատուարդ Ա կցերորդին

օրովը : ու նոյն ժամանակը հաստատուեցաւ Ռաուլամէնդին հրամանովը : կը պարունակէ ձեռնադրութեան բոլոր հարկաւոր բաները : Ան գիրքին մէջ չկայ մէկ բան մը որ աւելորդապաշտութեան ու ամբարշտութեան վերաբերի . ուստի ով որ ան գիրքին ձեռքուն համեմատ ձեռնադրուէր է նէ , յիշեալ Ատուարդի Թագաւորութեան ք տարիէն մինչև հիմա , կամ որ ասկէց ետքը պիտի ձեռնադրուի նէ ան նոյն արարողութիւններովը , մենք կը վճուենք որ անանկները ճշմարտապէս ըստ կանոնի և օրինի ձեռնադրուած են :

ՅՕԴ . 1, 12

Քաղաքական գաղափարներուն վրայ :

Վեհափառ Թագաւորը գլխաւոր իշխանութիւն ունի Վեգդիայի աս տէրութեանը և ուրիշ իր սահմաններուն

վրայ , որուն կը վերաբերի աս տէրու թեանս ամէն աստիճանի մարդոց (թէ եկեղեցական թէ քաղաքական) գըլխաւոր կառավարութիւնը , ու անկէկայ օտար իշխանութեան մը տակը չէ ու պարտի չըլլալ :

Արովհետեւ վեհափառ թագաւորը գլխաւոր կառավար կանուանենք , կը տեսնանք որ ան պատուանունը բանի մը զբաւարտիչ ժողովրդոց սիրտը կը նեղացունէ : Մենք չենք ձգեր մեր իշխաններուն որ Մատուծոյ Խօսքը կամ Խորհուրդները մատակարարեն , որ աս բանին մեր Աղիսաբէթ թագուհին մօտ ատեններս դրած պատուէրներն ալ յայտնի կը վկայեն . բայց միայն ան արտօնութիւնը կուտանք անոնց , որն որ Սուրբ Գիւրքին մէջ կը տեսնենք որ նոյն ինքն Մատուծ միշտ տուեր է բարեպաշտ իշխաններուն , ի՞նչ որ անոնք կառավարեն Մատուծմէ իրենց յանձնուած ամէն մարդոց վե-

ճակները և աստիճանները , թէ եկեղեցական ըլլան և թէ քաղաքական , և որ քաղաքական սրով կամակորները ու չարազործները սանձեն :

Հսովմայ քահանայապետը իշխանութիւն մը չունի Մեղղայի տէրութեանը վրայ :

Տէրութեան օրէնքը կրնայ մահուամբ պատժելու քրիստոնեայ մարդիկը՝ մեծ ու ծանր յանցանքներու համար :

Օրինաւոր է քրիստոնէից , որ երբ դատաւորը հրաման ընէ , ղէնք առնեն ու պատերազմի երթան :

ՅՕԴ . ԼԸ

Քրիստոնէից ինչքը հասարակաց չեն :

Քրիստոնեաներուն հարստութեանը և ընչիցը իրաւունքը և իշխանութիւնը հասարակաց չեն , ինտոր որ կրկնակնունքները սուտ տեղը կը պար-

Տենան : Ըյսու ամենայնիւ ամէն մարդ
կըպարտաւորի , որ իր ունեցած բա-
ներէն իր կարողութեանը չափ՝ ա-
ռատօրէն ողորմութիւն տայ աղքատ-
ներուն :

ՅՕԻ . ԼԹ

Քրիստոնէի մը երդումն վրայ :

Ինչպէս որ կըխատովանինք թէ
զուր տեղը ու չարաչար երդում ընե-
լը բրիստոնէից արգիլուած է մեր Տէր
Յիսուս Քրիստոսէն և իր Յակովբոս
առաքեալէն , ասանկ ալ կըհամարինք
որ բրիստոնէական կրօնքը չարգիլեր
երբոր դատաւորը կըպահանջէ եր-
դում ընել մէկէ մը , անանկ դատի մը
մէջ՝ որ հաւատքի և սիրոյ համեմատ
է . միայն թէ ան երդումը , մարգա-
րէին ըսածին պէս ըլլայ , արդարու-
թիւնով , իրաւունքով ու ճշմարտու-
թիւնով :



284

5070

Σ-37

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ԱՆՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Կ Ա Մ

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Ք Ր Ի Ս Տ Ո Ն Է Ա Կ Ա Ն

Վ Ե Ս Թ Մ Ի Ն Ս Դ Ի Բ Ժ Ո Ղ Ո Վ Ի Ն

Մտուր բռնէ ան ող զամիրտ խօսքերուն օրինակը :
ք. Տիմ . ւն . 13 :

Ի ԶՄԻՒՌՆԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԿՈՒԼԵԿԼՍՈՍ ԿՐԻՖՅԻԹԻ

1846

2141-ue 6

5070-uh



1552-22

Հ Ա Ր Դ Ա Պ Ե Տ ՈՒ Թ Ի Ի Ն

Հ. Ի՞նչ է մարդոյս գլխաւոր վախճանը :

Պ. Մարդոյս գլխաւոր վախճանն է զՄատուած փառաւորել՝ ու զինքը վայելել յաւիտեան՝ :

(¹) Ինչու որ ամէն բաները անկէց՝ ու անս'վ, և անոր համար են. իրեն փառք յաւիտեանս. ամէն : Հասվ. Ժա. 36 : Արդ՝ թէ ուտէք՝ թէ խմէք՝ թէ ինչ գործ ալ որ ընէք, ամէն բան Մատուծոյ փառքին համար ըրէք : ա Վորնի. Ժ. 31 :

(²) Ա երջը փառքով պիտի ընդունիս իս : Ա՛ճ իմ սրտիս զօրութիւնը ու իմ բաժինս է յաւիտեան : Առդ. հի. 24-26 : Եւ ան

Հ . Աստուած ի՞նչ կանոն տուա՞մք ձեզ ցուցընելու թէ ի՞նչպէս կրնանք զինքը փառաւորել ու վայելել :

Պ . Աստուծոյ խօսքը՝¹ որ Սուրբ Գիրքին՝ Հին և Նոր կտակարանին մէջ կը պարունակի . միայն ան՝ է մե-

փառքը որ գուն ինծի տուիր՝ ևս անոնց տուի , որ մէկ ըլլան՝ ինչպէս որ մենք մէկ ենք : . . . Այլ Հայր՝ անոնք որ գուն ինծի տուիր , կուզեմ որ ուր ևս եմ՝ անոնք ալ իմ հետս ըլլան , որ իմ փառքս տեսնան որ ան ինծի տուիր : (Յով . ԺԷ . 22 , 24 :

(²) Անամէն գիրքերը Աստուծոյ շունչն են : ք ՏՆԺ . Դ . 16 : Այլ աւելի հաստատուն ունիմք մարդարեւական խօսքերն ալ . որ ազէկ կընէք թէ որ անոր տաք խելմընիդ , որպէս թէ մէկ ճրագի մը՝ որ խաւարային տեղը ըլլա կուտայ : . . . Ինչու որ չէ՛ թէ բնաւ մարդարեւթիւնը մարդոց կամքին պէս տրուեցաւ . հապա Սուրբ Հոգիէն շարժուած Աստուծմէ Էղած մարդիկները խօսեցան : ք ՊԷԹ . Կ . 19 , 21 :

(³) () րէնքին ու վկայութիւնին հարցոնին՝ թէ որ աս խօսքին պէս չխօսին նէ , ա-

զի ցուցընող կանոնը՝ թէ ինչպէս կը ընանք զինքը փառաւորել ու վայելել :

Հ . Սուրբ Գիւրքը զլիաւորապէս ի՞նչ կը սորվեցունէ :

Պ . Սուրբ Գիւրքը զլիաւորապէս կը սորվեցունէ՝ թէ մարդ Մատուծոյ վերաբերեալ ինչ բանի պիտի հաւատայ , և թէ Մատուծ մարդէն ինչ ընել կը պահանջէ :

նոնք բնաւ լոյս չունին : Կայ . Ը . 20 : Կայց թէ որ մենք՝ կամ երկինքէն հրեշտակ մը մեր քարոզածէն աւելի՝ աւետարանը քարոզելու ըլլայ նէ ձեզի , նզովեալ ըլլայ : Ինչպէս որ առաջ ըսինք , հիմայ ալ նորէն կը շրջուցեմ . թէ որ մէկը ձեր առածէն աւելի՝ աւետարանը քարոզելու ըլլայ նէ ձեզի , նզովեալ ըլլայ : Գաղ . ա . 8—9 :

(²) Հապա աս՝ այնչափ բան դրուեցաւ , որ հաւատաք թէ Յիսուսը՝ Վրիստոս է Մատուծոյ Որդին . և որ հաւտալով յաւիտենական կեանքը ընդունիք անոր անունովը : Գո՛ւ . Ի . 31 : Մուր բունէ անող ջափա խօսքերուն օրինակը՝ որ ինձմէ լսե-

§ 20 : ԱՄՏՈՒԾՈՅ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԻՆՉ
ԲԱՆԻ ՊԻՏԻ ՀԱՒԱՏԱՅ ՄԱՐԻ :

Հ . Ի՞նչ է ԱՄՏՈՒԾ :

Պ . ԱՄՏՈՒԾ Հոգի է՞, անհուն՞,
յաւիտենական՞ և անփոփոխ է՞ իր

ցիր , հաւատքով ու սիրով որ Վրիստոս
Յիսուսով է : ք՝ ՏՂ՝ . 20 . 13 : Ինչու որ դուն
մանկութենէ սուրբ զիրքերը զիսես , ու
բոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկուե-
լու՝ Վրիստոս Յիսուսի վրայ եղած հա-
ւատքովը : ք՝ ՏՂ՝ . 20 . 15 :

(6) ԱՄՏՈՒԾ Հոգի է : Յ՞՞ . 24 :

(7) Եւ ԱՄՏՈՒԾ ըսաւ Սոփոսիան . ԱՄ
ԵՄ ՈՐ Է՞ : Ու ըսաւ . ԱՄանկ պիտի ըսես
Իսրայէլի որդւոցը . Իս ձեզի ՈՐ Է՞ խրկեց :
Ե՞լի . 20 . 14 : Ուրեմն դուք կատարեալ ե-
ղիք , ինչպէս որ ձեր երկնաւոր հայրն ալ
կատարեալ է : Սոփոս . Ե . 48 :

(8) Ի եռներուն ծնանելէն առաջ , ու
երկրի և աշխարհի ստեղծուելէն առաջ
յաւիտենից մինչև յաւիտեանս դուն ես
ԱՄՏՈՒԾ : Սոփոս . 20 . 2 :

(9) Վրանկի Աս եմ ձեր Տէր ԱՄՏՈՒԾ :

էուլթեամբը՝ իմաստուլթեամբը՝¹⁰ զօ-
րուլթեամբը՝ սրբուլթեամբը՝¹ արդս-
րուլթեամբը՝ բարուլթեամբը ու ճըշ-
մասլուլթեամբը² :

Տը, ու չեմ փոխուիր : Սաղմ . 7 . 6 : Տե-
նան : Յակովբ . 17 :

(¹⁰) Ո՛վ Աստուծոյ թեծութեան ու ի-
մաստութեան ու գիտութեան խորունկու-
թիւնը, ինտո՞ր անքննելի են իր դատաստան-
ները, ու չհասկցուելու են իր ճամբաները :
Հակովբ . 17 . 33 : Չկայ մէկ արարած մը
անոր դիմացը չերեցած, հապա ամէն բան
բնց ու յայտնի է անոր աչքին առջևը,
որուն հետ որ մեր հաշիւը է : Աբրահ . 7 .
13 : Միմիայն իմաստուն Աստուծոյն՝ Յի-
սուս Վրիստոսի ձեռքովը, փառք յաւի-
տեանս յաւիտենից, ամէն : Հակովբ . 17 .
27 : Տե-նան Սաղմ . 87 . 5 :

(¹) Աւ չորս կենդանիներուն անոնցմէ
ամէն մէկը վեց թևեր ունէր, բոլորաիբէն
ու տակէն աչքերով լեցուն էին, ու չէին
հանգչէր ոչ ցորեկը՝ ոչ ալ գիշերը՝ ըսե-
լով, Սուրբ՝ Սուրբ՝ Սուրբ՝ Տէր Աստուած
Ամենակալ, որ էր՝ և է, և ան որ պիտի գայ :
Յայտ . 7 . 8 :

(²) Աստուած՝ որուն՝ գործքերը ճշմար-

Հ . Մէկէն աւելի Մատուած կա՞յ մի :

Պ . Կայ մի միայն մէկ Մատուած կենդանի ու ճշմարիտ³ :

Հ . Քանի՞ անձինք կան Մատուածութեան մէջ :

Պ . Մատուածութեան մէջ իրեք անձինք կան . Հայրը , Արդին , և Սուրբ Հոգին . և աս իրեքը մէկ Մատուածութեան են , ու անոր ամէն ճանապարհները իրաւունքով են , հաւատարիմ է Մատուած , ու իր մէջը անիրաւութիւն չունի . արդար ու ճշմարիտ է Տէրը : ք () ըն . Լ ք . 4 :

Աւտէր Մատուած անցաւ անոր առջևէն , ու ըսաւ . Տէր Մատուած գթած ու ողորմած , երկայնամիտ , բազումողորմ և ճշմարիտ : Եւրեյ . Լ ք . 6 :

(²) Իսէ Իրայէլ՝ մեր Տէր Մատուածը մէկ Տէր մըն է : ք () ըն . ք . 4 : Ինչու որ մէկէն՝ ի զատ չկայ ուրիշ Մատուած մը : ան Կրեյն . ք . 4 : Այլ Տէր Մատուած ճշմարիտ է . Մատուած կենդանի և թաղաւոր յաւիտենական : Եւրեյ . Ժ . 10 :

ուած են , մի՛ էութեամբ , հաւասար՝
զօրութեամբ ու փառքով⁴ :

Հ . Ի՞նչ են Մատուծոյ սահմանադրութիւնները :

Պ . Մատուծոյ սահմանադրութիւններն են իր յաւիտենական դիտաւորութիւնը՝ իր կամացը խորհուրդին պէս⁵ , որով բուն իր փառքին համար

(⁴) Ասան զի իրեք են որ երկինքին մէջ կը վկայեն , նայր՝ Բանը ու Հողին Սուրբ . և աս իրեքը մէկ են : Ինձ . Ե . 7 : Տէննիս Սուրբ . Գ . 16 , 17 . ու ինք . 19 : Ի Կորնթ . Ժ . 13 , 14 : Ինձ . Ժ . 30 :

(⁵) Արով մեկք ալ ժառանգ եղանք , առաջուց հրաւիրուած ըլլալով Մատուծոյ նախասահմանութիւնովը , ան որ ամէն բան իր կամքին խորհրդովը կը յաջողէ : Եփե . Ի . 11 : Ինչու որ ինքը Սովսէսին կըսէ . Արուն որ պիտի ողորմիմ՝ կողորմիմ , ու որուն վրայ որ պիտի գթամ՝ կը գթամ : . . . Ընանկ էնէ՛ որուն որ կուզէ՛ կողորմի , և որը որ կուզէ՛ կը խրատացունէ : Ինձ . Ժ . 15 , 18 : Տէննիս Սուրբ . Ժ . 33 :

ինքը առաջուց սահմանեց ինչ որ
կըլլայ⁶ :

Հ . Աստուած իր սահմանադրու-
թիւնները ի՞նչպէս կըկատարէ :

Պ . Աստուած իր սահմանադրու-
թիւնները կըկատարէ ստեղծագործու-
թեան ու նախախնամութեան գործ-
քով :

(⁶) Ինչպէս որ մեզ անոր ձևութիւնը աշ-
խարհը ըլլալէն առաջ ընտրեց , որ մենք
սուրբ ու անարատ ըլլանք անոր առջևը սի-
րով : Ա.Ֆ.Ե. . Կ . 4 : Հապա ի՞նչ ը-
սէ՛լն ունի մէջը թէ որ ուզէր Աստուած
բարկութիւնը ցուցընել՝ ու իր զօրութիւնը
յայտնել , շատ երկայնամտութեամբ համ-
բերելով կորսուելու պատրաստուած բար-
կութեան ամաններուն վրայ , Աստուած որ իր
փառքին մեծութիւնը յայտնի ընէ ողորմե-
լու ամաններուն վրայ որոնք որ փառքի
համար պատրաստեց : Ա.Ֆ.Ե. . [Թ . 22 , 23 :
Տէրոջը խորհուրդը յաւիտեան կըմնայ ,
անոր սրտին գիտաւորութիւնները ազգէ
մինչև ազգ : Ա.Ֆ.Ե. . ԼԳ . 11 :

Հ . Ի՞նչ էր ստեղծագործութեան գործը :

Պ . Ստեղծագործութեան գործը Աստուծոյ՝ բոլոր բաները վեց օրուան մէջ ոչնչէն ստեղծելն էր իր զօրութեանը խօսքովը , ու ամէնը շատ աղէկ տեսաւ՝ :

Հ . Աստուած ի՞նչպէս ստեղծեց մարդը :

Պ . Աստուած արու և էգ ստեղծեց մարդը , իր պատկերին պէս՝՝ գիտութեամբ՝՝ , արդարութեամբ ու սրբ-

(¹) Հաւատքով կիմանամք որ աշխարհքը Աստուծոյ խօսքովը հաստատուեցաւ , աներևոյթ բաներէն աս երևցածները եղան : Եբր . ժն . 3 : Տէս նաեւ՝ Օննդ . ն Դլն-ն :

(²) Եւ Աստուած ստեղծեց մարդը իր պատկերին պէս . Աստուծոյ պատկերին պէս ստեղծեց զանիկայ , արու և էգ ստեղծեց անոնք : Օննդ . ն . 27 :

(³) Եւ վրանիդ հագէք ան նորը գիտութիւնով նորոգուած՝ իր Ստեղծողին պատկերին պէս : Ապղս . 7 . 10 : 2 ը

բուժեամբ¹⁰, և բոլոր արարած ներուն
վրայ իշխելու արտօնութիւն տալով
անոր¹:

Հ. Ի՞նչ է Աստուծոյ նախախնա
մութեան գործերը:

Պ. Աստուծոյ նախախնամութեան
գործերն են իր ամենասուրբ, ամենի-
մաստ² և ամենագոր պահպանութիւ-
նը³ ու կառավարութիւնը իր բոլոր

(¹⁰) Աւ նոր մարդը վրանիդ հազնիք ան
որ Աստուծոյ պատիւը պէս ստեղծուած է,
արդարութիւնով ու ճշմարիտ սրբութիւ-
նով: Ա՛վէ՛ռ, Գ. 24:

(¹) Տէ՛ս Նոնի . Թ. 28:

(²) Ո՛վ Տէ՛ր սրչափ շատ են քու գործ-
քերդ, անոնց բոլորը իմաստութիւնով ը-
րիր: Սաղ. ԾԴ. 24: Տէ՛ս նաև Ասայ . ի՛ն .
29:

(³) Որ ինքը անոր փառքին լոյսն է, ու
անոր էութեանը բուն պատկերը, որ ամեն
բան իր զօրութեան խօսքովը կը բռնէ .
Եբրեմ . Թ. 3:

արարած ներուն⁴, և անոնց ամէն գործողութիւններուն վրայ⁵ :

Հ . Նախասխնամութեան ի՞նչ յատուկ գործ ըրաւ Մատուած մարդուն՝ անոր ստեղծուած վիճակին մէջ :

Պ . Երբոր Մատուած ստեղծեց մարդը, անոր հետ կենաց ուխտ մը ըրաւ կատարեալ հնադանդութեան պայմանով, ու բարւոյ և չարի գիտութեան ծաւէն արդիւլեց, մահուան պատիժը սպառնալով⁶ :

(⁴) Տէրը իրեն աթոռը երկինքը հաստատեց, ու անոր թագաւորութիւնը ամէնուն վրայ կը տիրէ : Սող. ճ. 19 :

(⁵) Չէ՞ որ երկու ճ՛նճղուկ մէկ ստակի կը ծախուին, և անոնցմէ մէկը գետինը չիյնար առանց ձեռ հօրը : Բայց ձեռ գլխուն բոլոր մաշերն ալ համբուած է : Սող. Ժ. 29, 30 :

(⁶) Բարւոյ ու Չարի գիտութեան ծաւէն չըլլայ որ ուտէք. քանզի որ օր՝ որ ուտէք անկէջ անշուշտ պիտի մեռնիք : Օհնդ. ք. 17 : Տե՛ս Ովե՛այ. Է. 7 :

Հ . Մեր առաջին ծնողքը իրենց ստեղծուած վիճակին մէջը մնացի՞ն :

Պ . Մեր առաջին ծնողքը բուն իրենց ազատ կամացը տէրն ըլլալով՝ մեղանչեցին Մատուծոյ դէմ, և ինկանան վիճակէն՝ որուն մէջ ստեղծուեցան⁷ :

Հ . Ի՞նչ է մեղքը :

Պ . Մեղքը Մատուծոյ օրէնքին ո՛

(⁷) Եւ տեսաւ կինը, որ ծառը աղէկ էր ուտելու, ու աչքի հաճելի տեսնելու. ու տեսնելու ժամանակը գեղեցիկ, ու առաւանոր պտուղէն ու կերաւ. ու իր էրկանը տուաւ իր հետը ու կերան, և երկուքին աչքն ալ բացուեցան, ու գիտցան որ մերկ էին. ու պահուրտեցան Մամ ու իր կինը Տէր Մատուծմէ՝ դրախտին ծառերուն մէջ : ... Եւ Տէր Մատուծ ըսաւ կնոջը, առ ի՞նչ ըրիր, ու ըսաւ կինը, ()ձը զիս խաբեց ու կերայ : Օ՛ննդ. 7. 6, 7, 8, 13 : Տէննան ի Վորնը. Ժա. 3 :

և իցէ կերպով ճնմանիլ՝ կամ անոր
չհնազանդիլ է՝ :

Հ . Ի՞նչ է ան մեղքը որով մեր
առաջին ծնողքը ինկան ան վիճակէն ,
որուն մէջ ստեղծուեցան :

Պ . Ըն մեղքը՝ որով մեր առաջին
ծնողքը ինկան ան վիճակէն՝ որուն մէջ
ստեղծուեցան , արգելեալ պատուէն
իրենց ուտելն էր :

Հ . Բոլոր մարդկային ցեղը Նդամին
առաջին յանցանքովը ինկա՞ն մի :

Պ . Նդամին հետ եղած ուխտը չէ
թէ միայն իրեն համար , հապա նաև
իր զաւկրներուն համար ըլլալով , բնա-
կան ծննդով՝ իրմէն յառաջ եկած
բոլոր մարդկային ցեղը մեղանչեցին

(⁸) Ըմէնքը մեղք գործեցին և Մատու-
ծոյ փառքէն պակսեցան : Հատվ. Գ . 23 :
Սեղքը օրէնքին դէմ է : ան ճոյն . Գ . 4 :
Տե՛ս նաև Վատ . Գ . 10—12 :

(⁹) Բոլոր մարդոց ցեղը մէկի մը արիւ-
նէն ըրաւ : Վարժ . ԺԷ . 26 :

իրմով , ու իր առաջին յանցանքովը
ինկան իրեն հեռ ¹⁰ :

Հ . Աղամին ի յնալը ի՞նչ վիճակի
մէջ ձգեց մարդկային ցեղը :

Պ . Անոր ի յնալը մեղաց ու թշուա-
ւու թեան վիճակի մէջ ձգեց մարդկա-
յին ցեղը :

Հ . Ո՞ւր կը կայանայ ատ վիճա-
կին մեղանչականութիւնը , որուն մէջ
մարդը ինկաւ :

Պ . Այն վիճակին մեղանչականու-

(¹⁰) Յայց : Յարւոյ ու Չարի գիտու-
թեան ծառէն չըլլայ որ ուտէք , քանզի որ
օր՝ որ ուտէք անկէց անշուշտ պիտի մեռնիք :
Նոննդ . ք . 17 : Բողոքսքէ Հոով . Ե . 12էն
Բնչ . 20 համար , ու Ի Վորնի . ԺԵ . 21 , 22 :

(¹) Ս ասն զի ինչպէս որ մէկ մարդէ մը
մեղքը աշխարհք մտաւ , և ան մեղքէն մահը
ու անանկ ամէն մարդոց վրայ տարածուե-
ցաւ մահը , որ անով ամէնքը մեղանչեցին :
Հոով . Ե . 12 : Ս ասն զի ան ամէնը որ օ-
րէնքին գործքերէն են՝ անէծքի տակ են . ո-
րովհետեւ գրուած է թէ՛ Անիծեալը ըլլայ

Թիւնը՝ որուն մէջ մարդը ինկաւ, կը կայանայ Ադամին առաջին մեղացը պատժապարտութեանը մէջ², սկզբնական արդարութեան պակասութեանը մէջ, և իր բոլոր բնութեան ապականութեանը մէջ³, որոնք որ հասա-

ամէն մարդ՝ որ օրէնքին զիրքը գրուածներուն ամէնուն մէջ չկենար բոլորը կատարելու: Գաղ. Գ. 10:

(²) Այսին զի ինչպէս որ մէկ մարդէ մը մեղքը աշխարհք մտաւ, և ան մեղքէն մահը, ու անանկ ամէն մարդոց վրայ տարածուեցաւ մահը, որ անով ամէնքը մեղանչեցին: . . . մէկուն մեղքովը բոլոր մարդոց դատապարտութիւն էլլաւ. . . մէկ մարդուն անհնազանդութիւնովը շատերը մեղաւոր եղան: Հռոմ. Ե. 12—19: Տէն նաև աւ Արն. ԺԵ. 22:

(³) Ինչու որ երբ մենք տկար էինք, յարմար ժամանակին Քրիստոս մեզի համար ամբարիշտներուս վրայ մեռաւ: Հռոմ. Ե. 6: Ինչպէս որ գրուած է, [Ժէ Արդար մը չկայ՝ ոչ մէկ հատ մը, և մէկը չկայ՝ որ հասկընայ, և մէկը չկայ՝ որ Աստուած փնտրուէ: Ամէն-

բակորէն սկզբնական մեղք կը կոչուին . բոլոր ներգործական մեղքերուն հետ մէկ տեղ , որ անկէց առաջ կուգայ¹ :

Ն . Ի՞նչ է ատ վիճակին թըշուառութիւնը՝ որուն մէջ մարդը ինկաւ :

— — —
 քը մոլորեցան մէկանց անշահացան . մէկը չկայ որ բարի բան ընէ . և բնաւ մէկ հատ մըն ալ չկայ , Լճ : Հոով . Գ . 10 — 20 : Եւ դուք որ ձեր մեղքերուն և յանցանքներուն մէջ մեռած էիք՝ ինքը յէպ ինքանայոց , Լճ : Եւ ինք . Բ . 1 , 2 , 3 : Պատճառն որ մարմնաւոր խորհուրդը Մատուծոյ գէմ՝ թշնամութիւն է . որ Մատուծոյ օրէնքին ճնազանդիր , մանաւանդ չկրնար ալ : Այսին ղի մարմինով եղողները Մատուծոյ հաճոյ ճէն կրնար ըլլալ : Հոով . Գ . 7 , 8 : Եւ Տէր Մատուած տեսաւ , թէ մարդիկներու գէշութիւնները շատցան երկրի վրայ . ու ամէն մարդ չարութիւն կը խորհէր իր սրտին մէջ ամէն օր : Օննդ . Գ . 5 :

(¹) Մէն մէկը կը փորձուի՝ իր ցանկութիւններէն քաշուած ու խաբուած . անկէ ետեւ ցանկութիւնը որ կը յղանայ՝ մեղք կը

Պ. Բողոք մարդկային ցեղը իրենց իշ-
 նալովը Մատուծոյ հետ ունեցած հա-
 ղորդու[թիւննին կորսնցուցին⁽⁵⁾ ; անոր
 բարկու[թեանը ու անէծքին տակը
 ինկան⁽⁶⁾ , և այնպէս են[թակայ եղան
 աս անցաւոր կենաց բոլոր [թշուա-
 ւու[թիւններուն⁽⁷⁾ և մահուան⁽⁸⁾ ու


ծրնի . և մեղքը որ կատարուի մահ կրծնի :
 Յա՛յ . ան . 14 , 15 : Ինչու որ՝ սիրտէն կեւ-
 լին չար խորհուրդները , սպաննու[թիւն-
 ները , շնու[թիւնները , պոռնըկու[թիւնները ,
 գողու[թիւնները , սուտ վկայու[թիւնները ,
 հայհոյու[թիւնները : Մատ . ԺԵ . 19 :

⁽⁵⁾ Այլ լսեցին Տէր Մատուծոյ պտրտելու
 ձայնը դրախտին մէջ իրիկունը , պահուը-
 տեցան Մղամ ու իր կինը Տէր Մատուծմէն
 դրախտին ծառերուն մէջը : Օ՛ննդ . Գ . 8 :

⁽⁶⁾ Այլ բուն բարկու[թեան որդիք էինք
 ինչպէս ուրիշները : Ա՛պէս . Թ . 3 :

⁽⁷⁾ Տես . Թ ()րին . Իր . 15—68 :

⁽⁸⁾ Պատճառն որ մեղաց հատուցումը մահ
 է : Ա՛պէս . Գ . 23 : Ե . 14 : Օ՛ննդ . Թ . 17 :



նաև դժոխքին ցաւերուն յաւիտեանն ⁽⁹⁾ :

Հ . Թողընց Մատուած բոլոր մարդկային ցեղը կորսուելու , ան մեղաց ու Թշուառութեան վիճակին մէջ :

Պ . Մատուած բոլոր յաւիտենականութենէն իր միայն բարի հաճութեամբը ընտրած ըլլալով մէկ քանինները յաւիտենական կեանքը ժառանգելու համար ⁽¹⁰⁾ , շնորհաց ուխտ մը ըրաւ՝ զանոնք մեղաց ու Թշուառութեան վիճակէն ազատելու՝ և Ֆրկիչով մը փրկութեան վիճակին մէջ բերելու համար ⁽¹⁾ :

⁽⁹⁾ Արոնք պիտի պատժուին յաւիտենական սատակումով՝ Տէրոջը երեսէն ու անոր ղօրութեան փառքէն : թ ԹԻՍԱՊԷ . ԿՈ . 9 : Վեհեանք երթալ ուր որ անոնց որդը չմեռնիր ու կրակը չմարիր : Սաղմ . Թ . 42, 43 :

⁽¹⁰⁾ Ինչպէս որ Մատուած մեզ բարկութեան համար չըրաւ , հապա կենդանութեամբ փրկուելու մեր Տէր Յիսուս Վրիստոսի ձեռքովը : ԿՈ ԹԻՍԱՊԷ . ԿՈ . 9 :

⁽¹⁾ Բայց երբոր մեր Փրկիչ Մատուածոյն

շ. Ո՞վ է Լստուծոյ ընտրածներուն
Փրկիչը :

Պ. Լստուծոյ ընտրածներուն Փրկիչը
միայն Յիսուս Քրիստոս է (²) , որ Լս-

քաղցրութիւնը ու մարդասիրութիւնը յայտ-
նի եղաւ , չէ թէ արդարութեան գործքերէն
որ մենք ըրինք , հապա իր ողորմութիւնովը
մեզ փրկեց նորէն ծնանելու աւազանին ձեռ-
քովը՝ ու Սուրբ շոգիին նորոգելովը , որ
մեր վրայ լեցուց առատօրէն Յիսուս Քրի-
ստոս մեր Փրկիչին ձեռքովը . որ շնորհքով
արդարացած՝ յաւիտենական կեանքին յու-
սովը ժառանգ ըլլանք : Տեա. ք. 4—7 : Գաղ .
ք. 21 : Հռոմ. ք. 20—22 :

(²) Քրիստոս մեզ ծախու առաւ օրէնքին
անէծքէն : Գաղ . ք. 13 : Գուն մեզ ծախու
առ իր Լս՝ քու արիւնովը : Յայտ . Ե. 9 : Լու-
րիչ մէկով մը փրկութիւն չկայ : Գործ . ք. 12 :
Լու ասիկայ է ան վկայութիւնը , որ Լստ-
ուած մեզի յաւիտենական կեանք տուաւ .
ու աս ան կեանքն է՝ որ իր Արդւոյն մէջն է :
Լն որ Արդին կրնդունի՝ կեանքն ալ կրն-
դունի : Թ՛ Ե. 11, 12 : Ինչու որ՝ Լստ-
ուած անանկ սիրեց աշխարհ , մինչև որ իր

տուճոյ յաւիտենական Որդին ըլլալով՝
մարդ եղաւ ⁽³⁾, և այնպէս Մատուած ու
մարդ էր՝ և միշտ այնպէս կրմնայ, եր-
կու տարբեր բնութիւններով ⁽⁴⁾, ու
մէկ անձով յաւիտեան ⁽⁵⁾:

միածին Որդին տուաւ, որ ամէն ո՛վ որ ա-
նոր հաւասոյ՝ չկորսուի, հապա յաւիտենա-
կան կեանքը ընդունի: Հօհ. 16: Ինչու
որ մէկ Մատուած մը կայ, ու մէկ միջնորդ
մը Մատուծոյ ու մարդոց մէջը՝ Հիսուս Վր-
րիստոս մարդը: Թ. 5:

⁽³⁾ Իսկայց երբոր ժառանգակը լեցուեցաւ,
խրկեց Մատուած իր Որդին՝ որ կնիկէ մը
եղաւ: Գ. 4:

⁽⁴⁾ Ինչու որ՝ ան որ քեղմէ պիտի ծնանի՝
սուրբ է, ու Մատուծոյ Որդի պիտի ըսուի:
Գ. 35:

⁽⁵⁾ Իրենցն էն նահապետները, իրենցմէ
Կրիստոս ալ մարմնոյ կողմանէ, որ
ինքն է ամէնուն վրայ Մատուած օրհնեալ
յաւիտեանս. ամէն: Հ. 5: Ինչու
որ անոր մէջը կրբնակի Մատուածութեան
բոլոր լեցունութիւնը՝ մարմնապէս: Կ. 9:

Հ. Վրիստոս՝ Լստուծոյ Որդին ըլլալով, ի՞նչպէս մարդ եղաւ :

Պ. Վրիստոս Լստուծոյ Որդին՝ մարդ եղաւ, ճշմարիտ մարմինն ⁽⁶⁾ ու բանական հոգի ⁽⁷⁾ իր վրան առնելով, Սուրբ Հոգիին զօրութեամբը Աոյս Սարիամինն ⁽⁸⁾ արդանդը յղանալով, և

⁽⁶⁾ Սուսի որովհետեւ զաւակները արիւնինն ու մարմինին հաղորդ եղան, ինքն ալ մերձաւորութիւնովը անոնց հետ կցուեցաւ: Եբր. ք. 14: Եւ Քանը մարմին եղաւ, ու մեր մէջը բնակեցաւ: Յօհ. ւ. 14:

⁽⁷⁾ Իմ անձս մեռնելու չափ տրտում է: Սուրբ. իղ. 38:

⁽⁸⁾ Եւ ահա պիտի յղանաս, ու Որդի պիտի ծնանիս, և անոր անունը Յիսուս պիտի դնես: Հոգին Սուրբ պիտի գայ քեզի, ու Քարձրելոյն զօրութիւնը քու վրայ հովանի պիտի ըլլայ. ինչու որ՝ ան որ քեզմէ պիտի ծնանի՝ սուրբ է, ու Լստուծոյ Որդի պիտի ըսուի: Անիկներուն մէջը օրհնեալ ես դուն, և օրհնեալ է քու փորիդ պտուղը: Ղու. ւ. 31, 35, 42: Խորկեց Լստուած իր Որդին՝ որ կնիկէ մը եղաւ: Վարդ. ք. 4:

անկէց ծնանելով առանց մեղաց (9) :

Ը. Ի՞նչ պաշտօն կրկատարէ Վրիստոս մեր Փրկիչը ըլլալու համար :

Պ. Վրիստոս մեր Փրկիչը ըլլալու համար՝ մարգարէի (10) , քահանայի (1) , ու

(9) Ինչու որ չէ՛ թէ քահանայապետ մը ունինք՝ որ կարող չըլլայ մեր տկարութեանը հետ մէկ տեղ չարչարուիլ . հապաինքը ամէն կերպով փորձը առած է Տեղի նման Բայց առանց մեղքի : Եբր. 7. 15 : Ս ան զի մեզի ճիշտ ասանկ մէկ քահանայապետ մը կրկայլէր, սուրբ՝ անմեղ՝ անարատ՝ մեղաւորներէն զատուած՝ ու երկինքէն ալ բարձրըցած : Եբր. 7. 26 :

(10) Սովսէս մեր հօրերնուս ըսաւ, թէ՛ Ձեր Տէր Մտուածը ձեզի մէկ մարգարէ մը պիտի հանէ ձեր եղբայրներէն՝ ինծի պէս, անոր մտիկ ըրէք ամէն կերպիւ ի՛նչ որ ձեզի խօսի : Ղարթ. 7. 22 : Ղ 1. 7. 18, 21 : Մտիկայ է ան ճշմարիտ մարգարէն որ աշխարհ պիտի գար : Եօհ. 4. 14 :

(1) Ի՛նչանկ ալ Վրիստոս չէ՛ թէ իր անձը մեծարեց քահանայապետ ըլլալու, հա-

Թագաւորի ⁽²⁾ պաշտօնները կը կատարէ
 Թէ իր խոնարհած՝ և Թէ իր բարձրա-
 ցած վիճակին մէջ :

Հ . Ի՞նչպէս Վրիստոս մարգարէի
 պաշտօն կը կատարէ :

Պ . Վրիստոս մարգարէի պաշտօն
 կը կատարէ, մեր փրկութեանը վերա-
 բերեալ Լստուծոյ կամքը ⁽³⁾ մեզի

պա ա՛ն որ իրեն զրուցեց՝ Թէ Ղուն իմ
 Որդիս ես, ես քեզ ասօր ծնայ : Ինչպէս
 ուրիշ Դ՛ն մըն ալ կըսէ . Ղուն յաւիտեան
 քահանայ ես Սեւքիսեղեկի կարգին պէս :
 Եբր . Ե . 5, 6 :

⁽²⁾ Ըսէք Սիօնի աղջը ըկանը, ահա՛ քու
 Թագաւորդ քեզի կուգայ, հեզ և իշուն
 վրայ հեծած՝ ու իշուն աւանակին վրայ :
 Սաբա . իմ . 4, 5 : Սաբաբի՛ դուն ես
 Լստուծոյ Որդին, դուն ես Խարայէլի Թա-
 գաւորը : Յօհ . ւ . 49 :

⁽³⁾ Ալ ինքը մէկ քանին տուաւ առաքեալ-
 ներ, մէկ քանին մարգարէներ, մէկ
 քանին աւետարանիչներ, մէկ քանին
 հովիւներու վարչապետներ, սուրբերուն

յայտնելով⁽⁴⁾ իր խօսքովը⁽⁵⁾ ու շն-
դիովը⁽⁶⁾ :

Շ . Ի՞նչպէս Վրիստոս քահանայի
պաշտօն կը կատարէ :

Պ . Վրիստոս քահանայի պաշտօն
կը կատարէ , Լստուածային արդարու-

հաստատութեանը համար , պաշտամունքին
գործքին համար , Վրիստոսի մարմինին
շինութեանը համար , մինչև որ ամէննիս
ալ հասնինք հաւատքին միաբանութեանը
ու Լստուծոյ Որդին ճանչնալու . կա-
տարեալ մարդ ըլլալու՝ Վրիստոսի լը-
ման հասակին չափը ունենալու : Լք՛էս . դ .
11—13 :

(4) Այլը բնաւ չտեսաւ զԼստուած , բայց
միածին Որդին որ շօրը ծոցն է , անիկայ
պատմեց : Ը՛հ . ան . 18 : Հատ կերպե-
րով ու շատ օրինակներով առաջուց
Լստուած խօսեցաւ մեր հայրերուն հետ
մարգարէներով . աս կտքի օրերս իր Որ-
դովը մեր հետը խօսեցաւ : Լք՛ր . ան . 1 , 2 :

(5) Լք հաշտութեան խօսքը մեր մէջը
դրաւ : Թ Կրկն՛ . Է . 19 :

(6) Բայց մտիժարիչ Սուրբ շոգին՝ որ

Թիւնը լեցունելու՝ ⁽⁷⁾ ու մեզ Մատուծոյ
հետ հաշտեցունելու ⁽⁸⁾ համար իր մէկ
անգամ ինքզինքը զոհ մատուցանելովը
⁽⁹⁾ և շարունակ մեզի համար բարեխօ-
սուԹիւն ընելով ⁽¹⁰⁾ :

Հայրը իմ անունովս պիտի խրկէ, անիկայ
ձեզի բոլորը պիտի սորվեցընէ : Յօհ. ԺԳ. 26 :

⁽⁷⁾ Եւ անիկայ մեր մեղքերուն քաւուԹիւն
է : Խ Յօհ. Թ. 2 : Ար ինքը ողորմած ըլլայ՝
ու հաւատարիմ քահանայապետ Մա-
տուծոյ կողմէն, ժողովրդին մեղքերը քա-
ւելու համար : ԵԲԿ. Թ. 17 :

⁽⁸⁾ Եւ երկուքն ալ մէկ մարմին Էղած
հաշտեցունէ Մատուծոյ հետ իր խաչովը :
ԵԿԷ. Թ. 16 :

⁽⁹⁾ Ի այց ահա հիմայ մէկ անգամ մը ան
դարերուն վերջը իր անձին պատարագովը
յայտնուեցաւ մեզքը մէկ դի ձգելու հա-
մար : ԵԲԿ. Թ. 26 : Եւ սիրով վարվե-
ցէք՝ ինչպէս որ Վրիստոս ալ մեզ սիրեց, և իր
անձը մեզի համար մատնեց, պատարագ ու
զոհ ըլլալով Մատուծոյ անուշ հոտի : ԵԿ-
ԿԷ. Ե. 2 :

⁽¹⁰⁾ Աւստի բոլորովին կենդանի ալ ընե-

2. Ի՞նչպէս Վրիստոս Թագաւորի պաշտօն կը կատարէ :

Պ. Վրիստոս Թագաւորի պաշտօն կը կատարէ , մեզ իրեն հնազանդեցունելով⁽¹⁾ մեզ կառավարելով ու պաշտպանելով⁽²⁾ և իր ու մեր բոլոր Թշնամիները նուաճելով ու յաղթելով⁽³⁾ :

լու կարող է անոնք որ իրմով Աստուծոյ կուգան , որովհետև ինքը միշտ կենդանի է անոնց համար բարեխօս ըլլալու : Եբե . 25 :

(1) Եւրոպայի քու զօրութեանդ օրը յօժարակամ պիտի ըլլայ սուրբ զարդարանքով : Սաղմ . ԾԺ . 3 : Պարթ . Ե . 31 :

(2) Ինչու որ մեր վահանը Տէրօջն է , ու մեր Թագաւորը Իսրայէլին սուրբինն է : Սաղմ . ԶԺ . 18 :

(3) Ինչու որ անոր պէտք է Թագաւորութիւն ընել , մինչև որ բոլոր Թշնամիները իր ոտքերուն տակը դնէ : Խ Սրբն . ԺԵ . 25 : Սաղմ . ԾԺ :

Հ . Վրիստոսի խոնարհելը է՞նչ բանի վրայ կըկայանայ :

Պ . Վրիստոսի խոնարհելը կըկայանայ իր կնիկէ մը ծնած ըլլալուն վրայ, և ան ալ ցած վիճակի մէջ⁽⁴⁾ իր օրէնքի՝ տակ մտնելուն վրայ⁽⁵⁾ իր աս անցաւոր կենաց թշուառութիւններուն⁽⁶⁾

(4) Այլ իր առջինեկ՝ որդին ծնաւ, ու լաթով փաթթեց, և դրաւ անիկայ մսուրին մէջը : Վարդ . 7 : Որովհետեւ դուք գիտէք մեր Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքը . որ ինքը ձեզի համար աղքատ եղաւ՝ ան որ հարուստ էր, որ դուք անոր աղքատանալովը հարուստ ըլլաք : Գործ . 9 : Վարդ . 31 :

(5) Խրկեց Մատուած իր Որդին՝ որ կնիկէ մը եղաւ, ու օրէնքին տակը մտաւ : Վարդ . 4 :

(6) Հապա ես որդ եմ՝ ու մարդ չեմ, մարդկանց մէջը քամահրուած ու ժողովը դոց մէջը խայտառակ եղած : Սուրբ . 6 : Եսայ . 87 . 2, 3 : Եբր . 2, 3 : Եւստենը Յիսուս անապատը տարուեցաւ .

Մտուածոյ բարկուլթեանը՝ ⁽⁷⁾ և խաչին
անիծեալ մահին յանձնառու ըլլալուն
վրայ ⁽⁸⁾ ; իր թաղուած ըլլալուն վրայ ,

Հոգիէն՝ Սատանայէն փորձուելու համար
ԼՁ : Սաղմ . 7 . 1 — 11 : 4 . 7 . 1 — 14 :
Նոր համար ալ պէտք էր որ անոր բո-
լորովին եղբայրներուն նման ըլլալ : . . .
Ինչու որ ինչ բանով ինքը չարչարուեցաւ՝
փորձը սունելով , կրնայ փորձանաւորնե-
րուն ալ օգնական ըլլալ : Եբ . 17 . 18 : Եբ . 7 . 15 : Ես . 13 .
14 :

(7) Սկսեց տրտմիլ և հոգալ : Նատենը
ըսաւ անոնց . Իմ անձս մեռնելու չափ տրտ-
տում է : Սաղմ . իղ . 37 , 38 : Եւ ժամը
իննին () իսուս մեծ ձայնով մը կան-
չեց՝ ու ըսաւ , Ելի Ելի լամա սաբաք-
թանի , որ ըսել է՝ Մտուած իմ Մտ-
տուած իմ , իս ինչու թողուցիր : Սաղմ .
իէ . 46 : Հոգի ը . 32 :

(8) Որ Մտուածոյ կերպարանքը ունենա-
լով , յափշտակելու Բան մը չսեպեց Մ
հաւասար ըլլալը , հապա անձը ունայնացուց

ու քիչ մը ատեն ալ մահուան զօրու
թեանը տակը մնալուն վրայ ⁽⁹⁾ :

Հ. Վրիստոսի բարձրանալը ի՞նչ
բանի վրայ կրկայանայ :

Պ. Վրիստոսի բարձրանալը կը
կայանայ իր երրորդ օրը մեռելներէն
յարուժիւն առնելուն վրայ ⁽¹⁰⁾ իր եր-

ծառայի կերպարանք առնելով՝ մարդոցնը-
ման ըլլալով . և կերպարանքովը մարդու պէս
գտնուելով , ինքզինքը խոնարհեցուց՝ մինչև
մահուան հնազանդ եղաւ , ու ա՛ն ալ խա-
չին մահուան : Փիլիպ . ք . 6 , 7 , 8 : Եւ
Յիսուսը ծեծելով ձեռքերնին տուաւ՝ որ
խաչուի : Ստր . իէ . 26 : Յօհ . ԺԹ .
34 : Ղ . 1 . իք . 63 , 64 :

⁽⁹⁾ Ինչու որ՝ ինչպէս Յովնան իրեք օր
իրեք գիշեր կէտ ձուկին փորին մէջն էր .
ասանկ Արդին մարդոյ պիտի ըլլայ երկրիս
սրտին մէջը իրեք օր և իրեք գիշեր :
Ստր . Ժք . 40 : Սող . Ժի . 10 : Ղարթ .
ք . 24 , 25 , 26 : Հոռ . ի . 9 :

⁽¹⁰⁾ Եւ յարուժիւն առաւ երրորդ օրը՝

կինքը համբառնալուն վրայ⁽¹⁾, իր Հօր
Լստուծոյ աջ կողմը նստելուն վրայ⁽²⁾,
և իր վերջին օրը աշխարհքը դատելու
համար գալուն վրայ⁽³⁾ :

Հ . Ի՞նչպէս բաժանորդ կրլլանք
մենք Վրիստոսով ծախու առնուած
փրկութեանը :

Պ . Մենք Վրիստոսով ծախու առ-

գիրքերուն ըստին պէս : Խ Կորնթ . ԺԵ . 4 :

(1) Լսէ՛ Տէր Յիսուս ինքը անոնց հետ խօս-
սելէն ետքը երկինքը համբարձաւ : Մարկ .
ԺԴ . 19 :

(2) Լսէ՛ նստեցուց իր աջ կողմը երկինքին
մէջ : Լուկ . Խ . 20 :

(3) Լսէ՛ Յիսուսը որ ձեզմէն երկինքը համ-
բարձաւ, ասանկ պիպի գոյ ինչպէս որ անի-
կայ տեսաք երկինքը երթալ : Ղաթ . Խ . 11 :
ԺԷ . 31 : Ինչու որ՝ Վրիստոս ալ անոր հա-
մար մեռաւ՝ ու ապրեցաւ, որ առ հասարակ
մեռելներուն ու կենդանիներուն իշխէ :
Հուր . ԺԴ . 9 : Ինչու որ անոր պէտք է
թագաւորութիւն ընել, մինչև որ բոլոր
թշնամիները իր ոտքերուն տակը դնէ : Մկր-

նուաժ փրկութեանը ⁽⁴⁾ բաժանորդ
կըլլանք, Սուրբ Հոգիին անիկայ մեր
մէջը արդեամբ ներգործելովը ⁽⁵⁾ :

ջին թշնամին՝ որ պիտի խափանի, մահն է :
իւր լուրջ . ԺԷ . 25 , 26 :

⁽⁴⁾ Եւ անոր շնորհքովը ձրի կարգարաւ
եան Հիսուս Վրիստոսով եղած փրկու-
թիւնովը : Հով . 24 : Սրանով փրկու-
թիւն ունինք մենք իր արիւնին միջնորդու-
թիւնովը : Եւ . 7 : Ստուած
անիկայ որ մեզք չէր գիտէր, մեզի համար
մեղաւոր սեպեց . որ մենք անոր ձեռքովը
Ստուծոյ արդարները եղած ըլլանք : Իւր
լուրջ . 21 : Ստուած ինչպէս որ մէկ
մարդուն անհնազանդութիւնովը շատերը
մեղաւոր եղան, անանկ ալ մէկուն հնազան-
դութիւնովը շատերը արդար պիտի ըլլան :
Հով . 19 : Հապա իր արիւնովը մէկ
անգամ մը սուրբ տեղերը մտաւ՝ յաւիտենա-
կան փրկութիւն գտնալով : Եւ . 12 :

⁽⁵⁾ Ինչու որ Ստուած առաջուց՝ մեզ
ընտրեց փրկուելու Հոգիին արբելովը՝ ու
ճշմարտութեան հաւատքովը : Իւր . 12 :
Ինչու որ Ստուած է՝ որ ձեր մէջը

Հ . Սուրբ Հոգին Վրիստոսով
 ծախու առնուած փրկութիւնը ի՞նչ
 պէս կրնէր գործէ մեր մէջը :

Պ . Սուրբ Հոգին Վրիստոսով ծա-
 խու առնուած փրկութիւնը մեր մէջը
 կրնէր գործէ մեր ներսիդին հաւատքը
 հաստատելով ⁽⁶⁾ , ու անով մեզ Վրիս-
 տոսի հետ միաւորելով մեր իսկական

կրօնը կամելու ու ընելու իր հաճու-
 թեանը համար : Փիլիպ . ք . 13 : Եւ նոր
 մարդը վրանիդ հագնիք , ան որ Մատուծոյ
 պէս ստեղծուած է , արդարու-
 թիւնով ու ճշմարիտ սրբութիւնով : Ե-
 փ . ք . 24 : Եւ թէ արդարութեան գործ-
 քերէն որ մենք ըրինք . հապա իր ողորմու-
 թիւնովը մեզ փրկեց նորէն ճնանելու ա-
 լազանին ձեռքովը՝ ու Սուրբ Հոգին նո-
 րոգելովը : Տիմ . ք . 5 :

(6) Մտէ կաւ ան հաւատքովը արդա-
 րացած ըլլալով . խաղաղութիւն ունինք
 Մատուծոյ հետ՝ մեր Տէրոջը Յիսուս Վր-
 իստոսի ձեռքով : Հովհ . Ե . 1 : Եւ որ
 դուք չտեսաք՝ ու սիրեցիք , որ անիկայ հի-

կոչումովը (7) :

Հ . Ի՞նչ է իսկական կոչումը :

Պ . Իսկական կոչումը Լստուծոյ
Հողին գործն (8) է, որով մեր մեղաւոր ու
թշուառ ըլլալը մեզնի իմացունելով (9) ,
մեր միտքերը Վրիստոսի գիտութիւ-

մա չէք տեսնար , բայց հաւատացիք , և
ուրախ էք անպատմելի ու փառաւորեալ
ինգութիւնով : Թ . ՊԷ . Թ . 8 :

(7) Այսին զի անոր շնորհքովը փրկուած
էք դուք հաւատքով . և աս չէ՛ թէ ձեզմէ
է , հապա Լստուծոյ պարզեն է : Լ . ԳԷ .
Թ . 8 : Որ Վրիստոս հաւատքով ձեր սրտին
մէջը բնակի : Լ . ԳԷ . Գ . 17 : Բայց դուք
Վրիստոսի մարմինն էք , ու անոր անդամնե-
րէն անդամներ : Հաւատարիմ է Լստուած,
որ իրմով դուք կանչուեցաք հաղորդ ըլլալու
իր Որդւոյն մեր Տէր Յիսուս Վրիստոսին :
Թ . ԿԲԷԲ . Թ . 9 :

(8) Որ մեզ փրկեց , ու սուրբ կոչումի մը
կանչեց : Թ . ՏԷԺ . Թ . 9 :

(9) Այլ ինքը որ դայ՝ աշխարհը պիտի
յանդիմանէ մեզքերուն համար : Է . ԶԵԴ .

նովը լուսաւորելով ⁽¹⁰⁾ , և մեր կամքերը նորոգելով ⁽¹⁾ , կը համոզէ ու կը կարողացունէ ⁽²⁾ մեզ Վետարանին մէջ ձրխապէս մեզի ընծայուած ⁽³⁾ հիսուս Վրխատորը գրկել ու ընդունել :

՝ . Վնոնք որ խկապէս կոչուած են, ինչ պարզեւնեքու մասնակից կը լան աս անցաւոր կենաց մէջ :

Պ . Վնոնք որ խկապէս կոչուած են՝ աս անցաւոր կենաց մէջ մաս

ԺՂ . 8 :

⁽¹⁰⁾ Ինչու որ ինքը իմինէս պիտի առնէ՝ և ձեզի պատմէ : Հօհ . ԺՂ . 14 :

⁽¹⁾ Եւ իմ հոգիս ձեզի պիտի տամ . ու իմ արդարութեանս մէջը քալէք, ու իմ իրաւունքներս պահէք . ու ընէք անոնք : Եղ . ԼՂ . 27 :

⁽²⁾ Մէկը չկրնար ինծի գալ՝ թէ որ իս խրկող չայրը անիկայ չքաշէնէ . որ ես անոր յարութիւն կուտամ ետքի օրը : Հօհ . Ղ . 44 :

⁽³⁾ Եւ ան որ կուզէ կենաց ջուրը ձրի առնել՝ թող գայ : Հայր . իբ . 17 :

Նակից կըլլան արդարութեան ⁽⁴⁾, որ զեզրութեան ⁽⁵⁾, սրբութեան ⁽⁶⁾, և ան ամէն պարզեաներուն, որոնք կամ ասոնց ընկերներն են կամ ասոնցմէ յաւաք կուգան ⁽⁷⁾ :

Ն . Ի՞նչ է արդարութիւնը :

Պ . Արդարութիւնը Աստուծոյ ձրի շնորհացը մէկ գործն ⁽⁸⁾ է, որով ինքը

⁽⁴⁾ Այլ որոնք որ կանչեց՝ նաև արդարացուց անոնք : Նահապետ . ք . 30 :

⁽⁵⁾ Առաջուց ինքը մեզ սահմանեց իրեն որդեգիրը լալու (Յիսուս Վրիստոսի ձեռքովը : Վրիստ . Կ . 5 : Նապա որդեգիրը լալու հոգին առիք, որ անով կը կանչենք Աբրայհայր : Նահապետ . ք . 15 :

⁽⁶⁾ Ինչու որ անկէ՛ց էք դուք Վրիստոս Յիսուսի ձեռքով, որ ան մեզի Աստուծմէ իմաստութիւն՝ արդարութիւն՝ աւ սրբութիւն և փրկութիւն եղաւ : Կորնթ . Կ . 30 :

⁽⁷⁾ Ամէն բան ձերն է : Կորնթ . Գ . 22 :

⁽⁸⁾ Այլ անոր շնորհքովը ձրի կարգարա-

մեր բոլոր մեղքերը կընե՞րէ՞ (9) , ե իր առջևը մեզ արդարներու պէս կընդունի (10) ուրիշ բանի համար չէ՛ բայց միայն մեզի ընծայուած Վրիստոսի արդարութեանը համար (1) , որ ան ալ միայն հաւատքով ընդունած է (2) :

Հ . Ի՞նչ է որդեգրութիւնը :

Պ . Որդեգրութիւնը Մատուծոյ ձրի

նան Հիսուս Վրիստոսով եղած փրկութիւնովը : Հոով՝ . Գ . 24 :

(9) Որ անով փրկութիւն ունինք մենք իր արիւնին միջնորդութիւնովը , մեր մեղքին թողութիւն : Ա՛յն . Կ . 7 :

(10) Ասան զի Մատուած անիկայ՝ որ մեղք չէր գիտէր , մեզի համար մեղաւոր սեպեց . որ մենք անոր ձեռքովը Մատուծոյ արդարները եղած ըլլանք : Թ . Կ . Բ՛նԷ . Ե . 21 :

(1) Ասան զի ինչպէս որ մէկ մարդուն անհնազանդութիւնովը շատերը մեղաւոր եղան , անանկ ալ մէկուն հնազանդութիւնովը շատերը արդար պիտի ըլլան : Հոով՝ . Ե . 19 :

(2) Մարդը հաւատքով կարգարանայ

չնորհացը մէկ գործն է ⁽³⁾ , որով Մատուծոյ որդւոցը թուոյն մէջ կընդունուինք , ու անոնց բոլոր արածնութիւններուն հաղորդ կըլլանք ⁽⁴⁾ :

Ն . Ի՞նչ է սրբութիւնը :

Պ . Սրբութիւնը Մատուծոյ ճրի շնորհացը գործն է ⁽⁵⁾ , որով կընորոգուի մեր բոլոր մարդը Մատուծոյ պատկերին պէս ⁽⁶⁾ , ու օր ըստ օրէ աւելի

առանց օրէնքին գործքերուն : Նորոյն . Գ . 28 :

⁽³⁾ Տեսէք՝ շայրը ինտոր սէր շնորհաց մեզի , որ մենք Մատուծոյ որդիք ըսուինք : Ինչ . Գ . 1 :

⁽⁴⁾ Եւ թէ որ որդիք , ուրեմն ժառանգներ . Մատուծոյ ժառանգներ՝ ու Քրիստոսի ժառանգակիցներ : Նորոյն . Ը . 17 :

⁽⁵⁾ Մատուած առաջուց մեզ ընտրեց փրկուելու շողիին սրբելովը՝ ու ճշմարտութեան հաւատքովը : Ը (Թ)՝ . Ը . 13 : Ինչու որ Մատուած է՝ որ ձեր մէջը կըյաջողէ կամելը ու ընելը իր հաճութեանը համար : Փիլիպ . Ը . 13 :

⁽⁶⁾ Եւ նոր մարդը վրանիդ հագնիք , ան

կը կարողանանք (7) մեռնելու դէպի մեզքը , և կենդանի ըլլալու դէպի արդարութեան :

Հ . Ի՞նչ են ան պարզեաները՝ որ աս անցաւոր կենաց մէջ արդարութեան՝ որդեգրութեան և սրբութեան ընկերներն են , կամ անոնցմէ կը բըղխին :

Պ . Ըն պարզեաները՝ որ աս անցաւոր կենաց մէջ արդարութեան՝ որդեգրութեան և սրբութեան ընկերներն են , կամ անոնցմէ կը բըղխին , են Մատուծոյ սիրոյն ստուգութիւնը , խղճմտանքին խաղաղութիւնը (8) , Աուրբ Հոգիով

որ Մատուծոյ պատկերին պէս ստեղծուած է արդարութիւնով ու ճշմարիտ սրբութիւնով : Եփեւ . 7 . 24 :

(7) Մճեցէք մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորքովը ու գիտութիւնովը : ԹՊԷ . 7 . 18 :

(8) : Մսկէ ետև ան հաւատքովը արդարացած ըլլալով , խաղաղութիւն ունինք

եղած ուրախութիւնը ⁽⁹⁾ , շնորհաց ա-
ճումը , և անոր մէջ մինչև ցվախճան
յարատեութիւնը ⁽¹⁰⁾ :

Հ . Ի՞նչ պարզեւներ կրնդունին հա-
ւատացեալները Վրիստոսէն՝ իրենց
մահուան ատենը :

Պ . Հաւատացեալներուն հոգիները
իրենց մահուան ատենը կատարեալ

Եստուծոյ հետ՝ մեր Տէրօջը Հիսուս Վրիս-
տոսի ձեռքով : Լուսն : Ե . 1 :

⁽⁹⁾ Ար անկիայ հիմա չէք տեսնար ,
բայց հաւատացիք , և ուրախ էք անպատ-
մելի ու փառաւորեալ խնդութիւնով : Խ
Պ . Խ . 8 :

⁽¹⁰⁾ Երգարներուն ճամբան արեւին լու-
սին պէտէ , որ պայծառ կրփայլէ օրուան հա-
տարակ ատենը : Լուսն . 7 . 18 : Եւ բա-
նին վրայ յոյս ունիմ՝ թէ ան որ ձեր մէջը
բարեգործութիւն սկսեցնէ , մինչև Հիսուս
Վրիստոսի օրը կրկատարէ : Փիլիպ .
Խ . 6 : Եւ որոնք որ առաջուց հրաւի-
րեց , նաև կանչեց անոնք , և որոնք որ
կանչեց՝ նաև արդարացուց անոնք , և ու-

կըլան սրբութեամբ (1), և անմիջապէս կանցնին փառաց մէջ կըմտնան (2), ու անոնց մարմինները տակաւին Վրիստոսինը ըլլալով՝ կըհանգստանան իրենց գերեզմաններուն մէջը մինչև յարութեան օրը (3) :

— Ի՞նչ պարզեւներ կընդունին հաւատացեալները Վրիստոսէն՝ յարութեան օրը :

— րոնք որ արդարացուց, նաև փառաւորեց անոնք : Լուով . ք . 30 :

(1) Եւ արդարներուն հոգիներուն՝ որ կատարուեր են : Եբր . Ժք . 23 :

(2) Հիսուս ալ ըսաւ անոր . Իրա՛ւ կըսեմ քեզի . Դուն այսօր իմ հետս դրախտին մէջը պիտի ըլլաս : Գ . Կ . իք . 43 : Երկու կողմանէ ալ նեղութիւն ունիմ ելելու ու Վրիստոսի հետ ըլլալու փափաքիլը էփեթթ աղէկ կըսեպեմ : : Փիլիպ . Կ . 23

(3) Լնանկալ Լստուած Հիսուսով նընջեցեալները պիտի բերէ անօր հետ : Վրիստոսով մեռեալները առաջ յարութիւն պիտի առնեն : Կ (ժ) . ք . 13 , 15 :

Պ . Յարուժեան օրը հաւատա-
ցեալները փառքով յարուժին առած
ըլլալով⁽⁴⁾ իրենց արդարացած և ըն-
դունուած ըլլալը յայտնապէս պիտի հը-
րատարակուի⁽⁵⁾ , և կատարելապէս
պիտի օրհնուին Մատուծոյ լեցուն վա-
յելչու թիւնովը⁽⁶⁾ , յաւիտեանս յաւիտե-
անից⁽⁷⁾ :

(4) Մարգուժիւնով կրցանուի , ու
փառքով յարուժին կառնէ : Կրնի .
ԺԵ . 43 :

(5) Այլ որ մարգոց առջև իս կրդաւանի,
ես ալ անիկայ կրդաւանիմ իմ շօրս առ-
ջևը՝ որ երկինքն է : Մարի . Ժ . 32 :

(6) Մն բաները որ աչք չէ՛ տեսեր՝ և ա-
կանջ չէ՛ լսեր , ու մարգու սրտին մէջ չէ՛
ինկեր , Մատուած իր սիրելիներուն պատ-
րաստեց : Կրնի . Թ . 9 :

(7) Եւ անանկ ամէն իժիր Տէրօջը հետ
պիտի ըլլանք : Կրնի . Դ . 16 :

ՏՐ : Լ՝ ՄՏՈՒԱԾ ՄԱՐԴԷՆ ԻՆՉ ԸՆԵԼ
ԿԸՊԱՀԱՆՁԵ :

Հ . Ի՞նչ է ան պարտաւորութիւնը
որ Լ՝ստուած մարդէն կը պահանջէ :

Պ . Լ՝ն պարտաւորութիւնը՝ որ Լ՝ստուած մարդէն կը պահանջէ, իր յայտնուած կամքին ⁽¹⁾ հնազանդութիւն ընելն է :

Հ . Լ՝ստուած սկիզբէն ի՞նչ կանոն յայտնեց մարդոյն, որ անոր նայելով հնազանդութիւն ընէ :

Պ . Լ՝ն կանոնը՝ որ Լ՝ստուած սկիզբէն յայտնեց մարդոյն որ անոր հնազան-

(1) Տէրը քեզմէ ի՞նչ կըխնդրէ . բայց իրաւունք ընել ու ողորմութիւն սիրել . ու պատրաստ ըլլալ քու Տէր Լ՝ստուծոյդ ետեւէն երթալու : Ս՛րբ . ի՛շ . 8 : Լ՝ստուծմէ վախցիր . և անոր պատուէրները պահէ՛ . ինչու որ աս է մարդոց բոլոր պարտաւորութիւնը : Երկ . Ժ՛ք . 13 :

դի , բարոյական օրէնքն էր (2) :

Հ . Բարոյական օրէնքը համառօտաբար ի՞նչ բանի մէջ կը պարունակուի :

Պ . Բարոյական օրէնքը համառօտաբար տասը պատուիրանքներուն մէջ կը պարունակուի (3) :

Հ . Տասը պատուիրանքներուն բովանդակութիւնը ի՞նչ է :

Պ . Տասը պատուիրանքներուն բովանդակութիւնն է սիրել մեր Տէր Աստուածը մեր բոլոր սրտովը , մեր բոլոր հոգիովը , մեր բոլոր զօրութիւնովը և մեր բոլոր մտքովը . ու անանկ ալ մեր

(2) Ար կը ցուցնեն օրէնքին գործքերը իրենց սրտին մէջ գրուած՝ իրենց խղճմբանքին վկայութեամբը , և իրենց միտքին դատմամբը իրար յանդիմանելով կամ թէ իրաւունք տալով : Հաս. զ. ք. 15 :

(3) Աստախատակներուն վրայ՝ առջի գրութեան պէս , լեռանը վրայ կրակին մէջէն Տէրը ձեզի ըսած տասը պատգամները գրեց : ք (Օրէն. Գ. 4 :

ընկերը մեր անձին պէս ⁽¹⁾ :

Հ , Ի՞նչ է տասը պատուիրանքներուն յառաջաբանութիւնը :

Պ . Տասը պատուիրանքներուն յառաջաբանութիւնը աս խօսքն է . Եւ եւմ Եւ հօլա բու Եւ տուածդ՝ որ քեզ եւ գիպտոսի երկրէն՝ ծառայութեան տունէն հանեցի ⁽²⁾ :

Հ . Տասը պատուիրանքներուն յառաջաբանութիւնը ի՞նչ կըսորվեցունէ մեզի :

Պ . Տասը պատուիրանքներուն յառաջաբանութիւնը կըսորվեցունէ մեզի,

⁽¹⁾ Բու Տէր Եւ տուածդ պիտի սիրես քու բոլոր սրտէդ , և քու բոլոր անձէդ , և քու բոլոր միտքէդ : Եւ է մեծը ու առաջին պատուիրանքը : Երկրորդը ասոր նման՝ քու ընկերդ պիտի սիրես քու անձիդ պէս : Եւ երկու պատուիրանքէս կախուած են բոլոր օրէնքները և մարգարէները : Մատթ . իբ . 37—40 :

⁽²⁾ Եւ լեց . ի . 23 : ի () րէն . Է . 6 :

որ Մատուած՝ Տէրը՝ և մեր Մատուածը՝
 ու Փրկիչը ըլլալուն համար պարտաւոր
 ենք բոլոր իր պատուիրանքները պա-
 հել (6) :

Հ . Ո՞րն է առաջին պատուիրանքը :

Պ . Մ ա ջ ի ն պատուիրանքը աս է . Ի մ
 առջևս ուրիշ աստուածներ չպիտի ու-
 նենաս :

Հ . Ի՞նչ կը պահանջէ առաջին
 պատուիրանքը :

Պ . Մ ա ջ ի ն պատուիրանքը կը պա-
 հանջէ մեզի որ գիտնանք (7) ու խոս-

(6) Մ.ՍԼԸ մենք պիտի պաշտենք Տէրը .
 ինչու որ ան է մեր Մատուածը : Յե-
 իղ . 18 : Ինչու որ ան է քու Տէրդ ու
 անոր երկրպագութիւն ըրէ : Սող . խե . 11 :
 Ինչու որ սուղ զինով ծախու առնուեցաք .
 փառաւորեցէք Մատուած ձեր մարմիննե-
 րուն ու հոգիներուն մէջը , որ Մատուածէ
 է : Թ Կրիսթ . իղ . 20 :

(7) Տ՝անչցի՛ր քու Հօրդ Մատուածը :
 Թ Սոս . իղ . 9 : Ուրեմն բարեկամ ե-
 ղի՛ր անոր հետ : Յովթ . իղ . 21 :

տողանինք թէ Մատուած է միայն ճշմարիտ Մատուածը ⁽⁸⁾, ու մեր Մատուածը ⁽⁹⁾, և աս խոստովանութեանը համեմատ իրեն երկրպագութիւնը նենք ⁽¹⁰⁾, ու զինքը փառաւորենք :

Հ. Ինչ կարգիլէ առաջին պատուիրանքը :

Պ. Մաջին պատուիրանքը կարգիլէ Մատուածոյ ճշմարիտ Մատուած ու մեր Մատուածը ըլլալը ⁽¹⁾ ուրանա

⁽⁸⁾ Ղուեա միայն Մատուած : Դ. Թ. 15 :

⁽⁹⁾ Սան զի աս Մատուածը մեր Մատուածն է յախտեանս յախտենից : Սող. 14 :

⁽¹⁰⁾ Քու Տէր Մատուածոյդ երկրպագութիւնը նես, ու միայն անիկայ պաշտես : Սող. Դ. 10 :

⁽¹⁾ Մանկ որ բնաւ ալ պատասխան մը չգտնան տալու : Ինչու որ իրենք Մատուած ճանչցան՝ և Մատուածոյ մը պէս չփառաւորեցին : Հող. Կ. 20, 21 :

լը ⁽²⁾ , կամ անոր երկրպագութիւնն չընելը և անիկայ չփառաւորելը , և աս երկրպագութիւնը ու փառքը՝ որ միայն իրեն կը վայելէ , ուրիշ մէկու մը տալը ⁽³⁾ :

Հ . Ընտանիքին պատուիրանքին մէջն եղած աս խօսքէն «Իմ առջևս» ի՞նչ կը սորվինք :

Պ . Ընտանիքին պատուիրանքին մէջն եղած աս խօսքը «Իմ առջևս» կը սորվեցունէ մեզի , թէ Ըստուած՝ որ ամեն բաները կը տեսնայ ⁽⁴⁾ , կը նկատէ ուրիշ

⁽²⁾ Խենդը իր սրտին մէջը ըսաւ թէ , Ըստուած չկայ : Սող . ԺԴ . 1 : Եւ այց իմ ժողովուրդս մտիկ չըրաւ իմ ձայնիս , ու Խորայէլը զիս չուզեց : Սող . ձԿ . 11 :

⁽³⁾ Ընտանիք՝ որ Ըստուծոյ ճշմարտութիւնը սուտի հետ փոխեցին , հնազանդեցան ու երկրպագութիւն ըրին ստեղծուածներուն և չէ թէ Ստեղծողին , ա՛ն որ յաւիտեան օրհնեալ է . ամէն : Ընտ . Կ . 25 :

⁽⁴⁾ Եւ չկայ մէկ արարած մը անոր դի-

Լստուած մը ունենալուն մեղքը և շատ կը վշտանայ անոր վրայ ⁽⁵⁾ :

Հ . Ո՞րն է երկրորդ պատուիրանքը :

Պ . Երկրորդ պատուիրանքը աս է .

Գունքեղի փորուած կուռք չպիտի շինես , ոչ ալ վերը երկինքին մէջ կամ վարը երկրի վրայ կամ երկրին տակի ջուրերուն մէջ եղած բաներու բնաւ մէկ նմանութիւնը . Լնոնց երկրպագութիւն չպիտի ընես , ու զանոնք չպիտի պաշտես . Ինչու որ ես

մացը չերեցած . հապա ամէն բան բաց ու յայտնի՝ է անոր աչքին առջևը , որուն հետ որ մեր հաշիւը է : Եբ . 7 . 13 :

⁽⁵⁾ Եթէ մեր Լստուծոյ անունը մոռցեր ենք նէ , կամ՝ օտար աստուծոյ ձեռքերնիս երկընցուցեր ենք նէ : Սողմ . խ7 . 20 , 21 : Ինծի բարկացուցին իրենց օտար աստուածներովը . ու իրենց գարշելի բաներովը ինծի սրգողցուցին : Ի () լի . 16 :

Տէրը բու Մատուածդ՝ նախանձոտ Մատուած եմ՝ որ կը հատուցանեմ հայրերուն մեղքը որդւոցը վրայ մինչև անոնց երբորդ ու չորրորդ ցեղը՝ որ կանոնն զիս . և կողորմեմ անոնց մինչև հազար ցեղը որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն :

Հ . Ի՞նչ կը պահանջէ երկրորդ պատուիրանքը :

Պ . Երկրորդ պատուիրանքը կը պահանջէ ընդունել կատարել՝ ու անխառն և ամբողջ պահել ⁽⁶⁾ , ան ամէն պաշտօնները ու կարգադրութիւնները՝ որոնք որ Մատուած կը հրամայէ Մատուածաշունչին մէջ :

Հ . Ի՞նչ բան կարգիլէ երկրորդ պատուիրանքը :

(6) Ի՞մէն բան՝ որ քեզի կը պատուիրեմ էս ասօր , զգուշացիր որ ընես . բան մը չաւելցընես անոր , ու բան մըն ալ չզրակսեցընես անկէց : () լին . Ժբ . 32 :

Պ . Երկրորդ պատուիրանքը կարգիլէ որ Մատուծոյ երկրպագութիւն չընենք ու իցէ նմանութիւններով (7) կամ ի' նչ և իցէ ուրիշ կերպով՝ որն որ Մատուած չհրամայեր Մատուածաշունչին մէջ (8) :

Ը . Երկրորդ պատուիրանքը հաստատող իրաւունքները որո՞նք են :

Պ . Երկրորդ պատուիրանքը հաստատող իրաւունքները ասոնք են . թէ Մատուած

(7) Այլ մեծ զգուշութիւն ըրէք ձեր անձինքներուն . ինչու որ մէկ նմանութիւն մը չտեսաք ան օրը՝ որ խօսեցաւ Տէրը ձեզի հետ Վորեք լեռը հրոյ մէջէն : Անօրէնութիւն մի՛ ընէք . ու ամէն որ և իցէ պատկերի նմանութիւնը ձեզի կուռք մի՛ շինէք : () Են . 7 . 15 , 16 : Բաղդաստէ կողմ . 9 :

(8) Ան բանին վրայ ուրիշ բան չաւելցընէք՝ որն որ ես ձեզի կրպատուիրեմ . ու բան մըն ալ չպակսեցընէք անկէց . պիտի պահէք մեր Տէր Մատուծոյ հրամայնք որ ես ձեզի կրպատուիրեմ : () Են . 7 . 2 :

տուած մեր զերագոյն իշխանն է ⁽⁹⁾ թէ
մենք իր ստացուածը և ժողովուրդն ենք
⁽¹⁰⁾ , և թէ ինքը նախանձաւոր է իր
պաշտօնին համար ⁽¹⁾ :

Հ . Ո՞րն է երրորդ պատուիրանքը :

Պ . Երրորդ պատուիրանքը աս է .
Տէրջը բու Լստուծոյդ անունը դա-
տարկ տեղը բերանդ չպիտի առնես, ին-
չու որ Տէրը իր անունը դատարկ տե-
ղը բերանը առնողը անմեղ պիտի չսե-
պէ :

Հ . Ի՞նչ կը պահանջէ երրորդ պա-
տուիրանքը :

⁽⁹⁾ Տէրը մեր հայրն է , Տէրը մեր դա-
տաւորը , Տէրը մեր իշխանը , Տէրը մեր
թագաւորը : Լսայ . ԼԳ . 22 :

⁽¹⁰⁾ Ինչու որ ան է մեր Լստուածը , ու
մենք անոր արօախն ժողովուրդը , և անոր
ձեռքի ոչխարներն ենք : Սող . զԵ . 7 :

⁽¹⁾ Այսին զի ուրիշ Լստուածներու եր-
կրոպագութիւն պիտի չընես . քանզի նա-
խանձօտ անուն ունեցող Տէրը՝ Լստուած

Պ . Երրորդ պատուիրանքը կրպահանջէ որ Մտուծոյ անունը ⁽²⁾, մակահուննէ ըր , հանգամանքները ⁽³⁾ , կարգադրութիւնները ⁽⁴⁾ , գիրքը ⁽⁵⁾ , ու գործքերը ⁽⁶⁾ , սուրբ կերպով ու յարգութեամբ գործածուին :

Հ . Ի՞նչ բան կարգիլէ երրորդ պատուիրանքը :

Նախանձտ է : Եւլց . ԼԳ . 14 :

⁽²⁾ Տէրոջը տուէք անոր անունին փառքը : Սաղ . իԹ . 2 :

⁽³⁾ Սուրբ՝ Սուրբ՝ Սուրբ Տէր Մտուած Մենակալ , որ էր՝ և է , և ան որ պիտի գայ : Հայ . Գ . 8 :

⁽⁴⁾ Օգուշացի՛ր ոտքերուդ՝ երբոր Մտուծոյ տունը կերթաս , և փոխանակ խնդերուն զո՛հը մատուցանելու՝ ըսելու մօտեցի՛ր : Եւլ . 1 :

⁽⁵⁾ Խօսքը անարգողը՝ կրկորսուի , բայց ապատուիրանքէն վախցողը՝ վարձք կառնէ : Եւլ . ԺԳ . 13 :

⁽⁶⁾ Տէր Մտուած Մենակալ՝ քու գործքերդ շատ մեծ ու զարմանալի են , քու

Պ . Երբորդ պատուիրանքը կարգի-
լէ ան ամէն բանին պղծելը կամ չարա-
չար կերպով գործածելը , որով Լս-
տուած ինքզինքը մարդոց կըձանչ-
ցունէ (7) :

Հ . Ի՞նչ իրաւունքով կըհաստա-
տուի երբորդ պատուիրանքը :

Պ . Երբորդ պատուիրանքը հաստա-
տող իրաւունքը ան է , որ սա պատուի-
րանքը չբռնողները թէպէտև մարդոց-
մէ եղած պատիժէն ազատին՝ բայց մեր
Տէր Լստուածը պիտի չթողու անոնք

Ճանապարհներդ արդար ու ճշմարիտ են՝ ո՛վ
թագաւոր ամէն ազգերուն : (Յայր . ԺԵ . 3 :

(7) Եւ Լստուածոյդ անունը չպղծես : (Եր-
ԺԸ . 21 : Երդում չընէք , ո՛չ երկինքի վրայ
ոչ երկրի վրայ , ոչ մէկ ուրիշ երդում մը .
հասպա ձեր այոն՝ այո ըլլայ , և ոչո՛ր ոչ :
Յակովբ . Ե . 12 : Թէ որ մտիկ չընէք , ու
սիրտերնիդ չգնէք , թէ անունիս պատիւ
տաք , կրսէ զօրութեանց Տէրը , անասնն
անէծքը պիտի խրկեմ ձեզի : Մաղ . ք . 2 :

որ իր արդար դատաստանէն զերծ մընան (8) :

Հ . Ո՞րն է չորրորդ պատուիրանքը :

Պ . Չորրորդ պատուիրանքը աս է .

Հանգստութեան օրը միտքդ բե՛ր անխկայ սուրբ պահելու համար . վեց օր պիտի աշխատիս , ու բոլոր գործդ ընես , բայց եօթներորդ օրը Տէրօջը քու Մատուցող հանգստութեան օրն է . ան օրը գործ մը չպիտի գործես , ո՛չ դռն՝ ո՛չ քու որդիդ՝ ո՛չ քու աղջիկդ՝ քու ծառայող ու աղախինդ՝ ո՛չ քու անասունըդ՝ ո՛չ ալ քու տանդ մէջը եղած օ-

(2) Եթէ չնկատես աս գրքին մէջը գրուածին՝ աս օրէնքին բոլոր խօսքերովը վարուելու , որ աս փառաւոր ու սոսկալի անունէն՝

Ք ՈՒ Տ ԵՐ ԱՍՏՈՒ Ծ Մ Ե Դ

վախնա՛ս , Մատուած ալ քու պատիժներդ է քու ջեղիդ պատիժները՝ զարմանալի պիտի ընէ : Թ () Ե՛ն . Ի՛ք . 58 , 59 : Բայց յանցաւորը բնաւ ազատ չթողուր : Եւէջ . Լ՛ի . 7 :

տարականդ . քանզի Տէրը վեց օրին մէջ
ըրաւ երկինքը ու երկիրը և ծովը ու
անոնց մէջը բոլոր եղածները , և եօթ-
ներորդ օրը հանգստացաւ . անոր հա-
մար Տէրը օրհնեց հանգստութեան օ-
րը , ու սրբեց ան :

Ը . Ի՞նչ կը պահանջէ չորրորդ պատ-
ուիրանքը :

Պ . Չորրորդ պատուիրանքը կը պա-
հանջէ որ սուրբ պահուին Լստուծոյ
համար ան սահմանուած ատենները ⁽⁹⁾
որ Լստուած Սուրբ Գիրքին մէջը կը
հրամայէ . մանաւանդ եօթը օրէն մէկ
բոլոր օր մը ⁽¹⁰⁾ , որ սուրբ Շաբաթ
ըլլայ իրեն :

⁽⁹⁾ Իմ շաբաթներս պիտի պահէք . ու
իմ սրբութիւններս պիտի յարգէք՝ քանզի
ես եմ Տէրը : Գլխ . ԺԹ . 30 : Օգոյշ
եղիք շաբաթ օրը սուրբ պահել . ինչպէս
որ քու Տէր Լստուածդ քեզի պատուիրեց :
Թ () րին . Ե . 12 :

⁽¹⁰⁾ Եօթներորդ օրը քու Տէր Լստու-

Հ. Եօթնէն ո՞ր օրը Լստուած սահմանեց շաբաթական Տօնը ըլլալու համար :

Պ. Լշխարհիս սկիզբէն մինչև Վրլիստոսի յարութիւն աւելը շաբաթին Եօթներորդ օրը՝ շաբաթական Տօնը ⁽¹⁾ ըլլալու համար սահմանեց Լստուած . և անկից ՚ի վեր շարունակաբար մինչև աշխարհիս վերջը շաբաթին առաջին օրը սահմանեց՝ որ է Վրիստոնէից Աիրակին ⁽²⁾ :

Ճոյգ շաբաթն է : () ըն. Ե. 14 : Եօթներորդ օրը պիտի հանգչիս . շաբաթ սուրբ է ու Տէրօջը հանգիստը : Ելեց . ԼԵ. 2 :

⁽¹⁾ Եւ Լստուած օրհնեց Եօթներորդ օրը , ու սրբեց անիկայ : Օննդ . ք . 3 :

⁽²⁾ Եւ շաբաթ օրը երբոր ժողվուեր էինք հացը կտրելու՝ Պօղոս անոնց կըքարոզէր : Վորժ . Ի . 7 : Եւ կիրակի օրը Հոգին իմ վրաս եղաւ : Հայր . ան 10 : Յովն . Ի . 1 , 19 , 26 : Վորժ . ք . 1 : ան Վորնն . Ժ . 2 :

2. Կիրակին ի՞նչպէս սուրբ պահելու է :

Պ. Կիրակին սուրբ պահելու է՝ բոլոր ան օրը սուրբ հանգստութիւն մը ընելով, մինչև անգամ ան աշխարհային գործքերէն և զբօսանքներէն դադարելով որ օրինաւոր են ուրիշ օրերը ⁽³⁾, և բոլոր ան օրը հրապարակական ու առանձին Մատուածպաշտութեան կրթութիւններուն մէջ անցունելով ⁽⁴⁾, բաց ՚ի հարկաւորութեան

(3) Ա կց օր պիտի գործես, եօթներորդ օրը շաբաթ է հանգստութեան՝ որ Տէրը սուրբ անուանեց, բնաւ գործ մը չպիտի գործէք : Վեպ. ինչ՝ 3 : Ի՞նչ որ ոտքդ դարձրնես քու կամքդ չընելու սուրբ օրը՝ ու շաբաթ օրերը Մատուծոյ փափուկնուիրուածներ անուանես, ու քու ոտքդ չդարձրնես գործելու, ու բարկութեան բան մը չխօսիս քու բերնովդ ևն : Մատ. ծր. 13 :

(4) Աւ շաբաթ է շաբաթ ամէն մարմին պիտի գայ երկրպագութիւն ընել իմ առ-

ու ողորմութեան գործքերուն մէջ ծախելու ժամանակէն ⁽⁵⁾ :

Հ. Ի՞նչ կարգիլէ չորրորդ պատուիրանքը :

Պ. Չորրորդ պատուիրանքը կարգիլէ կիրակի օրուան պարտաւորութիւններուն զանցաւութիւնը կամ անզգոյշ գործադրութիւնը ⁽⁶⁾ , և ան օրը

ջևս կըսէ Տէրը : Եւոպ . կդ . 23 : Ինչու որ շաբաթը Տէրոջը է՝ ձեր ամէն բնակութիւններուն մէջ : Ղար . իդ . 3 : Պօղոս ալ սովորութեանը պէս անոնց քոյր մտաւ , և իրեք շաբաթ օր խօսեցաւ անոնց հետ գիրքերէն : Ղարծ . ժէ . 2 :

⁽⁵⁾ Ըն առնելը Յիսուս շաբաթ օրը գընաց անոնց արտերուն մէջէն , և իր աշակերտները անօթեցան , ու սկսեցին ցորենի գլուխ փրցունել և ուտել : Մար . ժբ . 1 : Ընանկ է նէ շաբաթ օրը բարի գործել պէտք է : Մար . ժբ . 12 :

⁽⁶⁾ Պաշտէ քու Տէր Ըստուածդ քու բոլոր սրտէդ , ու քու բոլոր անձէդ : Ի Օրն . ժ . 12 :

պղծելը կամ ծուլութեամբ՝ կամ ինքիրմին մեղք եղած բանը կատարելով՝ և կամ մեր աշխարհային գործքերուն ու զբօսանքներուն վրայ եղած անհարկաւոր խորհուրդները, խօսքերը ու գործքերը ընելով (7) :

Հ. Ի՞նչ իրաւունքներով կը հաստատուի չորրորդ պատուիրանքը :

Պ. Չորրորդ պատուիրանքը կը հաստատուի աս իրաւունքներով՝ թէ Բնտուած մեզի ազատութիւն կուտայ որ շաբաթը վեց օր բուն մեր գործքերը գործենք (8), թէ կը հաստատէ մեզի որ եօթներորդ օրը յատկապէս իրեն

(7) Եւ կրօնք՝ երբ պիտի անցնի ամիսը, որ շահինք . ու շաբաթը՝ որ բանանք գանձերը : Եւս. Ը . 5 : Եւսանկ կրօն Տէրը . զգոյշ եղիք ձեր անձերուն ու շաբաթ օրը բեռ մի՛ վերցունէք : Եւս. ԺԷ . 21 :

(8) Վեց օր պիտի գործես : Եւս. Ը . 15 :

պաշտօնին համար է (9) , թէ ինքը
 ևս ան օրինակը ցուցուց (10) վեց օր
 դործելով ու եօթներորդ օրը իր բո-
 լոր դործքերէն հանգստանալով , և
 թէ օրհնեց անհանգստութեան օրը(1) :

Հ . Որն է հինգերորդ պատուի-
 րանքը :

Պ . Հինգերորդ պատուիրանքը աս
 է . Պատուէ՛ քու հայրդ ու մայրդ . որ
 քու օրերդ երկան ըլլան ան երկրին վը-
 րայ՝ որն որ Տէրը քու Աստուածդ կու-
 տայ քեզի :

(9) ! Ինչու որ շաբաթը Տէրօջն է : Ա՛յս
 իմ . 3 :

(10) Ինծի հետ ու Խարայէլի որդւոցը հետ
 Խմ յաւիտենական նշանս է . ինչու որ վեց
 օրուան մէջ Տէրը երկինքը ու երկիրը բաւ-
 ու եօթներորդ օրը դադարեցաւ ու հանգ-
 չեցաւ : Ա՛յն . լւ . 17 :

(1) Աստուած օրհնեց եօթներորդ օրը
 ու սրբեց զանիկայ : Ա՛յն . ք . 3 :

Հ . Ի՞նչ կը պահանջէ հինգերորդ պատուիրանքը :

Պ . Հինգերորդ պատուիրանքը կը պահանջէ ամէն մէկուն պատիւը պահել , և ամէն մէկուն վերաբերեալ սքարտաւորութիւնները գործադրել⁽²⁾ ամէն մէկուն իրենց սեպհական վիճակներուն ու վերաբերութիւններուն նայելով , անոնք թէ մեզմէ վեր⁽³⁾ թէ մեզմէ

(²) Ըմենքը պատուեցէք : Ի՞նչ . ՊԵՊ . ք . 17 : Ընանկէնէ՛ հատուցէք ձեր պարտքը ամէնուն : Հօգ . ԺԳ . 7 :

(³) Օտերերուն առջևը պիտի ելլես . ու պիտի պատուես ծերին երեսը , ու պիտի վախնաս քու Ըստուծմէդ : ՊԵՊ . ԺԺ . 32 : Որդիք՝ ձեր ծնողացը հնազանդ եղիք Տէրով , որ ա՛ն է արժանը : Օտա՛ւաներ՝ հնազանդ եղիք ձեր մարմնաւոր տէրերուն , ահով ու դողով և ձեր սրտին միամտութիւնովը՝ որպէս թէ Վրիստոսին : Ե՛՛՛Կ . զ . 1 , 5 :

խոնարհ (4) կամ թէ մեր հաւատարմ
կիցները (5) ըլլան :

Ն . Խոնհ կարգիւէ հինգերորդ պա-
տուիրանքը :

Պ . Հինգերորդ պատուիրանքը
կարգիւէ մեզի ո՛ր և իցէ մէկու մը (6) իր

(4) Խոնարհներուն հետ խոնարհեցէք
Հովհ . Ժբ . 16 : Վուրբ ալ տէրեր՝ նոյնը
ըրէք անոնց , պատիժը համբերութեամբ
ընելով , գիտցէք որ անոնց ալ ձերն ալ
Տէրը երկինքն է : Լոկէ . զ . 9 : Հայ-
րեր՝ ձեր զաւկըները մի՛ բարկացունէք ,
հապա անոնք մեծցուցէք Տէրոջը խրատու-
վը՝ ու վարժութիւնովը : Լոկէ . զ . 4 :

(5) Լոյրայրսիրութեան մէջ մէկզմէկու վը-
րայ գթած եղիք . պատուելու մէջ մէկզմէկէ
անցէք : Հովհ . Ժբ . 10 : Հնազանդ և
ղիք մէկմէկու Վրիստոսի վախովը : Լոկէ .
Ե . 21 :

(6) Հապա ամէն ատեն բարի բաներուն
ետեւն եղիք մէկմէկու հետ , ու ամէնուն
հետ : Թ (Ժ) . Ե . 15 :

վիճակին ու վերաբերու թիւններուն (7)
 յատուկ եղած յարգը և պարտաւորու
 թիւնը կամ զանց ընելը և կամ վնա
 սելը :

Ն . Ի՞նչ իրաւունքներով կը հաս
 տատուի հինգերորդ պատուիրանքը :

Պ . Նինգերորդ պատուիրանքը
 հաստատող իրաւունքը՝ մէկ խոստմունք
 մըն է երկար կենաց (8) և յաջողու

(7) Վրու աստուածներդ (գատաւորնե
 րըդ) չպիտի բամբասես, ու քու ժողովուր
 դիդ իշխանին չպիտի հայհոյես : Լււնց .
 իր . 28 : Սակայն քու մտքիդ մէջը մի' ա
 նիծեր թագաւորը : Երու . 7 . 20 : Լււ մե
 կուն պարտական մի' գտնուիք , միայն թէ
 մէկզմէկ սիրելու : Լււ . 1 . 8 : Լււ
 ամէն բանին գլուխը , որ մէկ միտքի վրայ
 ըլլաք . մէկ յօժարու թիւնով , եղբայրասէր ,
 քաղցրասիրտ , խոնարհ : Թ . 9 . 8 :

(8) Պատուէ՛ քու հայրդ ու մայրդ , (որ
 ա՛ն առջի պատուիրանքն է խոստմունքով ,)
 որ բեզի աղէկ ըլլայ , ու երկան ապրիս
 երկրի վրայ : Լււ . 2 , 3 : ՏԼ . 20 :

Թեան՝ բոլոր աս պատուիրանքը պահողներուն, և աս խոստմունքը կատարուելու է անոնց՝ որչափ որ Աստուծոյ փառացը և իրենց բուն բարութեանը կը համեմատի :

Ն . Արն է վեցերորդ պատուիրանքը :

Պ . Վեցերորդ պատուիրանքը աս է . Սպանութիւն մի՛ ըներ :

Ն . Ի՞նչ կը պահանջէ վեցերորդ պատուիրանքը :

Պ . Վեցերորդ պատուիրանքը կը պահանջէ բոլոր օրինաւոր ջանքերը բուն մեր կեանքը և ուրիշներուն կեանքը պահպանել (°) :

(°) Ազատէ անոնք որ մեռցունելու կը տանին . գնէ մահապարտը ու ստակդ մի՛ խընայեր : Այլ թէ որ բսես թէ չեմ՝ ճանչնար զինքը ու ան ալ իս չճանչնար , գիտցա՛ծ եղեր՝ որ Տէրը ամէնուն սիրտը գիտէ : Աստուծոյ . իմ . 11 , 12 : բաղդատէ Օրհնար . թ . 5 , 6 համարներուն հետ :

շ . Ի՞նչ կարգիլէ վեցերորդ պատուիրանքը :

Պ . Ա՛յցերորդ պատուիրանքը կարգիլէ բառնալ բուն մեր կեանքը⁽¹⁰⁾ կամ առանց իրաւունքի բառնալ մեր ընկերին կեանքը ⁽¹⁾ , կամ ինչ որ սասանկ վախճանի մը կը նայի :

շ . Ա՛յն է հօթներորդ պատուիրանքը :

Պ . Եօթներորդ պատուիրանքը աս է . Շ՛նութիւն մի՛ ըներ :

շ . Ի՞նչ կը պահանջէ հօթներորդ պատուիրանքը :

Պ . Եօթներորդ պատուիրանքը

⁽¹⁰⁾ Դունքու անձիդ վնաս մը մի՛ ըներ : Գարժ . Ժդ . 28 :

⁽¹⁾ Ա՛յ որ մարդու արիւն կը թափէ՝ անոր արունին փոխարէն իր արիւնը թող թափուի : Օ՛ննա . Թ . 6 : Եւ թէ որ մարդ մը մէկուն զարնէ ու մեռցունէ՝ ինքը ևս պիտի մեռնի : Գ՛ար . իդ . 17 :

կըստ հանջէ բուն մեր (²) ու մեր ընկերին (³) ողջախոհութիւնը պաշտպանել սրտով (⁴) խօսքով (⁵) և գործքով (⁶) :

(²) Չեղմէ ամէն մէկերնիդ գիտնայ իր ամանը սրբութիւնով ու պատիւով ստանալ : Իմ թ. Կ. 4 : Թէ որ մէկը Մատուծոյ տաճարը կապականէ՝ Մատուծանիկայ պիտի ապականէ . ինչու որ Մատուծոյ տաճարը սուրբ է , որ գուք էք : Իմ կր. ընթ. Գ. 17 :

(³) Աւ կցորդ մի՛ ըլլաք խաւարին անպատու զգործքերուն , հապա էվելօք յանդիմանեցէք : Ա. Կ. Ե. 11 : Բայց անոնք որ մեղք կը գործեն՝ ամէնուն առջևը չեխէ՛ , որ ուրիշներն ալ վախնան : Իմ ՏԻՏ. Ե. 20 :

(⁴) Աւ երիտասարդական ցանկութիւններէն փախի՛ր : Իմ ՏԻՏ. Բ. 22 :

(⁵) Բայց պոռնրկութիւն ու ամէն կերպ պղծութիւն՝ կամ ազահոսութիւն չըսուի՛ ալ ձեր մէջը : Ա. Կ. Ե. 3 :

(⁶) Մնանց խօսքի շահուին : . տեսնալով ձեր երկիւղած պարկեշտ վարքը : Իմ Պ. Կ. 2 :

Հ . Ի՞նչ կարգելէ եօթներորդ
սլատուիրանքը :

Պ . Եօթներորդ սլատուիրանքը կար-
գելէ բոլոր անպարկեշտ խորհուրդ-
ները ⁽⁷⁾ , խօսքերը ⁽⁸⁾ , ու գործքե-
րը ⁽⁹⁾ :

Հ . Ո՞րն է ութերորդ սլատուի-
րանքը :

Պ . Ութերորդ սլատուիրանքը աս
է . Գողութիւն մի՛ ըներ :

Հ . Ի՞նչ կը պահանջէ ութերորդ
սլատուիրանքը :

Պ . Ութերորդ սլատուիրանքը կը

(7) Ո՛վ որ կնիկ մարդու կընայի անոր
ցանկանալու համար , անիկայ իրեն սրտին
մէջն ալ շնութիւն ըրաւ անոր հետ : Սաղմ .
Է . 28 :

(8) Ի՞մէն դարշելի խօսք ձեր բերնէն թող
չելայ : Ի՛նչ . Գ . 29 :

(9) Ի՛նչ պոռնըկութիւն և ամէն կերպ
պղծութիւն՝ կամ ազահութիւն չըսուի՛ ալ
ձեր մէջը : Ի՛նչ . Է . 3 :

պահանջէ մեր ⁽¹⁰⁾ և ուրիշներուն հա-
րրատութեանը ու յաջողութեանը ⁽¹⁾
ամէն օրինաւոր ⁽²⁾ կերպով հոգ տա-
նիլ ու օգնել :

Հ . Ի՞նչ կարգիլէ ութերորդ պա-
տուիրանքը :

Պ . Ութերորդ պատուիրանքը
կարգիլէ ի՞նչ որ անիրաւութեամբ կը
խափանէ բուն մեր ⁽²⁾ կամ մեր ընկե-

⁽¹⁰⁾ Խելացութեամբ ճանչցիր քու հօ-
տիդ վիճակը . ու քու սիրտդ երա-
մակներուդ վրայ ըրէ : Մատթ . իէ . 23 :

⁽¹⁾ Մինակ անձերնուդ շահը մի՛նայիք ,
հապա ամէն մէկը ընկերինն ալ : Փիլիպ .
թ . 4 :

⁽²⁾ Ի՞մէն մարդուն աղէկ սեպած բաները
մտմբտացէք : Հատիկ . ժթ . 17 . բաղդատէ
թ Սրբն . ը . 21 համարին հետ :

⁽³⁾ Եւայց թէ որ մէկը իրեններուն՝ ու
մանաւանդ իր տնուորներուն հոգ չտանի
նէ՛ անիկայ հաւատքէն ուրացած է , ու
անհաւատներէն ալ գէշ է : Թ Տիմ . Ե . 8 :
բաղդատէ՛ Մատթ . իթ . 21 համարին հետ :

ըին (⁴) հարատութիւնը կամ յաջողու-
թիւնը :

Հ . Որն է իններորդ պատուիրանքը :

Պ . Իններորդ պատուիրանքը աս է .

Քու դրացիներդ դէմ սուտ վկայութիւն
մի՛ ըներ :

Հ . Ի՞նչ կը պահանջէ իններորդ
պատուիրանքը :

Պ . Իններորդ պատուիրանքը կը պա-
հանջէ որ ճշմարտախօսութիւնը դոր-
ժածենք և յաւաջացունենք զանիկայ
մարդոց մէջ (⁵) և բուն մեր (⁶) ու մեր

(⁴) Գրացիիդ սահմանագլուխին նշանը
տեղէն մի՛ վերցուներ : () Են . ԺԺ . 14 :
բազդատէ՛ . Վէր . գԼ . ԺԵ . 8 : Աշիռ մեծ և
կշիռ փոքր , և կրկին չափերը , երկուքն ալ
պիղծ են Տէրօջը առջևը : Մատ . Ի . 10 :

(⁵) Ամէն մէկերնիդ ճշմարտութիւն թո՛ղ
խօսի իր դրացիին հետ : Օտ . ք . 16 :

(⁶) Անանկ թո՛ղ լուսաւորէ՛ ձեր լոյսը
մարդոց առջին , որ տեսնան ձեր բարի
գործքերը ու՛ փառաւորեն ձեր Հայրը՝ որ
երկինքն է : Մատ . Ե . 16 :

ընկերին բարի անունը պաշտպանենք
(⁷) մանաւանդ վկայութիւն ընելու ա-
տեն (⁸) :

Հ . Ի՞նչ կարգիլէ իններորդ պա-
տուիրանքը :

Պ . Իններորդ պատուիրանքը կար-
գիլէ ինչ որ հակառակ է ճշմարիտ խօ-
սելուն և ինչ որ վնասակար է բուն մեր՝
(⁹) կամ մեր ընկերին (¹⁰) բարի անունին :

Հ . Ի՞նչ է տասներորդ պատուի-
րանքը :

(⁷) Մէկուն գէմ չար չխօսիլ : Տ՛ր . 7 . 2 :

(⁸) Ճշմարիտ վկան՝ սուտ չղրուցեր •
բայց սուտ վկան՝ սուտեր կըխօսի : Մ . 1 . 5 :

(⁹) Ուստի ստույթիւնը մէկ դի՛ ձգեցէք •
ճշմարտութիւն խօսեցէք ամէն մեկերնիդ
իր ընկերին հետ : Լ . 1 . 7 . 25 : Տ՛ր
նաև Յ . 1 . 5, 6 :

(¹⁰) Սուտ լուր մի՛ ընդուներ, հաւանու-
թիւն մի՛ տար անիրաւին՝ անոր հետ սուտ
վկայ ըլլալու : Լ . 1 . 7 . 1 : Տ՛ր նաև
Ս . 1 . 3 :

Պ. Տասներորդ պատուիրանքը աս է.
 Քու դրացինիդ տունին մի՛ ցանկար,
 քու դրացինիդ կնկանը՝ կամ անոր ծա-
 ուային՝ կամ անոր աղախին՝ կամ անոր
 եղին՝ կամ անոր իշուն՝ և քու դրացի-
 նիդ ամենեւին մէկ բանին մի՛ ցանկար:

Հ. Ի՞նչ կը պահանջէ տասներորդ
 պատուիրանքը:

Պ. Տասներորդ պատուիրանքը կը
 պահանջէ մեր եղած վիճակէն բոլորով
 վին զո՛հ ըլլալ ⁽¹⁾, և ուղիղ ու բա-
 լեսէր հոգիով մը մեր ընկերին ⁽²⁾ ու

(1) Բարբերնիդ արժամատէր չըլլայ.
 բաւական սեպեցէք որչափ բան որ ձեռ-
 քերնիդ կայ: Եւր. ԺԳ. 5: Սենինք կերա-
 կուր ու հանդերձ, և անով բաւականա-
 նանք: Ի՞ՏԻ. ի. 8:

(2) Խնդացողներուն հետ խնդացէ՛ք. լա-
 ցողներուն հետ լացէ՛ք: Հոով. ԺԲ. 15:
 Աէրը՝ համբերող է, կը քաղցրանայ: Ի՞
 Վորնէ, ԺԳ. 4:

անոր ամէն ունեցածներուն (3) վրայ
ուրախանալ :

Հ. Ի՞նչ կարգիլէ տասներորդ պատ-
ուիրանքը :

Պ. Տասներորդ պատուիրանքը կար-
գիլէ մեր վիճակէն բոլոր տժգոհ ըլլա-
լը (4), մեր ընկերին (5) բարիքին նա-
խանձիլը կամ վշտանալը, և բոլոր
անկարգ շարժումները կամ զգա-
ցումները անոր ունեցած մէկ բանին
վրայ (6) :

(3) Եւսեպէք և զգոյշ եղիք ամէն կերպ
ագահութենէն : Գ. 1. Ժբ. 15 :

(4) Եւ տրտունջ չընենք . ինտոր որ ա-
նոնցմէ մէկ քանին տրտունջ ըրին, ու սա-
տակիչէն կորսուեցան : Ի Կորնթ. Ժ. 10 :

(5) Եւ փուճը պարծենկոտ չըլլանք՝ մէկ-
ըզմէկ գրգռելով, ու իրարու վրայ նախան-
ձելով : Գ. 1. Ե. 26 : Մէկըմէկ մի՛ տրտու-
մեցունէք եղբայրներ : Հ. 1. Ե. 9 :

(6) Ուստի ձեր երկրաւոր անդամները
սպաննեցէ՛ք . մէկդի ձգեցէ՛ք . . . շար բանե-

Հ . Ինչաւ մարդ մը կարող է կատարելապէս Մատուծոյ առ պատուիրանքները պահելու :

Պ . Սեր Մշամ նախահօրը իշխանէն հետէ ամենեւին սոսկ մարդ մը կարող չէ այս կենացս մէջ կատարելապէս Մատուծոյ պատուիրանքները պահելու (7) , այլ ամէն օր կրկնորէ անոնք խորհրդով՝ խօսքով ու գործքով :

Հ . ()ըէնքին բոլոր մեղքերը հաւասարապէս վաճառեն :

Պ . Կան մեղքեր որ ինքնիրեննունեն և թէ զանազան պարագաներու պատճառով ուրիշ մեղքերէն (8) աւելի վատթար են Մատուծոյ առջևը :

բու ցանկութիւնը , ու ազահութիւնը՝ որ կռապաշտութիւն է : Կող . 7 . 5 :

(7) Պատճառն օր մարմնաւոր խորհուրդը Մատուծոյ դէմ թշնամութիւն է . որ Մատուծոյ օրէնքին չճնադանդիր մանաւանդ չկրնար ալ : Հատվ . ք . 7 :

(8) Ի՞նչ որ ես եկած և անոնց հետ խօ-

Հ. Լ՛մէն մեղք ի՞նչ բանի արժանի է :

Պ. Լ՛մէն մեղք արժանի է Լ՛ստուծոյ բարկութեանը ու անէծքին , թէ աս կենաց մէջ և թէ գալիքին⁽³⁾ :

Հ. Ի՞նչ կը պահանջէ Լ՛ստուած մեզմէ՞ որ մեր մեղացը համար մեզի արժանի եղած իր բարկութենէն ու անէծքէն կարենանք ազատիլ :

Պ. Մեղաց համար մեզի արժանի ե

1

սած չըլլայի , անոնք մեղք մը չէին ունեւար . բայց ալ հիմայ իրենց մեղքերնուն պատճառանք մը չունին : (3օԼ . ԺԵ . 22 :
Ղաուն իմ վրաս մէկ իշխանութիւն մըն ալ չունէիր , թէ որ քեզի վերէն տրուած չըլլար . անոր համար՝ ա՛ն որ իս քեզի մատնեց , անոր մեղքը ալ մեծ է : (3օԼ . ԺԺ . 11 :

(3) Ով որ բոլոր օրէնքը պահէ , ու մէկ բանով մը ծռի , անիկայ բոլոր օրէնքներուն դէմ գործող կը լլայ : (3աԿ . Բ . 10 : Լ՛նիծեալ ըլլայ ամէն մարդ՝ որ օրէնքին գիրքը գրուածներուն ամէնուն մէջ չկենար բոլորը կատարելու : Ղաալ . Գ . 10 : Մեղաց հատուցումը մահ է : Լաւով . Գ . 23 :

ղած Մտուծոյ բարկութենէն ու ա-
նէծքէն աղատելու համար, Մտուած
կրպահանջէ (10) մեզմէ, Հաւատք Յի-
սուս Քրիստոսի վրայ, անկեղծ Մ-
պաշխարութիւն, և յօժարամիտ գոր-
ծածութիւն ան առէն արտաքին միջոյ-
ներուն՝ որոնցմով որ Քրիստոս կը հա-

(10) Հիսուս . . . կը քարոզէր՝ ու կըսէր . . .
Մպաշխարեցէք՝ և աւետարանին հաւատա-
ցէք: Մարկ. 16: 15: Թէ որ չապաշխարեք
նէ՛ ամէնքդ ալ անանկ պիտի կորսուիք:
Մարկ. 16: 3: Մն որ Արդիին կը հաւտայ՝
յաւիտենական կեանքը կընդունի, և սն
որ Արդիին չհնազանդիր՝ անիկայ կեանք
չտեսնար. հապա Մտուծոյ բարկութիւնը
անոր վրայ կըմնայ: Հովհ. 7: 36: Մպաշ-
խարեցէք՝ ու ձեզմէ ամէն մէկերնիդ թող
մկրտուի Տէր Հիսուս Քրիստոսի անունո-
վը՝ մեղաց թողութեան համար: Մարկ. 16:
38: Բաղդատէ գլ. 16: 31 համարին
հետ:

ղորդէ մարդոց իր քառութեան շը նորհքները (1) :

Է. Ի՞նչ է Յիսուս Վրիստոսի վրայ եղած Հաւատքը :

Պ. Յիսուս Վրիստոսի վրայ եղած Հաւատքը փրկարար շնորհք մըն է (2) , որով զինքը կընդունենք ու միայն իրեն կապաւինինք մեր փրկութեանը համար (3) , ինտոր որ ինքը մատուցած է

(1) Եւհով ու գողով անձերնուդ փրկութիւնը գործեցէք , ինչու որ Եստուած է՝ որ ձեր մէջը կը յաջողէ կամելը ու ընելը իր հաճութեանը համար : Փիլիպ. ք. 12, 13 :

(2) Սենք չէ՛ թէ երկու միտքով կորսուելու վրայ ենք , հապա հաւատքով մեր հոգիներուն փրկուելուն : Եբր. Ժ. 39 : Բաղդաստէ Յովն. ի. 31 համարին հետ : Տէր Յիսուս Վրիստոսի շնորհքովը կը հաւատանք որ կրփրկուինք : Վորձ. ԺԵ. 11 : Տէր Դանիէլ Յովն. ւ. 12 :

(3) Չէ՛ թէ օրէնքէ եղած իմ արդարութիւնս ունենամ , հապա Վրիստոսի հաւատքովը ան արդարութիւնը՝ որ Եստուծմէն է : Փիլիպ. ք. 9 :

մեզի Մատարանին մէջ :

2. Ի՞նչ է անկեղծ Մպաշխարութիւնը :

Պ. Ինկեղծ Մպաշխարութիւնը փրկարար շնորհք մըն է ⁽¹⁾, որով մեղաւոր մը իր մեղքը ճշմարտապէս զգալէն ⁽²⁾ և Վրիստոսով Մատուծոյ ողորմութեանը խելահաս ըլլալէն զատ, զգալով ու իր մեղքը ատելով ⁽³⁾ Մա-

⁽¹⁾ Ինչպէս նաեւ Մատուած հեթանոսներուն ալ կենաց համար ապաշխարութիւն տուաւ: Վորժ. ԺԿ. 18: Մատուծոյ ուզածին պէս եղած արտմութիւնը՝ ապաշխարութիւն մը կրգործէ փրկութեան համար. Քրիստոս. Է. 10:

⁽²⁾ Եւ աս որ լսեցին՝ իրենց սիրտերնուն մէջը զարնուեցան, և ըսին Պետրոսին ու մէկալ առաքեալներուն, Սարգիկ եղբայրներ՝ ի՞նչ ընենք: Վորժ. Թ. 37: Վեզի, մինակ քեզի մեղանչեցի, ու քու աչքերուդ առջևը չարութիւն ըրի: Սող. ԺԿ. 4:

⁽³⁾ Եւ պիտի յիշէք ձեր չար ճամբաները և չար գործքերը. և ձեր անզգամու-

տուժոյ կըդառնայ (7) նոր հնազանդու-
թեան հետևելու կատարեալ զիտաւո-
րութիւն ունենալով ու ջանք ընե-
լով (8) :

Ն . Ի՞նչ են արտաքին ու սովորա-
կան միջոցները , որով Վրիստոս կը
հաղորդէ իր քաւութեան շնորհքները :

Պ . Երտաքին ու սովորական միջոց-
ները , որով Վրիստոս կը հաղորդէ իր
քաւութեան շնորհքները , իր կարգադ-
րութիւններն են՝ մանաւանդ Խօսքը (9)

Թեանը ու զազրութեանը համար ինքզինք-
նուդ պիտի զզուիք : Եղև. ԼԿ. 31 :

(7) Վնենք ճամբաներնիս ու փորձենք,
և դառնանք Տէրոջը : Ուրբ. 7. 40 :

(8) Որ մենք Եստուծոյ ծառայենք հո-
գիին նորոգուելովը , և չէ թէ հին գրուած-
քովը : Երուս. Է. 6 :

(9) Եապա աս՝ այնչափ բան գրուեցաւ ,
որ հաւտաք թէ Հիսուսը՝ Վրիստոս է
Եստուծոյ Արդին . և որ հաւտալով յաւի-
տենական կեանքը ընդունիք անոր անունո-

Խորհուրդները ⁽¹⁰⁾ ու Մոթթը ⁽¹⁾ որոնք ամէնը փրկութեան համար կրներգործեն ընտրուածներուն մէջը ⁽²⁾ :

Հ . Մտուածոյ Խօսքը ի՞նչպէս ներգործութիւն կրնէ փրկութեան համար :

Պ . Սուրբ Հոգին Մտուածոյ Խօսքը կարդալը և մանաւանդ զանհիկայ քարո-

վը : Յօհ. ի. 31 : 'Խորէն ծնած ըլլալով . . . Մտուածոյ կենդանի ու յաւիտենական խօսքովը : Ի՞նչ . Ի՞նչ . Ի՞նչ . 23 :

⁽¹⁰⁾ Քանի անգամ որ աս հացը ուտէք , ու աս գաւաթը խմէք , Տէրօջը մահը պատմեցէք , մինչև որ ինքը գայ : Ի՞նչ . Ի՞նչ . Ի՞նչ . 26 :

⁽¹⁾ Ինչ բանի համար որ աղօթք ընելով կրխնդրէք՝ և կրհաւատաք թէ պիտի առնէք , պիտի ըլլայ թեղի : Ի՞նչ . Ի՞նչ . 24 :

⁽²⁾ Սմանք սրտանց ընդունելով անոր խօսքերը՝ մկրտուեցան . և ան օրը իրեք հազար հոգիի չափ էլեւիցան : Այլ միշտ առաքելոց վարդապետութեանը ետեէ էին , և ընկերութեանը , ու հաց կտրելուն , և աղօթքին : Ի՞նչ . Ի՞նչ . 41 , 42 :

զեւր մէկ ազդու միջոց մը կրնէ մեղա-
ւորները արթընցունելու և դարձունե-
լու ⁽³⁾ ; ու զանոնք սրբութեամբ և
մտիթարութեամբ յառաջացունելու ⁽⁴⁾
դէպի փրկութեան հաւատքով ⁽⁵⁾ :

Հ. Ինչպէս կարդալու և լսելու ենք
Մատուցոյ Խօսքը , որ փրկութեան
տանի :

⁽³⁾ Տէրօջր օրէնքը՝ կատարեալ է՝ հոգին
կրնորոգէ : Սող. ԺԺ. 7 : Մատուած հա-
ճեցաւ քարոզութեան յիմարութիւնովը
հաւատացեալները սարեցունել : Ին Կրն. Ի.
Ին. 21 : Տէս նուն Գործ. ք. 37 :

⁽⁴⁾ Եւ հիմայ ձեզ Մատուցոյ կը յանձ-
նեմ և անոր շնորհաց Խօսքին , որ ան կա-
րող է շինել՝ ու բոլոր սուրբերուն հետը
ձեզի ժառանգութիւն տալ : Գործ. ք. 32 :
Տէս նուն Հառ. ԺԵ. 4 :

⁽⁵⁾ Ինչու որ գուն մանկութենէ սուրբ
Գիրքերը գիտես , որոնք կրնան իմաստուն
ընել քեզ փրկուելու՝ Հիսուս Քրիստոս
տի վրայ եղած հաւատքովը : ք Տէ. ք. 15 :

Պ . Ըստուծոյ խօսքը մեզ փրկու-
թեան տանելու համար մենք պարտինք
միտք դնել անոր ժրութեամբ (6), նա-
խապատրաստութիւնով (7) ու աղօթ-
քով (8), պաշտինք հաւատքով ու սի-
րով (9) ընդունել զանիկայ, մեր սիր-

(6) Ըմէն օր գիրքերը կը քննէին թէ՛ աս
բաները ասանկ է մի : Վարժ . ԺԷ . 11 :

(7) Ընդոր աղտոտութիւնները ու չարու-
թիւններուն էլեւցութիւնները մէկգի ձգելով՝
հեղութիւնով ընդունեցէք ան ձեր մէջը
ցանուած խօսքը, որ կրնայ ձեր հոգիները
փրկել : Յով . ան . 21 :

(8) Ըսոց իմ աչուրներս, որ քու օրէնք-
ներէդ հրաշքներ տեսնամ : Սող . ՃԺԺ . 18 :

(9) Ըսոյց անոնց շահ մը չըրաւ ան խօսքը
լսելը՝ որ հաւատքին հնազանդելու չկա-
կողցան : ԼԷԿ . Գ . 2 : Ընոնք ճշմարտու-
թեան սէրը չընդունեցին որ ապրին : Թ
ԹԷ . Թ . 10 :

տե բուն մէջ պահել ⁽¹⁰⁾ և մեր վարքին
մէջ գործածել ⁽¹⁾ :

՝. Խորհուրդները ի՞նչպէս փրկու-
թեան միջոցները կըլլան :

Պ. Խորհուրդները փրկութեան մի-
ջոցները կըլլան , չէ՛ թէ անոնց մէջը՞
կամ անոնց գործածողին մէջը ⁽²⁾ եղած
առաքինութենէն , հապա միայն Վ.ը
բխատուի օրհնութիւնովը և Սուրբ
՝ոգիին ⁽³⁾ մարդոց մէջ գործելովը ու-

⁽¹⁰⁾ Այլ աս խօսքերս ձեր՝ սիրտերուն մէ-
ջը և ձեր հոգիներուն մէջը դրէք : Թ () Եբն .
Ժա . 18 :

⁽¹⁾ Ըն խօսքը ընողներ եղիք , և չէ՛ թէ
միայն ըսողներ սեպուիք անձեցնուդ մէջ :
Յալ . ա . 22 , 25 :

⁽²⁾ Այն անկողը մէկ բան մըն է , ու
ո՛չ ան ջուր տուողը , հապա Ըստուած որ
աճեցուց : ա Աբն . 7 . 7 :

⁽³⁾ ՝ոգին է կենդանի բժողը , մարմինը
չսո՛ւ մը ջաներ : Յալ . 7 . 64 :

ընծք որ հաւատքով ⁽⁴⁾ կընդունին առ
խորհուրդները :

Ն . Ի՞նչ է խորհուրդը :

Պ . Խորհուրդը սուրբ կարգադրու-
թիւն մըն է Վ. քիստոսէն հաստատու-
ած ⁽⁵⁾ որուն մէջ զգալի նշաններով
Վ. քիստոս ու նոր ուխտին շնորհքները
կընշանակուին, կըկնքուին, ու կընծայ-
ուին հաւատացեալներուն ⁽⁶⁾ :

⁽⁴⁾ Ի՞նչ որ հաւատաց ու մկրտուի՝ պիտի
փրկուի : Ս՝ աբղ . ԺԿ . 16 :

⁽⁵⁾ Եւ դեռ որ անոնք կուտէին, Յիսուս
հաց առաւ՝ օրհնեց ու կտրեց, և տուաւ
աշակերտներուն՝ ու ըսաւ, Ի՞նչք կերէ՞ք՝
աս է իմ մարմինս : Ս՝ աբղ . ԻԿ . 26 : Տ՝ ա
նաև Ս՝ աբղ . ԻԸ . 19 :

⁽⁶⁾ Ի՞նչ որ իմ մարմինս կուտէ՝ և իմ տ-
րինս կըխըմէ, անիկայ իմ ներսիդիս կը
քնակի՝ ու ես անոր ներսիդին : Ինչպէս որ
կենդանի շարքը իս խրկեց, ես ալ կենդանի
եմ շօրս ձեռքովը՝ և ան որ իս կուտէ ինքն
ալ իմ ձեռքովս կենդանի կըմնայ : Յ՝ աբղ .
ԿԷ . 57, 58 : Վաղդատէ շ՝ աբղ . Դ . 11
համարին հետ :

Հ . Որո՞նք են Վոր կտակարանին խորհուրդները :

Պ . Վոր կտակարանին խորհուրդներն են Սկրտութիւնը (7) ու Տէրոջը Ինթրիքը (8) :

Հ . Ի՞նչ է մկրտութիւնը :

(7) Վացէք ասկէ ետեւ բոլոր հեթանոսները աշակերտեցէք . մկրտեցէք անոնք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ : Մատթ. իբր՝ 19 :

(8) Ինչու որ ես Տէրոջմէն ընդունեցի անբանը , որ ձեզի ալ աւանդեցի՝ թէ Տէր Յիսուսը իր մատնուած գիշերը հացը առաւ . գոհացաւ՝ կտրեց ու ըսաւ , Ընէք՝ ու կերէք , աս է իմ մարմինս՝ որ ձեզի համար կը բաշխի . ասիկայ ըրէք իս յիշելու համար : Ընանկ ալ գաւաթը ընթրիքէն ետեւ առաւ՝ ու ըսաւ . Ըս գաւաթն է նոր ուխտ իմ արիւնովս . ասիկայ ըրէք քանի հեղ որ խմելու ըլլաք՝ իս յիշելու համար : Վանի անգամ որ՝ աս հացը ուտէք , ու գաւաթը խմէք , Տէրոջը մահը պատմեցէք , մինչև որ ինքը գայ : Թ Վորնի՛ , ԺԹ , 23—26 :

Պ . Սկրտութիւնը խորհուրդ մըն է՝ որուն մէջ ջրով լուացումը յանուն շօր և Որդւոյ և շողոյն սրբոյ , կը նշանակէ ու կը կնքէ մեր Վրիստոսի վրայ պատուաստիլը ⁽⁹⁾ և շնորհաց ուխտին պարզեներուն մեր հաղորդ բլլալը ու Տէրոջը ծառայելու մեր ուխտ ընելը ⁽¹⁰⁾ :

Շ . Որո՞նք մատակարարուելու է մը կըրտութիւնը :

Պ . Սկրտութիւնը անոնցմէ մէկուն մատակարարուելու չէ՝ որոնք եկեղեցիէն

⁽⁹⁾ Գուք ամէնքդ որ Վրիստոսով մը կըրտուեցաք , Վրիստոսը վրանիդ հագաք : Գալ . Գ . 27 : Սենք որ Հիսուս Վրիստոսով մկրուեցանք , անոր մահովը մկրուեցանք : Լուով . Գ . 3 :

⁽¹⁰⁾ Ընոր հետ թաղուեցանք մկրտութիւնով մահուան համար , որ ինչպէս Վրիստոս շօրը փառքովը յարութիւն առաւ մեռելներէն , անանկ մենք ալ կենաց նորոգութեան մէջ պտըտինք : Լուով . Գ . 4 :

դուրս են , մինչև որ անոնք իրենց
Քրիստոսի վրայ ունեցած հաւատքը ⁽¹⁾
չխոստովանին , և անոր եղած հնազան-
դութիւննին չցուցնեն . բայց եկեղե-
ցիին անդամներուն տղաքը ⁽²⁾ մկրտ-
տուելու են :

Հ . Ի՞նչ է Տէրոջը Ընթրիքը :

⁽¹⁾ Ոմանք սրտանց ընդունելով անոր
խօսքերը՝ մկրտուեցան : Վարժ . ք . 41 : Թե
որ քու բոլոր սրտովդ կը հաւտաս նէ , կա-
րելի է : Վարժ . ք . 37 :

⁽²⁾ Այլ իմ ուխտս՝ քու մէջոյդ և իմ մէջս ,
ու քեզմէ ետքը եկող իրենց ցեղերովը ազ-
գերուն մէջը , յաւիտենական ուխտ մը ըլ-
լալու համար պիտի հաստատեմ , որ քու
Լստուածդ և քեզմէ ետքը եկող քու ազգիդ
Լստուածը ըլլամ : Օննբ . Ժէ . 7 : Ինչու
որ աս խոստմունքը ձեզի է՝ ու ձեր որդւո-
ցը : Վարժ . ք . 39 : Տէս նաեւ Վոհ . Ժք .
16 : Ար անոր սիրտը Տէրը բացաւ՝ Պօղո-
սին ըսածներուն խելքը պառկելու և ինքը
և իր տունը մկրտուեցաւ : Վարժ . Ժզ . 14 :
Այլ շուտ մը մկրտուեցաւ ինքը (բանտապե-
տը) ու բոլոր իրենները : Վարժ . Ժզ . 33 :

Պ. Տէրոջը Նխթրիքը խորհուրդ մըն է, որուն մէջ հացը ու գինին ⁽³⁾ տալով և ընդունելով, Վրխատոսի սահմանաճին պէս՝ անոր մահը կընշանակուի ⁽⁴⁾, և արժանաւոր ընդունողները չէ թէ մարմնաւոր ու նիւթական կերպով ⁽⁵⁾, հասլա հաւատքով անոր մար-

⁽³⁾ Եւ առաւ հացը՝ գոհացաւ, կտրեց և տուաւ անոնց՝ ու ըսաւ. Ես է իմ մարմինս, որ շատուորներուն համար կըտրուի, ստիկայ իս յիշելու համար ըրէք: Ես անկ ալ գաւաթը առաւ ընթրիքէն ետև՝ և ըսաւ. Ես գաւաթը նոր ուխտ է իմ արիւնովս, որ ձեզի համար կըթափուի: Պ. Կ. իբ. 19, 20:

⁽⁴⁾ Վանի անգամ որ սոս հացը ուտէք, ու սոս գաւաթը խմէք, Տէրոջը մահը պատմեցէք, մինչև որ ինքը գայ: Ին Կրնի. ժա. 26:

⁽⁵⁾ Յիսուս... ըսաւ անոնց. Ետիկայ ձեզ կը գայ թակղեցընէ՞ (մարմնոյ և արեան վերայով իր խօսքը) ... Հոգին է կենդանի ընողը, մարմինը շահ մը չունէր, ան խօսքը որ ես ձեզի խօսեցայ՝ հոգի ու կեանք է: Յոհ. 7. 62—64:

մինին ու արիւնին հաղորդ կըլլան՝ անոր
բոլոր պարզեաներովը , ու ասանկ՝ հո-
գևորապէս կըսնանին ու շնորհքով
կաճին (6) :

Ը . Ի՞նչ կըպահանջուի Տէրոջը
Բնթրիքը արժանապէս ընդունող
ներէն :

Պ . Ի՞նչանցմէ՛ որ Տէրոջը Բնթրիքին
արժանապէս հաղորդ ըլլալ կուզեն , կը
պահանջուի որ քննեն (7) իրենց անձե-
րը Տէրոջը մարմինը որոշելու (8) է-

(6) Ի՞նչ որ ինծի կուգայ , չանօթենար
և ան որ ինծի կըհաւտայ չծարանար :
Յովն . Գ . 35 :

(7) Ի՞նչ փորձէ մարդ իր անձը՝ ու ետ-
քը տն հացէն թող ուտէ , և ան գաւաթէն
խրմէ : Ի՞նչ կըրնի . ԺԹ . 23 :

(8) Ի՞նչ որ անարժանութեամբ կուտէ ու
կըխրմէ , իր անձին դաւապարտութիւնը
կուտէ ու կըխրմէ , ինչու որ Տէրոջը մար-
մինը չորոշեր : Ի՞նչ կըրնի . ԺԹ . 29 :

րենց գիտութեանը վրայով՝ յանով սնունդ առնելու իրենց հաւատքին վըրայով ⁽⁹⁾ , իրենց ապաշխարութեանը՝ իրենց սիրոյն՝ և իրենց նոր հնազանդութեանը վրայով ⁽¹⁰⁾ , որ չըլլայ թէ անարժանապէս մօտենալով՝ իրենց անձերուն դատապարտութիւնը ⁽¹⁾ ուտեն ու խմին :

Հ . Ի՞նչ է Մղոթքը :

Պ . Մղոթքը՝ մեր փափաքները Մ.

⁽⁹⁾ Փորձեցէք ձեր անձը՝ թէ ան հաւատքին մէջն էք մի՞ : Թ՝ Արն՛ն . ԺԳ . 5 .

⁽¹⁰⁾ Մսկէ ետև տօն կատարենք , չէ՛ թէ հին խմորով , և չէ՛ թէ չարութեան ու անղգամութեան խմորովը հապա հաւատարմութեան ու ճշմարտութեան չխմորած հացովը : Թ՝ Արն՛ն . Ե . 8 : Բաղդատէ նաև Թ՝ Յ . 14 . Գ . 8 :

⁽¹⁾ Այժմէ ինքզինքնիս քննելու ըլլայինք չէինք դատապարտուեր : Թ՝ Արն՛ն . ԺԹ . 31 : Բաղդատէ , 27 , 29 , համարներուն հետ :

տուժոյ մատուցանելն է իր կամքին ⁽²⁾ համեմատ եղած բաներուն համար՝ Վրխատուի անունովը ⁽³⁾ , մեր մեղքերուն խոստովանելովը ⁽⁴⁾ , և իր ողորմութեանցը շնորհակալ ըլլալովը ⁽⁵⁾ :

Ն . Ըստուած մեր աղօթք ընելուն համար ի՞նչ կանոն տուաւ մեզի :

Պ . Ի ոլոր Սուրբ Վիրքը աղօթք ընելուն կերպը կը սորվեցունէ մեզի , ⁽⁶⁾

⁽²⁾ Ինչ որ խնդրելու ըլլանք իր կամքին պէս՝ կը լսէ մեզի : Թ՛Վ. Ե. 14 :

⁽³⁾ Իմ անունովս ինչ որ ուզէք նէ իմ շօրմէս՝ կուտայ ձեզի : Յ՛ճ. ԺԴ. 23 :

⁽⁴⁾ Տէր Ըստուծոյս աղաչեցի և խոստովանեցայ : Վան . Թ . 4 :

⁽⁵⁾ Ըմէն աղօթքով ու խնդրուածքով՝ գոհութիւնով , ձեր խնդրուածքը Ըստուծոյ յայտնի ըլլայ : Փ՛ՆԷՊ . Դ . 6 :

⁽⁶⁾ Թէ որ դուք իմ մէջս կենաք՝ և իմ խօսքերս ալ ձեր մէջը կենան , ինչ որ կուզէք խնդրեցէք՝ ու պիտի ըլլայ ձեզի : Յ՛ճ . ԺԵ . 7 : Տէս նսեւ Թ՛Վ . Ե . 14 :

բայց աղօթք ընելու մասնաւոր օրինակը
ան աղօթքն է, որն որ Վրիստոս իր
աշակերտներուն սորվեցուց, որ հասա-
րակօրէն կը կոչուի Տէրունական աղօթք⁽⁷⁾:

Հ. Ի՞նչ կը սորվեցունէ մեզի Տէ-
րունական աղօթքին յաւաջաբանու-
թիւնը:

Պ. Տէրունական աղօթքին յաւա-
ջաբանութիւնը՝ որ է Հ.Յ.Յ.Ր. ՄԵՐ ՈՐ
ՅԵՐԱՍԻՄ ԵՍ ԵՍ կը սորվեցունէ մեզի Մ-
տուծոյ մօտենալ բոլոր սուրբ յար-
գութիւնով ու վստահութիւնով⁽⁸⁾ որ-
պէս զաւակներ իրենց հօրը⁽⁹⁾, որ

(7) Ուստի ասանկ աղօթք ըրէք դուք,
ով Հայր մեր՝ որ երկինքն ես, և այլն:
Ստր. 10, 9:

(8) Որ անով մենք ալ համարձակութիւն ու-
քովը մօտենալ ունիմք յուսով՝ իրեն հաւ-
տալով: Եփ. 12: Ըն իրմէն վախցող-
ներուն կամքը կրնէ: Ստր. 19:

(9) Որդեգիր ըլլալու հոգին առիք, որ
անով կը կանչեմք Վրբայ՝ Հայր: Ստր.
15:

ան ամէն բանի մէջ՝ որ անով ինքզինքը
կրճանչցունէ . և որ ինքը կարգադրէ
ամէն բաները բուն իր փառքին հա-
մար ⁽⁴⁾ :

Հ . Ի՞նչ բանի համար կաղօթենք
երկրորդ խնդրուածքով :

Պ . Երկրորդ խնդրուածքով՝ որ է
ԵՎԵՍՅԷՆՆԵՐԻՆԵՅՈՒԹԻՒՆ ՔՈՒՆ ,
կաղօթենք որ Սատանային թագաւո-
րութիւնը կործանի , ⁽⁵⁾ և որ շնորհաց

նրդ : Սաղմ . ծմ . 15 : Շնորհակալ ըլլան
քեզի ժողովուրդները՝ ո՛վ Մատուած , շնոր-
հակալ ըլլան քեզի ամէն ժողովուրդները :
Սաղմ . կէ . 3 :

⁽⁴⁾ Հայր՝ փառաւորէ քու անունդ :
Յովն . ժբ . 28 : Ինչու որ ամէն բաները
անկէց՝ ու անով , և անոր համար են :
Հաղմ . ժմ . 36 :

⁽⁵⁾ Թող ելէ Մատուած՝ անոր թշնա-
միները թող ցրուին , ու ինքը ատողները
իր երեսէն թող փախչին : Սաղմ . կը . 1 :

Թագաւորութիւնը տարածուի ⁽⁶⁾ , մենք ⁽⁷⁾ և ուրիշները ⁽⁸⁾ անոր տակը մտնանք հսկատակինք՝ ու անոր մէջը սլահուինք, և որ փառաց Թագաւորութիւնը շուտով դայ ⁽⁹⁾ :

Հ. Ի՞նչ բանի համար կաղօթենք երրորդ խնդրուածքով :

⁽⁶⁾ Այլ անոր (Տէրօջը) հանգստութիւն մի տաք, մինչև որ հաստատէ՝ և մինչև որ Արուսաղէմը երկրի վրայ գովութիւն մը ընէ : Ասոց . կթ. 7 :

⁽⁷⁾ Տէր՝ իս միտքդ բե՛ր, երբոր քու Թագաւորութիւնովդ կուգաս : Ղուկ. իմ. 42 :
() գնէ ինծի որ ապրիմ՝, ու ամէն ժամանակ քու օրէնքներուդ մտիկ ընեմ : Սոզ. ճժԹ. 117 :

⁽⁸⁾ Աղբայրներ՝ իմ սրտիս փափաքը ու աղօթքը առ Աստուած անոնց փրկուելուն համար է : Հոգ. 7. 1 : Տէր նաև աս թե՛ս . Ե. 23 :

⁽⁹⁾ Ան որ աս բաները վկայեց՝ ըսաւ , Շուտով կուգամ ես . ամէն : Ակոր Տէր Յիսուս Քրիստոս : Յոյս. իթ. 20 :

Պ . Երբորդ խնդրուածքով՝ որ է
ԵՂԻՅԻՆ ԿԵՄԻՔ ԲՈՌՐՊԷՍ ՅԵՐ-
ԿԻՆՍ ԵՒ ՅԵՐԱՐԻ : Կաղօթենք որ
Լստուած իր շնորհքովը կարող ու կա-
մեցող ընէ մեզ , գիտնալու՝ հնազան-
դելու՝ և հպատակելու իր կամքին ա-
մէն բաներու մէջ ⁽¹⁰⁾ , ինչպէս որ հը-
րեշտակները կընեն երկնից մէջ :

Հ . Ի՞նչ բանի համար կաղօթենք
չորրորդ խնդրուածքով :

Պ . Չորրորդ խնդրուածքով՝ որ է
Օ՛՜ՆՅ ՄԵՐ ՆԵՆԵՊԵՕՈՐԻ ՏՈՒՐ
ՄԵՕՆՅՍՕՐ , կաղօթենք որ Լստու-
ծոյ ճրի պարզւէն՝ աս անցաւոր
կենաց բարի բաներուն բաւական բա-

(10) Լստաճնորդէ ինծի քու պատուիրանք-
ներուդ շաւիղին մէջ : Սաղմ . ճԺԺ . 35 :
Տէրոջը կամքը թող ըլլայ : Վարժ . իմ .
14 : Ար երկրի վրայ ճամբադ , ամէն ազգե-
րուն մէջ քու փրկութիւնդ ճանչցուի :
Սաղմ . կէ . 2 :

Ժիւնը ընդունենք ⁽¹⁾ , ու իր օրհնու-
թիւնը անոնցմով վայելենք ⁽²⁾ :

Հ . Ի՞նչ բանի համար կաղօթենք
հինգերորդ խնդրուածքով :

Պ . Հինգերորդ խնդրուածքով՝ որ է
ԵՒ ԹՈՂ ՄԵՕ ՕՊԵՐՏԻՍ ՄԵՐ՝
ՈՐՊԷՍ ԵՒ ՄԵՔ ԹՈՂՈՒՄՔ ՄԵՐՈՅ
ՊԵՐՏԵՊԵՆԵՅ , կաղօթենք որ ՄՍ
տուած Քրիստոսի համար ⁽³⁾ առատօ-
րէն ներէ մեր մեղքերը ⁽⁴⁾ . որն որ իրմէն

⁽¹⁾ Մշքատութիւն կամ հարստութիւն
մի՛ տար ինձի , ինձի յարմար եղած կերա-
կուրով կերակրէ զիս : Մատի . Ը . 8 :

⁽²⁾ Հարստութիւն տուողը՝ Մտուծոյ
օրհնութիւնն է . և ան արամութիւն չա-
ւելցընէր անոր վրայ : Մատի . Ժ . 22 :

⁽³⁾ Որ անով փրկութիւն ունինք մենք իր
արիւնին միջնորդութիւնովը , մեր մեղքին
թողութիւն՝ իր շնորհքին մեծութեանը չա-
փովը : Եփե . ա . 7 :

⁽⁴⁾ Ով Մտուած , քու ողորմութեանդ
չափովը ողորմէ ինձի , քու շատ գթու-
թեանդ չափովը արէ իմ անօրէնութիւնս :
Սող . ծա . 1 : Տեա նաև Ովե . ԺԴ . 2 :

խնդրելու աւելի քաջալերուածիւն ու
նինք, վասն զի մենք ալ իր շնորհքովը
կարողացած՝ սրտանց ուրիշներուն կը
ներենք (5) :

Ք. Ի՞նչ բանի համար կաղօթենք
վեցերորդ խնդրուածքով :

Պ. Վեցերորդ խնդրուածքով՝ որ է
Ն Ի Մ Ի՝ Տ Ե Ն Ի Բ՝ Օ Մ Ե Օ՝ Ի Փ Ո Ր Չ Ո Ւ
Թ Ի Ի՝ Ն Ե Յ Լ Փ Բ Կ Ե Ե Օ Մ Ե Օ՝ Ի Չ Ե Ր Ի՝
կաղօթենք որ Մատուած մեզ կամ փոր
ձուէլէն պահէ (6) , կամ զօրացունէ ու
ազատէ մեզ երբոր կը փորձուինք (7) :

(5) Թէ որ դուք ներէք մարդոց իրենց
յանցանքները , ձեր երկնաւոր Հայրն ալ
ձեզի կը ներէ : Սաղմ. , զ. 14 : Ժ՛. 35 :

(6) Մտածուն կեցիք և աղօթք ըրէք՝ որ
փորձութեան մէջ չի յնար : Սաղմ. , ի՞. 41 :


(7) Մբարտաւան մեղքերէն ալ պահէ
քու ծառագ. թող ինծի չտիրեն : Սաղմ. ԺԹ. 13 :
Իմ գնացքներս հաստատէ քու խօս-
քիդ մէջը , ու բնաւ անօրէնութիւն չտիրէ
ինծի : Սաղմ. ճԺԹ. 133 :

2. Ի՞նչ կըսորվէցունէ մեզի Տէրու
նական աղօթքին վերջաբանութիւնը :

Պ. Տէրունական աղօթքին վերջա
բանութիւնը՝ որ է ՕՒ ԲՈՒ ԵՄ ԲԵ-
ՅՈՒԹԻՒՆ, ԵՒ ՕՕՐՈՒԹԻՒՆ ԵՒ
ՓԵԹԲ, ՅԵՒՏԵՆՍ ՅԵՒՏԵՆՆԻՅ,
ԵՄԻՆ, կըսորվէցունէ մեզի Աստուծմէ
միայն ⁽⁸⁾ ունենալ մեր քաջալիրու
թիւնը աղօթքի մէջ, և մեր աղօթքնե
րուն մէջ զինքը օրհնել իրեն մատու
ցանելով տէրութիւնը, զօրութիւնը
ու փառքը. ⁽⁹⁾ և մեր լսուելու փափա

⁽⁸⁾ Չէ՛ թէ մեր արգարութեանը համար
մեր աղաչանքները կըմատուցանենք քեզի,
հապա քու՛ մեծ ողորմութեանդ համար :
Պան. թ. 18 :

⁽⁹⁾ Եւ Պաւիթ բոլոր ժողովուրդին աչ
քին առջևը օրհնեց Տէրը, և ըսաւ Պաւիթ,
Ո՛վ դուն մեր հօրը Իսրայէլին Տէր Աստ
ուածը, յաւիտեանս յաւիտենից օրհնեալ
ես, ո՛վ Տէր մեծութիւն և զօրութիւն և
փառք և յազմութիւն և մեծվայելչութիւն
քեզի սեփական է, ինչու որ բոլոր երկին-



քին ու վստահութեանը վկայութիւն
ընելու համար կըսենք, Մձէն ⁽¹⁰⁾ :

քը ու գետինը եղածը քուկդ է. թագաւո-
րութիւնը քուկդ է, ո՞վ Տէր, և ամէնուն
վրայ դուն գլուխ բարձրացար : Ի՞նչ Նոյ .
ի՞՞թ . 10, 11 :

(10) Մձէն ժողովուրդ թող ըսէ՛ Մձէն :
Թող՛ , ճի՛շ . 48 :



